



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

3527

№ 15

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն

ԵՒ

Մ Ա Կ Ե Դ Ո Ն Ի Ա

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՑՈՅՑ

ԿԱՅԱՑԱԾ ՊԱՐԻՋի ՄԵՋ, 15 ՓԵՏՐԻԱՐԻ 1903 Թ.

Ճ Ա Ռ Ա Խ Օ Ս Ն Ե Ր

Պ Պ. տ՛րտուրնէլ տը Կօնստան, Իընի Կօշէն,  
Քրանսիս տը Պրէսամսէ, Ժան Փօնէս,  
Պօլ Լըոս, Լոուս Բօլիէօ:

Հայ Յեղ. Դաշնակցութեան տպարան

Ժ Ը Ն Ե Վ

1903

9(47.925)

Z-24

9(47.925)

Հ-24

№ 15

# Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն

ԵՒ

## Մ Ա Կ Ե Դ Ո Ն Ի Ա

ՀՐԸՊԱՐԱԿԱԿԸՆ ՅՈՅՑ

ԿԱՅԱՑԱԾ ՊԱՐԻՋՈՒՄ, 15 ՓԵՏՐԻԱՐԻ 1903 Թ.

Ճ Ա Ռ Ա Խ Օ Ս Ն Ե Ր

Պ պ. տ'իտուրնէլ տը կօնստան, Դընի կօշէն,  
Ֆրանսիս տը Պրէսանսէ, Ժան Ժօռէս,  
Պօլ Լըուօլ Լըուուա-Բոլիէօ:



2004

Ժ Ը Ն Ե Վ

4. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՏՊԱՐԱՆ  
1903

11669  
8



Հ1167-Ա. 7.



523-83



ՏԷՏՈՒԴԵԼ ՏԸ ԿՕՆՍՏԱՆ


Հանրապետական անդամ Փրանսայի պարլամենտի  
Փրանսական պատգամաւոր Լաճէի խորհրդակցողին





ԳԸՆԻ ԿՕՇԷՆ

*Արքայական, անդամ ֆրանսական պարլամենտի*



**ՖԻԼՆՈՍՈՒՄ ԵՎ ՊՐԷՍՏՆՈՒՄ**

*Սօցիալիստ, անդամ՝ ֆրանսական պարլամենտի  
Սօցիալիստ կուսակցութեան ստաշնորդ*



Ժ.Լ.Ն. Ժ.ՕՌԻՒՄ

*Նախագահ «Մարդկային իրաւունքների» դաշնակցութեան  
Փոխ-նախագահ ֆրանսական պաիլամենտի*



## ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՄԱԿԵՒՈՒՄԻԱ

1903 թ. փետրուարի 15-ին, Նախածեռնութեամբ Պրո Արմէնիա, ի  
խմբագրական կօմիտէի, Պարիզում, Շատօ-դ'Օ-ի թատրօնի մէջ,  
տեղի ունեցաւ հսկայական մի միտինգ, աւելի քան 4000 համակրող-  
ների ներկայութեամբ, բողոքելու Հայաստանում եւ Մակեդոնիայում  
տեղի ունեցող հալածանքների եւ ծնշումների դէմ: Միտինգին մաս-  
նակցում էին քաղաքական բոլոր կուսակցութիւնների ներկայա-  
ցուցիչները, եւ արտասանուած ճառերի մէջ պարզաբանուած են այն  
տեսակէտները, որոնցով Քրամսիացի մեր բարեկամները հնարաւոր  
են համարում հայկական եւ մակեդոնական խնդրի լուծումը:  
Ներքեւ առաջ ենք բերում ճառերի սղագրութիւնը:

### ՃԱՌ Տ'ԵՏՈՒՐՆԷԼ ՏՐ ԿՕՆՍԱՆԻ

(Երեսփոխան լա Սարթի)

Տիկնայք եւ պարոնայք,

Ի նչպէս բացատրել այն անպատժութիւնը զոր կը  
վայելէ ու ի չարը գործ կը գնէ Տաճկաստանի սուլ-  
թանը, հակառակ իւր ամենէն հանդիսաւոր խոստումնե-  
րուն, եւ ան մեր գոնեւրուն մօտ, գրեթէ մեր աչքին  
առջև: Ի նչպէս բացատրել այս գայթակղիչ եւ ստորնա-  
ցուցիչ անպատժութիւնը: Անշուշտ սուլթանն ունի քա-  
ղաքական գործողութեան զօրաւոր ու հնարամիտ մի-  
ջոցներ: Նա գիտէ գնել լուութիւնը եւ դարձնել զայ-  
րոյթը, ոչ թէ դահճին, այլ զոհերուն եւ անոնց պաշտ-



պաններուն դէմ: Այս ծանօթ միջոցը չի բաւեր սակայն բացատրելու անոր անպատժութիւնը: Որչափ ալ անչափ ու անսպաս ըլլան սուլթանին գանձերը, չպիտի բաւէին գնելու ճշմարիտ խիղճ մը, մանաւանդ խեղդելու տիւրական խղճմտանքը: (Ժափահարութիւններ):

Ուրեմն ուրիշ պատճառներ կան, պէտք է քաջութիւն ունենալ ճշմարտութեան հետ երես առ երես գալու և զայն ըսելու: Նախ լուծելի խնդրին մանուածապատ բարդութիւնը կայ, բարդութիւն մը որ առաջ կուգայ ցեղական ու աշխարհագրական դրութեանէ մը, որու մէջ խառնուած են բոլոր կրօնքները, բոլոր հերձուածները, բոլոր աղանդները, բոլոր տոհմերը, բոլոր ազգութիւնները, բոլոր ցեղերը, բոլոր լեզուներն և բոլոր գաւառաբարբառները. զարհուրելի խառնափնգորութիւն մի և նոյն ատեն անվերածելի և այլախառնուած տարբերու:

Եւ յետոյ լուծեամբ պիտի անցնինք մեծ պետութեանց հակառակութիւններուն, անոնց բաժանումներուն, անոնց անվտանգութիւններուն վրայէն, որոնք քանի մը տարիէ ի վեր աճած և միանգամայն բարդուած են, քանի որ՝ գուցէ անոնք աւելի տնտեսական եղած են քան թէ քաղաքական:

Մէկ կողմէն այս բարդութեան և միւս կողմէն այս հակառակութիւններուն հանդէպ, զարմանալի չէ որ հասարակաց կարծիքը այս հարցով շահագրգռուած չըլլայ. — չափազանցօրէն կը քաջալերեն զայն այդ բանին մէջ — և որ նա վարժուած ըլլայ ի վերջոյ զայն նկատելու, իբրև անյուժելի:

Լաւ ուրեմն, այս վճատութեան դէմ է, որ մենք կը բողոքենք, այս անտարբերութիւնն է որ մենք չենք ցանկար, և որ դուք պէտք չէ որ ընդունիք: Ո՛չ, պէտք չէ որ խնդիրը անլուծելի համարուի: Նոյնը կը լինէր

թոյլ տալ այն ատեն, (եթէ այն ատեն մենք թոյլ տայինք) որ չկայ այլևս հնարաւոր յառաջդիմութիւն և որ պէտք է կեցնել աշխարհքին ընթացքը ամեն անգամ որ բարենորոգում մը իրագործելի չլուծիր անմիջական և դիւրին կերպով: (Ժափահարութիւններ):

Նոյնը պիտի լինէր թողուլ որ ըսեն, թէ բոլոր խնդիրները, ըլլան անոնք տնտեսական, ընկերական, բարոյական, նոյն իսկ ընտանեկան և աւելի մեծ իրաւունքով պետական խնդիրներուն լուծումը անհնարին է:

Ո՛չ, ինչ որ անհնարին է, իրերու արդի գրութիւնն է, որ գոյութիւն ունի եւրոպական և ասիական Տաճկաստանի մէջ: Մեր խիղճերը, մեր գատողութիւնները, մեր խոհեմութիւնը նոյն իսկ չեն կրնար համակերպիլ ատոր: Անհնարին է տեսնել որ Եւրոպան զարգանայ քսաներորդ դարու յառաջդիմութիւններու լուսով Տաճկաստանի կողքին որ թաղուած մնացած է միջին դարու խաւարին մէջ: Անհնարին է թոյլատրել այս քաղաքակրթութեան և այս բարբարոսութեան հակասական, ճիւտղային յարադրութիւնը: (Ժափահարութիւններ):

Ասոր համար է որ մենք կը բողոքենք այն անտարբերութեան դէմ, որուն մեզ ենթարկել կը յաւակնին: Ատկէ զատ, ո՛ւր պիտի տանի մեզ այս անտարբերութիւնը, եթէ ոչ հոն՝ ուր նա մեզ արդէն առաջնորդած է: Քանի մը տարիէ ի վեր բաւական ճամբայ առած ենք, բայց աւանդ, դէպի ետ: Այսօր մենք չենք հետեւիր մեր նախնիքներու ո՛չ լեզուին, ո՛չ ընթացքին: Երբ մարդ կը խորհի, թէ ինչ էր Եւրոպան ասկէ երեք քառորդ դար առաջ, երբ նկատի ունենանք այն ամենը որ մեր նախնիքը շոտայլած են այնքան վեհանձնօրէն՝ իրենց միջոցներէն, իրենց ուժէն, իրենց հանձարէն՝ ճնշուածներուն ի նպաստ, երբ մարդ կը մտածէ, թէ ամբողջ Եւրոպան համաձայն էր անոնց ոչ



միայն նիւթական օգնութիւններ զըզկելու այլ և իւր սպաներն ու զօրավարները, երբ հարստահարեալներուն դատը իրեն իբրև պաշտպան ունէր պետական մարդիկն ու բանաստեղծները, և բանաստեղծներ որոնք կ'անուանուէին Վիկտոր Հիւգօ, Ղամարդին, լըրդ Բայրըն և Գէօթէ, և երբ մարդ կը խորհի որ մենք այսօր կը հրաժարե՞նք այդ անցեալէն: Աչ միայն այլևս կեղեքուածներուն կողմը չենք, այլև շատ անգամ չենք բաւականանար զանոնք լքանելով, և իրենց հարստահարիչներուն կը յանձնենք զանոնք, և յետոյ մեզ արգարացնելու համար, մեր անտեսական ու ելլեմտական շահերը մէջ կը բերենք:

Ի՞նչ կ'ուզեն հասկնալ այդ անտեսական շահերով, որոնք հակառակ պիտի լինէին մեր պարտականութեան: Որո՞նք են այդ կարծեցեալ անտեսական շահերը, որոնք կը հրամայեն Եւրոպային զէնք ու ռազմավթերը հայթայթելու սուլթանին, անոր տարու սպաներ և զօրապետներ և իր զօրքերուն մարդիչներ:

Այսպէս սխալէ սխալ գլորելով, անզգալարար մեղսակիցները կը դառնանք հարստահարչին: Ի՞նչ պիտի շահինք ատկէ: Ի՞նչ պիտի ըլլայ մեր իրաւունքներու հրաժարման վարձքը: Աչինչ: Իրօք հասկցէք այս անտեսական հասկացողութեան ամբողջ գձուձութիւնը:

Ի՞նչ շահած է Եւրոպան Տաճկաստանը պատերազմական առաջնակարգ պետութեան մը վերածելով: Նա զայն կործանած է: Նա այսպէս ըսած, ամուլ դարձուցած է, իւր խիճ ձեռքերով իւր անտեսական գործառնութեան ասպարէզը: Իւր իրական յաճախորդը Տաճկաստանն է և ո՛չ թէ սուլթանը: Ուրեմն պէտք էր նա խնայէր եկամուտներ որոնք անոր գրաւականն էին, հսկել վարչութեան մը վրայ, որ երաշխաւորութիւնն էր իւր պահանջներուն և որ բարեօրելով կրնար թող

տալ իւր առևտուրին իւր ձեռնարկներուն աճուժք: Տաճկաստանի սպառազինութիւնը զարգացնել, ի՞նչ անխոհեմութիւն. իւր բարօրութեան աղբիւրը ցամքեցնել ի՞նչ յիմարութիւն: Այսպէս Եւրոպայի արդի քաղաքականութիւնը կարելի չէ պաշտպանել անտեսական տեսակէտով: Բայց գեռ շատ աւելի գէշ է բարոյական և քաղաքական տեսակէտով: Պետութիւնները հաստատեցին հանրային կարծիքի առջև իբրև անուրանալի մի օրէնք, որերկու բարոյականութիւն կայ. մին անհատներու համար, որը շատ խիստ է, և որը աքսորով բանտով ու մահով նուիրագործուած է, մի ուրիշը կառավարութիւններուն համար, որը շատ ազատ է և ամէն ինչ կը թողլարէ: (Ծափահարութիւններ):

Անզգայ հանդիսատես պիտի լինինք այսպիսի խոստովանութեան մը. չէ՞նք հասկնար որ նա համահաւասար է եւրոպական անիշխանականութեան յայտարարութեան: (Ծափահարութիւններ):

Մենք չենք ուզեր անտարբեր հանդիսատես լինել այդ սխալներուն, որուն հետեանքները չափազանցօրէն կը նախազգանք միայն. մենք կ'ուզենք յառաջացնել հասարակաց կարծիքին մէջ բողոք մը, ապստամբութիւն մը, խղճի և գիտակցութեան արդարացի ու փրկարար ապստամբութիւն մը:

Ոմանք պիտի ըսեն. ի՞նչ կ'ուզէ ընել Քրանսան այս գործին մէջ լաւագոյն չպիտի ընէր, եթէ հանդիսատեսն էր: Ընդհակառակը, հասկնալի է, որ ձայն բարձրացնելը Քրանսայի գերն է և որ նա նոյնչափ հեղինակութիւն պիտի ունենայ եւրոպական կոնսէնտիս մէջ, որչափ որ նա անշահախնդիր լինի և որ յետին մտքերու համար կասկածելի չլինի:

Ուրիշ ատեն, ճիշդ է, որ գերբը բաժանուած էին և կը յուսամ որ գեռ նոյնը պիտի լինի ապագային,



բողոքողներս միշտ բազմաթիւ էինք: Մեզ հետ ունէինք մասնաւորապէս Անդրիան: Կը յիշեմ երբ Ղանտոնը թողուցի, գնացի այցելել պ. Գլատստոնին, որու ի նպաստ ճնշուածներուն մղած պրանչելի ու վեհանձն պայքարը չէք մոռցած: Իւր վերջին խօսքը, մինչ ես զայն մտազբաղ կը կարծէի ներքին քաղաքականութեամբ, հետեւեալն եղաւ, զոր ինձ ըսաւ, յանձնելով ինձ գիրք մը, որը գրած էր ի նպաստ հայերուն. «Չբաղեցէք հայերով, պաշտպանեցէք զանոնք. Հայաստանը պաշտպանել կը նշանակէ ծառայել Եւրոպային»: (Ժափահարութիւններ):

Կարծես, աւանդ Գլատստոն շատոնց մեռած լինի այսօր և, տարիները, որոնք կը ծանրանան իւր շերտին վրայ, կրկնապէս կը համարուին, այնչափ տխուր կերպով լցուած են անոնք: Բայց, եթէ նոյն իսկ մինակ լինէինք, ձայն բարձրացնելու, իրաւունք չունէինք լռելու:

Քրանսան պիտի համակերպի այս միւլենոյն ատեն այնչափ ստորնացուցիչ ու այնչափ վտանգաւոր լռութեան, պատրուակելով թէ այսօր այլևս նորաձեւութենէ ելած է հարստահարուածները պաշտպանելը: Չեր այնչափ բազմամբոխ ներկայութիւնը պատասխաններուն ամենէն նշանակալիցն է: Բայց, ատկէ զատ, Քրանսան արդէն խօսած է: Կա սա ծանուցած է Հայաստանի ջարդերը բացարձակապէս որոշ հրատարակութիւններով: Խռովարարներու, ուտոպիստներու հրատարակութիւններ. չէ. Քրանսայի զեսպանի մը, պ. Պօլ Կանբոնի հեռագիրներուն հրատարակութիւններ: Կը ճանաչէք այդ Գեղին Գիրքը, որ նոյնչափ պատուաբեր է մեր գիււնանգիտութեան, որչափ ճնշող այդ ատենւան մեր քաղաքականութեանը համար:

Գեւ բողոքովին նորերս, Ֆրանսական կառավարութիւնը բաժանած է խորհրդարանին մէջ մի ուրիշ հրատարակութիւն, որ կարգալու բախան ունեցած ենք,

և որուն համար կը շնորհաւորենք պ. Գեղեասէն. նա կը պարունակէ այն հեռագիրները, զորս նա ստացած է մեր ներկայացուցիչներէն Մակեդոնիոյ զէպերուն վերաբերմամբ:

Բայց եթէ այս հրատարակութիւնները բարեպատեհ են ու կարեւոր, սակայն պէտք է գանուին այնպիսիներ, որոնց ուղղուին անոնք, պատրաստուած կարծիք մը, հասարակութիւն մը, որ զանոնք անիմաստ չի նկատեր: -

Ատոր համար է որ մենք ուղեցինք, որ այս հաւաքումը լինի ըստ կարելոյն գեղեցիկ, հանդիսաւոր ու պատկառելի. ահա թէ ինչու ես հպարտ եմ անոր նախագահելու կոչուելուս համար, որովհետեւ սա մի մարդկային և Ֆրանսական ցոյց է:

Այս հաւաքումը մարդկային է, պէտք է լաւ գիտնան այդ բանը. պէտք է որ այն խղճուկ մտքերը, որոնք պիտի ուղէին գէշ թարգմանել մեր խօսքերը, հասկնան այդ: Յաւակնութիւնը չունինք մենք խօսելու ի նպաստ այս կամ այն աղգութեան, ի վնաս ասոր և կամ մի ուրիշի, խառնուելու այն մեքենայութիւններէն չզգիտեմ որուն, որոնք միշտ կը յուզուին Արևելեան հարցին շուրջը. ոչ մենք կ'ուզենք խօսիլ ի նպաստ ճնշուածներուն, ինչ որ ալ լինին անոնք, քրիստոնեաներուն, մահմեդականներուն, հրէաներուն, գնչուներուն, բոլոր ճնշուածներուն: (Երկար ծափահարութիւններ):

Այո՛, ատոր մէջ կը կայանայ այս ցոյցին մեծութիւնը և այդ է որ պիտի տայ անոր Եւրոպայի առջև իւր ճշմարիտ նշանակութիւնը: Մենք կը խօսինք ի նպաստ Արևելքի բոլոր հարստահարուածներուն, և մենք կը խօսինք յանուն Քրանսայի բոլոր կուսակցութիւններուն: (Ժափահարութիւններ):

Օտարականները Քրանսայի վրայ շատ մակերևութա-



կան դատողութիւններ ունին. անոնք մեր բաժանումներուն վրայ չափազանց կը վստահին: Է՛հ ուրեմն, այն, մենք բաժնուած ենք, ատոր համար չեմ կարմիրը. նոյն իսկ ես հպարտ եմ այն բարբոթուն վիճաբանութիւններուն համար, որոնց պատճառաւ մեզ կը յանդիմանեն, և որոնք սակայն նշան մ'են մեր ճշմարտութեան և յառաջդիմութեան համար ունեցած սիրոյն: Ես զանոնք կը նախագասեմ շատ լուութիւններէ, որոնք ըստրկութեան կը նմանին և դէպի այն կ'առաջնորդեն: (Ծափահարութիւններ): Այո՛, մենք բաժնուած ենք. այդպէս էինք երէկ, այդպէս պիտի լինինք վաղը ներքին քաղաքականութեան ծանրակշիռ խնդիրներուն մեծամասնութեան մէջ: Բայց պէտք է որ Եւրոպայի մէջ գիտնան, որ մենք կրնանք միացած լինիլ և որ եթէ մենք կը ներկայացնենք հոս շատ կուսակցութիւններ, մենք միայն մէկ Գրանսա կը ներկայացնենք: (Ծափահարութիւններ):

Անշուշտ քիչ վերջը պիտի լսէք հոյակապ, ծափահարուած հետտորներ, բայց որչափ ալ մեծ լինի իրենց տաղանդը, ոչինչ աւելի պերճախօս պիտի լինի, քան իրենց միացումը միեւնոյն դատին պաշտպանութեանը համար: (Ծափահարութիւններ):

Այժմ պէտք է առաջուց պատասխանեմ քանի մ'առաջարկութիւններու, որոնք պիտի լինին ձեր դէմ: Վաղը ձեզ պիտի ըսեն. դուք միացած էք խոռոչարարներու, ուսուցիտներու, մարդասէրներու ցոյցի մը, որովհետեւ պէտք է պաշտպանել ինքզինքն, ինչպէս ոճրէ մը, մարդասէրներու որակման արժանանալէ: Է՛հ ուրեմն, ոչ, պատասխանեցէք թէ մենք շատ դրական մարդիկ ենք: Անշուշտ, մենք մեր իդէալն ունինք, իւրաքանչիւրն իրենք. բայց այն, որու կ'ուզենք ծառայել այս պարագայիս, մի շահ է. պետութիւններու շահը, Գրանսայի և Եւրոպայի շահը: Այո՛, մենք կ'ուզենք

ստիպել պետութիւններն իրենց շահը աւելի լաւ հասկնալու. մենք կ'ուզենք դադրած տեսնել անկարգութիւն մը, որ ոչ միայն մի կուշ (վէֆ) է՝ ուղղուած Եւրոպայի խղճմտանքին, այլև մասնաւորապէս սպառնալիք մ'է աշխարհի խաղաղութեան համար: (Ծափահարութիւններ):

Ոչ ալ թող մեզ ըսեն — ահա մին ամենէն նենգամիտ այն սուարկութիւններէն, որ կրնան մեզ ընել — գիմելով այն խղճմտանքին իսկ, որ մեզ հաւաքած է. զգուշացէք, քիչ վերջը դուք պիտի խօսիք ի նպաստ խաղաղութեան. բայց ձեր հետապնդած նպատակին տրամագծօրէն հակառակ նպատակի մը չպիտի հասնիք. չպիտի ծանրացնէք անկարգութիւնը փոխանակ զայն դադրեցնելու: Չպիտի քաջալերէք — ահա խոշոր խօսքը — այդ ճնշուածները ապստամբութեան և հետեւաբար չպիտի յարուցանէք նրանց դէմ այն ահուկի վրիժառութիւնները զորս դուք չափազանց լաւ կը ճանաչէք:

Յիրաւի հոգ պիտի լինէր անխոհեմ գործի մը վստանգը. այդ մասին չափազանց մտածեր ենք մենք. մեզմէ իւրաքանչիւրը գիտակից է այդ պատասխանատուութեան, որուն այնչափ իրաւամբ կոչում կ'ընէր պ. Բալֆօրը Լոնտոն արտասանած իւր նորագոյն մէկ ճառին մէջ:

Մենք խորհրդակցեր ենք, մենք կըռած ենք թերն ու դէմը, խարուսիկ անպատեհութիւնները մեր ձեռներէցութեան և այլապէս ծանր վտանգները մեր լուութեան: Ո՛չ, մենք գիտենք ինչ որ կ'ընենք, գէշ գիտցնել մի տաք մեր գիտաւորութիւններն ու խղճահարութիւնները: Ո՛չ, մենք չենք երթար ապստամբութեան մի նոր շարժառիթ տալու ճնշուածներուն: Ինչ որ անոնց համար ամենէն ապահով շարժառիթն է ապստամբութեան, դա անտարբերութիւնը, եսամոլութիւնը, մոռացումն է



Եւրոպային, մոռացումն իւր ամենէն հանդիսաւոր խոստումներուն: Ահա ինչ որ զանոնք վհատութեան կը մղէ, և վհատութենէն ալ յուսահատութեան: (Ծափահարութիւններ):

Ընդհակառակը, մեր գութը, մեր համակրանքները կրնան անոնց վստահութիւն ներշնչել, անոնց տակաւին համբերել տալ: Այն որու մէնք կը ձգտինք, չէ հարստահարեալներու ապստամբութիւնը, այլ եւրոպական խղճմտանքներուն ապստամբութիւնը: (Ծափարութիւններ):

\* \* \*

Եւ այժմ, Տիկնայք և Պարոնայք, պիտի լսէք թիչ վերջ այն հռետորները, որոնք բարեհաճած են միւսնոյն թուիչքով սրտի միւսնոյն վեհանձնութեամբ, մոռնալու իրենց բաժանումները և միասին գալու ձեր առջև, պաշտպանել այս աղնիւ դատը: Թիչ վերջ պիտի լսէք իրարու ետեէ պպ. Գընի Կոչէնը, Պրէսանտէն, Ժօռէսը, Լըոսը, Անասօլ Լըոուա-Բօրիօն: Կը խնդրեմ ձեզ— պէտք ունիմ այդ բանը խնդրելու, առաջուց վստահեմ ձեզմէ, գիտեմ որ ձեր վեհանձն սրտերը պիտի պատասխանեն մերիններուն—կը խնդրեմ, ձեզ որ դուք ևս վայրկենաբար զոհէք ձեր կիրքերը, ձեր կռիւները, որ պահ մը մոռնաք ամեն ինչ խորհելու համար միայն անոնց մասին, որոնք մեզ կը գոչեն, որոնք պէտք ունին մեզ որոնք հոն կը մեռնին անօգնական և որովհետև մենք զանոնք մոռցած ենք մեր երկպառակութիւններուն մեջ կը խնդրեմ ձեզ, բարեկամներս, մեզ պէս ընելու այս զոհողութիւնը. հարստահարածներուն համար, ձեր խղճին համար, մեր հայրենիքին բարձր համբաւին համար, քաղաքակրթութեան պատուոյն համար, զոր բարբարոսութեան դէմ պաշտպանելը Գրանսայի յաւերժական առաքելութիւնն է եղած միշտ: (Բունն եւ նրկար ծափահարութիւններ):



### Ճ Ա Ռ Պ Դ Ը Ն Ի Կ Օ Շ Է Ն Ի

(Սէնի երեսփոխան)

Պարոններ,

Կ'ուզեմ միայն պարզաբանել պաշտօնակցիս, պատճառներէն խիստ լաւ կերպով յայտնած բուն Քրիստոսական գաղափարները, նաև ցուցնել որ մեր մեջ կը մոռցուին ներքին կռիւները, երբ ճշուածներուն օգնելու պէտք ըլլայ:

Քանի մը տարիներ առաջ պ. Պօլ Կամպօն կ'ըսէր սուլթանի սիրելի Իզզէթ պէյին «Ձեր տէրը հրաշք մը կատարեց. բոլոր պետութիւնները համաձայնեցուց»: Պ. Կամպօն, վեհանձն, փորձառու դիւանագէտ մը, գիտէր թէ ինչ կ'արժէր այս հրաշքը և որքան դժուար էր պետութիւնները միաձայնեցնել նոյն իսկ սուրբ գործի մը համար:

Այս հրաշքը կը շարունակուի, և հոս կը տեսնէք բոլորովին իրարու հակադիր կարծիքներու և կուսակցութեանց պատկանող մարդոց միանալը: Աս նուազ դժուար հրաշք մ'է Գրանսայի համար, երբ խնդիրը կը վերաբերի արդարութիւնը և մարդկութիւնը միաձայն պաշտպանելուն: (Ծափահարութիւններ):





Պ. տ' Էթուրնէլ ձեզի ըսաւ, որ միայն մի բարոյական կայ թէ պետութիւններու և թէ անհատներու համար: Իւր կարծիքը յօժարութեամբ կ'ընդունիմ, բայց միշտ դիւրին չէ զայն լուսաբանել:

Շատ մարդիկ (խօսքս բուն գիւանագէտներուն համար չէ) կը խօսին այնպէս Ֆրանսայի, Անգղիոյ, Ռուսաստանի և Աւստրիոյ մասին, որպէս թէ անոնք նշանաւոր և զօրաւոր անձեր ըլլային և որոնցմէ կարելի ըլլար լուսիլ՝ մէկ քանի բանական և զօրեղ խօսքեր ուղղելով: Մասնաւոր պահ մը որ այս խոշոր անունները կը ներկայացնեն զանազան ուժեր և զգացումներ, բայց միանգամայն ամբողջութեան մէջ ազգային տիրող կամք մը և ոգի մը կը բղխի:

Ար հաւատամ նաև որ կան ազգայնական հոգիներ, անհատներու հոգիներէ կազմուած, հաւաքական մեծ հոգիներ՝ որոնք նոյնպէս ունին իրենց զգացումները և պէտքերը: Առավարող անձին պարտականութիւնն է ոմանց նկատմամբ զգայուն ըլլալ, ոմանց ալ ուշադիր, թէև դա՛ ըլլայ դժուար և ասարկու պարտականութիւն մը: Մասնաւոր անհատ մը, երբէք չափէ աւելի առատաձեռն չէ իրեն վերաբերեալ գործերուն համար. պետական անձնաւորութիւն մը միշտ իրաւունք չունի միեւնոյնը ըլլալու, սակայն պէտք է որ իր խոհմութիւնը երբեմն տեղի տայ ընդհանրութեան ազնիւ հակումներու առջև: Նա նմանելու է այն բժշկին, որ սրտի բարախուժները մտիկ կ'ընէ, զգայուն ազգային հոգեկան արտայայտութիւններուն և պատրաստ՝ գործածելու զանոնք երկրին բարօրութեան ու նիւթական շահերուն, ինչպէս նաև անոր փառքին համար: Փառք Աստուծոյ, որ մարդկութեան և իրաւունքի կոչերը երբեմն կը լուսին նոյնպէս ազգերու հաւաքական հոգիներէն, որ միայն նիւթական շահերու չէ որ տեղի կուտան: Եթէ սխալ

է ինչ որ կ'ըսեմ, եթէ տարօրինակ և ցնորք է, այն ատեն ընդհանուր պատմութեան մէջէն ջնջելու է Ֆրանսայի պատմութեան մեծ մասը:

Նման պարագային, և եթէ կ'ուզեն որ քաղաքականութիւնը վեհանձն ըլլայ, պէտք է որ հասարակական կարծիքը երևան դայ և ազդէ պետական մարդոց վրայ: Քանի մը տարիներ առաջ անգղիացի մեծ հրապարակախօս և ազնիւ հայրենասէր մը՝ պ. Ալատսթօն, յուզեց հանրային կարծիքը: Եւ դա այնպիսի ժամանակ մը ըրաւ, ուր երբէք ապացուցուած չէր, թէ Անգղիայի նիւթական շահը կը թոյլատրէր Տաճկաստանի մէջ կարգապահութիւնը վերահաստատելու: Բայց և այնպէս նա ցոյց տուաւ ոճրագործութիւնները և ընդվզեց ընդհանուրի կարծիքը: Ալատսթի մէջ նշանաւոր բանախօսութիւն մ'արտասանեց, ողջմտութեան և մեծահոգութեան գլուխ գործոց մը, և վերջացուց զայն պ. տ' Էթուրնէլի յիշեցուցած խօսքերով՝ «Օգտակար եղէք հայերուն, որովհետև օգնել հայերուն՝ Եւրոպային օգնել ըսել է»: Նա իրաւունք ունէր. դա՛ պիտի ծառայէր Եւրոպայի պատիւը ազատելու և ձեռք առնելու նոյն իսկ քաղաքակրթութեան հարցը (Ժափահարութիւններ):

Իրօք զարհուրելի հակասութիւն մը կայ, պարոններ, քաղաքակրթուած աշխարհի վիճակին, ինչպէս որ կը տեսնենք, և Տաճկաստանի ոճրագործութիւններու միջև: Եւրոպայի այս անկիւնը քաղաքակրթութեան ճառագայթները թափանցեցին, բայց կառավարութեան շնորհիւ, մէկէնիմէկ բարբարոսական սարսափները երևան եկան:

Երբ պատմութեան հին տարեգրութիւնները պըրպտենք, կամ Չինկիդ-խանի մը, Լանկթամուրի մը զարհուրելի շահատակութիւնները և հին Մեքսիկացիներուն մարդկային զոհողութեանց նկարագրութիւնները կար-



գանք, այն ժամանակները և սովորութիւնները այնքան  
Տին ու տարբեր են, որ չենք նշմարեր հրդեհներու կրակը  
և չենք լսեր զոհերու աղաղակները:

Սարսափը տարօրինակ կերպով կը կրկնապատկուի,  
երբ նմանօրինակ տեսարաններ կը կատարուին ժամա-  
նակակից, կրթուած մեծ քաղաքի մը մէջ: Նկատեցէք,  
որ սոյն քաղաքի վային կը համապատասխանէ մեր քա-  
ղաքապետին, գայմագամը՝ զօրագնդի հրամանատարին:  
Եւ հիմա երեւակայեցէք, որ բոլոր զօրքը և ոստիկան-  
ները, վալիի և գայմագամի առաջնորդութեամբ, անդէն  
ժողովուրդը ջարդելով կ'ըզաղին: Բռնութեամբ սուներ-  
ու մէջ կը մտնեն, խառնութիւններու երկաթէ փեղկերը  
կը խորտակեն և ամեն տեղ գաւազաններու, դանակ-  
ներու, ատրճանակներու հարուածներով կ'սպաննեն  
հարիւրաւոր մարդիկ, կիներ և տղաներ: Իսկ անոնց  
արիւնյուսայ մնացորդները կը տեղափոխեն կառքերով  
դէպի այն լայն փոսերը զոր կառավարութիւնը մաս-  
նաւորապէս պատրաստել սուած է: (Ժափահարութիւններ):

Ահա ինչ է այն տեսարանը որ թիւրքիս մեղ ներ-  
կայացուց: Հայաստանի Սասուն գաւառին մէջ 1895-ին  
մէկ քանի խառնակութիւններ պատահած էին: Այն  
ժամանակները Հայաստանի անուը դեռ բնաւ ծանօթ  
չէր Ֆրանսայի ժողովուրդին, ինչպէս է այժմ, շնորհիւ  
սուլթանի: Նոյն իսկ այսօր կը հանդիպին դեռ մարդիկ  
որ ինձ կը հարցնեն՝ «Ասկից ձեզ կուգայ այս հետա-  
քրքրութիւնը դէպի Հայերը»: Որովհետև, նախ որ  
անոնք մարդիկ են, յետոյ, իրենց ցեղը շատ կը մօտե-  
նայ մերինին թէ իւր ծագումով և թէ իւր բազմաթիւ  
յիշատակներով:

Այս կրթուած, գրագէտ և անկախ միտք ունեցող  
հայ ցեղը սպիտակամորթներու մէջ ամենահիններէն է:  
Իւր լեռներուն և գետերուն անունները՝ Արարատ,

1909-99

Եփրատ, Տիգրիս և այլն, կը կարգանք մարդկութեան  
ծագումը պատմող գրքերու մէջ:


Քննեցէք անցած երկար դարերը և պիտի գըտ-  
նէք Հայաստանի պատմութիւնը մերինին մօտեցած:  
Եւ այս ժողովուրդը, զոր ոմանք կ'աշխատին հեռացած  
նկատել մեր սովորութիւններէն ու ճաշակներէն, խիստ  
յաճախ և ամենամտերիմ յարաբերութիւններ ունեցած  
է Ֆրանսայի հետ: Խաչակիրներէն յետոյ, երկար ժա-  
մանակ նա կառավարուեցաւ Ֆրանսացի լուսինեաններու  
ձեռքով: Հայաստանի գիւղերը դեռ լեցուն են հին  
չէնքերով, որոնց կամարները ևս յիշեցնել կուտան  
գաղղիացի ճանապարհորդին իւր երկրի մայր եկեղեցի-  
ները և հին ժամանակներէ մնացած շէնքերը:

Վրանս թէ այս ժողովուրդը բաղկացած է միայն  
վաճառականներէ — դա պատճառ մը չէ զայն մահուան  
դատապարտելու — և կ'ենթադրեն ալ որ նա չունի  
արհեստներու, արօրի և դէնքի յարմարութիւն: Այս  
բոլորը սխալ է. հայերը իրաւունքով կրնան կրկնել  
հետեւեալ սքանչելի տողերը զոր լաֆօստէն Գանուբ-  
եան գիւղացոց բերանը դրաւ. «Խաղաղութեամբ կը  
մշակէինք բարեբեր արտեր և մեր ձեռքերը վարժ էին  
թէ արհեստներու և թէ հերկելու»:

Անոնք ալ ունին իրենց բանաստեղծները, հողագործները  
և հերոսները: Իրենց իշխանական ընտանիքներէն էր Բագ-  
րատիօն՝ ուսումնական Միշէլ Նէյր, որ ընկաւ Մոսքովայի մէջ:

Այս ժողովուրդի մօտ կը գտնուի նաև ուրիշ մը՝  
քիւրտները, որ բոլորովին անյարմար են երկրագործու-  
թեան: Իրենց կատարած գերը, սովորութիւններն, իմ  
մէջս կ'արթնցնեն բնական պատմութեան վերաբերեալ  
ըրած հին ուսումնասիրութիւններու յիշատակները:  
Անգղիացի գիտնական մը՝ պ. Ջօն Վիւպօկ, մեզ կը  
սորվեցնէ թէ մրջիւններու ցեղ մը կայ որ իւր գերի-

1909-99



523 33



ները ունի, և եթէ զըկուի անոնցմէ, այլևս չի կրնար սպրիլ: Այդ ծոյլ և ամբարտաւան մըջիւնները կ'ըստ պառն իրենց պաշարը, ուրիշ կերակրող մըջիւններէ: Այսպէս են նաև քիւրտերը հանգէպ հայերու:

Քիւրտերը ատեն ատեն կ'իջնեն իրենց լեռներէն, կը ծանրանան հայերու վրայ, պահանջելով անոնցմէ բազմաթիւ կամայական սուրբեր, զոր կը կոչեն հ ա շ ի ր: Իրենց այս անտեղի վարմունքը կ'արգարացնեն ենթադրելով զայն իբր վարձք՝ հայերուն պատկանած եզներու և արտերու վրայ եղած հսկողութեան, որ իրապէս անբաւական և խիստ սուղ ապահովութիւն մ'է յայտնակութեան դէմ:

Սուլթանը մտածեց երկրապահ-զինուորներ ընել այս աւազակները, և անոնցմով «համիտիէ» անուան տակ ձիաւորներու գունդ մը կազմեց: Անկէ ի վեր կատարուած բոլոր հարստահարութիւնները և կողոպուտները համարուեցան իբր վարձք այս զօրքերուն:

Ինչ կեանք, ինչ կառավարութիւն, և ինչպէս այս վիճակը չպիտի կրնար բացատրել զարգացած ժողովուրդներու անստամբութիւնը: Հայաստանի մէջ ինչպէս այսօր Մակեդոնիոյ մէջ, աշխատողը երբէք ապահով չէ իւր քրտիկը պտուղը քաղելու, երբէք անգամ սուրբ կը վճարէ վալիին, աղային, քիւրտերուն կամ արպանացիներուն և բնաւ չգիտեր թէ զինքը ուր պիտի տանին այս կամայականութիւնը և բաղդը:

Անցեալ օր, Տաճկաստանը շատ լաւ ճանչցող մէկու մը հարցուցի թէ ինչպէս կարելի է վաճառական կամ կարուածատէր ըլլալ երկրի մը մէջ ուր երբէք չեն գիտեր թէ քանի անգամ պէտք է սուրբ վճարել «Յարմարութիւններ կան, պատասխանեց, օրինակ՝ սուլթանը չվճարեր իւր պաշտօնեաններուն, ուստի հարկաժողով մը կամ կուսակալ մը կուգայ ձեզ յայտնելու թէ անթուութեան պիտի մեռնի, թէ սուլթանէն 1,0000

Քրանք անուելիք ունի և կ'ուզէ զայն 3,000 ի փոխարէն տալ: Արդ, աժան գնուած այդ պարսքը, քիչ ճարպիկութեամբ, կարելի է դարձեալ 10,000 ի արժողութեամբ պետութեան վերագարձել ի հաշիւ անձնական սուրբերու: Ահաւասիկ հանձարեղ միջոց մը:

Նոյն անձը պատմեց նաև «Մեր երկրին մէջ արդարութիւնը խիստ տարօրինակ է, կայ մի սկզբունք որ երբէք մոռնալու չէ, այսինքն՝ վատ միջոց մը այնքան արժէք ունի որքան լաւը, որովհետև ոչ մէկը, ոչ միւսը իրարմէ առաւելութիւն չունին»: (Ժափասարութ. և ծիծաղ):

Բնականաբար այս կերպով աղատուելու միջոցները ամենուն համար չեն: Մանաւանդ գիւղացիները, երկրագործները և վերջապէս Հայաստանի Մակեդոնիոյ հարստահարուած ժողովուրդներուն մեծագոյն մասը չեն կրնար միւսնոյն ընել: Արմէ կը հետեին ճարահատ մարդոց գժգոհութիւններ և ապստամբութիւն: Իսկ սուլթանն ալ հանդարտեցնելու մի միջոց կը ծանչնայ — ջարդը:

Ստուն գաւառը, քիւրտերու և հայերու մէջ կոխներ կը ծագին գողցուած մի քանի եզներու համար: Արձնք իրաւունք ունէին — չեմ գիտեր, և արդէն դա առանձին մասնաւոր նշանակութիւն ալ չունի — գիտցածս այն է որ յիշեալ ձորին մէջ ուր կային զարգացած, հարուստ և բազմամարդ երեք աւաններ, երկու ամիս վերջ քար քարի վրայ մնացած չէր և ոչ ալ ողջ բնակիչ մը:

Այս ոճիրներէն յետոյ յուզումը կը տարածուի: Հայերը և Պոլիս թափօրով կ'երթան սուլթանին աղերսագիր մը ներկայացնելու: Տեսայ այն աղերսագիրը և կ'ապահովցնեմ ձեզ որ բնաւ յեղափոխական չըլլալով հանդերձ, զայն կըստորագրէի: (Ժափասարութիւններ):

Վասնզի, կ'ընդունիմ որ եթէ կառավարութիւնները կ'ուզեն գտնել իրենց հպատակներու մէջ պահպանողական ոգի, որ ինձ շատ թանկագին է, պէտք է որ



նախ ինքզինքնին յարգուելու արժանի ցուցնեն: Երբ իրենք ոտնակոխ ընեն բոլոր արդարութիւնը և ողջմտութիւնը, հապա ինչպէս պիտի կրնան յուսալ խաղաղութեան պահպանումը: (Ժափահարութիւններ):

Աղերսագրէն անմիջապէս յետոյ խոսովութիւններ կը ծագին և Պոլսոյ մէջ: Որով կրկին ջարդեր, հարիւրաւոր մարդիկ սպանուած են մայրաքաղաքի փողոցներուն մէջ: Եւ սա սկիզբը միայն եղած է 1896-97-ի ջարդերու զարհուրելի շարքին:

Ո՞վ որոշեց այս ամէնը. կանոնաւոր կառավարութեան մ'արտաքին ձեւը միայն կայ՝ տաճկական կառավարութիւն, Բարձրագոյն Գուռ անունով միայն գոյութիւն ունին: Ամեն բան կ'որոշուի պալատի խորը, սուլթանի և մէկ քանի ֆաւորիներու մէջ: Հոն է բոլոր պատասխանատուութեան բոյնը: Եւ այս բացարձակ ու անգութ զօրութեան առաջ ոչ որ չկրնար գիտնալ թէ արդեօք վաղն ալ իւր կեանքին և ստացուածքին տէրը պիտի մնայ:

Այս շատ լաւ գիտեն օսմանեան արքորեալները, ինչպէս պ. տ'Էտուրնէլ կ'ըսէր. հոս կը խօսինք՝ ոչ միայն քրիստոնեաներու, այլև օսմանցի ճնշուածներու համար — այն արքորեալներու, որ կը կոչուին Միտհատ փաշա՝ մեռած, Մահմուտ փաշա, որ արդարութեան պաշտօնեայ էր և ուղղամտութեամբ վարուիլ փորձած ըլլալուն համար, մեկէն ինքզինքը արքորի և մահուան դատապարտուած գտաւ: Նոյն փորձութեան արժանացաւ նաև մարէշալ Ֆուատ փաշա՝ Ռուս-թրքական պատերազմի քաջ զինուորը, որ և Պոլսոյ ջարդերու ժամանակ ալ իւր տան դռները բացաւ փախստականներուն: Արջերս, Ֆուատ սուլթանի հրամանին համաձայն, անոր մօտ այցելութեան կ'երթայ, և մեկնելու ժամանակ երբ կառքը չգտնել, իւր ծերութիւնը և հիւանդութիւնը նկատի առնելով, կ'սկսի գանգատիլ

այս յանկարծական դէպքէն: Նոյն պահուն վրայ կը հասնի ոստիկանապետը և կ'առաջարկէ. «Գարն մարէշալ քանի որ ձեր կառքը հոս է, բարութիւնը ունեցէք իմ ընդունելու»: Ֆուատ փաշա շնորհակալութեամբ զայն կ'ընդունի և կ'անյայտանայ: Հիմա չենք գիտեր թէ Արաբոյ ո՞ր կողմերը կը թափառի: (Ժափահար):

Եթէ կը կարծեն որ կը չափազանցեմ, մեր առաջ ունինք ականատեսի մը տեղեկագիրը: Ասիկա, Սեբաստիոյ մեր հիւպատոսի այրի տիկին Գարլիէի օրը օրին գրած սրտաճմիկ նկարագրութիւնն է, ինձ թոյլ տուէք շնորհակալութիւն յայտնել այդ քաջասիրտ տիկնոջ և իւր ամուսնոյն: (Ժափահար):

Երբ տիկին Գարլիէ, իւր որդին քաղաքի տապէն և փոշիէն պաշտպանելու համար, ամառանոց կը գտնուէր, «Պէտք է վերագառնալ կը գրէ իւր ամուսինը, դէպքեր կը պատրաստուին»: Մէկ քանի օր վերջ առանց խոսովութեան, առանց ուրիշ պատճառի, բայց եթէ սովորական տրտունջներու արձագանքը, կանոնաւոր զօրքը իրենց հրամանատարի առաջնորդութեամբ, աներու վրայ կը յարձակին և բնակիչները կը մորթեն: Տիկին Գարլիէ սրտաշարժ կերպով կը նկարագրէ իւր ամուսնոյն անզօր զայրոյթը: Յիշեցնել կուտայ մեզ Մէլքիօր տը Վօկիւէի գեղեցիկ խօսքը որ բաւ հեռու տեղեր կորսուած հիւպատոսներու համար, որոնք կը փորձէին ոչինչով ընել այնպիսի մի բան որ դեռ նման էր Ֆրանսայի զօրութեան:

Իրօք այս հիւպատոսին բոլոր ուժն էր իւր գավառը, որ դուռը կը հսկէր: Ունէր նաև Փրանսական դրօշակը զոր խնայուեցաւ՝ որմէ շատ ուրախ եմ, ինչպէս և միւս տէրութիւններունը: Բայց կը նկատեմ միևնոյն ատեն, թէ ինչ կարգապահութիւն տիրած է այդ նախապատրաստուած ռճիրները գործադրելու ժամանակ:

Տէր և Տիկին Գարլիէ իրենց տունը, պարտեզի մէջ



կը հաւարեն մահուան դատապարտուած խեղճերու ամբ բոխը, որ առանց պաշտպանութեան, գրեթէ բոլորովին շուարած չէր դիտեր թէ ինչո՞ւ այս զարհուրելի ըսպառնալիքը կը տեղար իւր վրայ: Նա մի ապաւեն ունէր՝ պատսպարուիլ մեր գրօշակի ծաւրերուն տակ, և կը վազէր դէպի հիւպատոսարանը և ֆրանսացի կրօնաւորներու երկու տունները: (Ծափահար.):

Այս դէպքերը կրկնուեցան ամեն տեղ՝ Տիարպէքիւր, Տրապիզոն, ուր մեր հիւպատոս պ. Մէյրիէ նաև մեծ օրինակ ցոյց տուաւ քաջութեան և մարդասիրութեան:

Տրապիզոն, կրօնաւորներու տունը ծառայեց իբր ապաստան շատ մը հալածուած հայերու: Ամեն տեղ սարսափը կը տիրէր:

Պատմական Եդեսայի մէջ, որ այսօր Ուրֆա կը կոչուի զարհուրանքը աւելի կատաղի եղաւ քան թէ ուրիշ տեղեր. այս քաղաքը պաշարուած մնաց ամբողջ օրեր:

Հատ մարդիկ զարմացան, որ այնպիսի բազմութիւնները ենթարկուած ըլլալով նման գարշութեանց և ջարդերու, չեն փորձած կեանքերնին պաշտպանել: Այն ալ ըրին երբ կարելի եղաւ: Առնուտ գաւառ մ'ուր կը գտնուի Զէյթուն, դիմացաւ և ետ մղեց թուրքերը: Այս հերոսական ինքնապաշտպանութենէն յետոյ, դեռ գրեթէ անկասկ, կղզեակի մը նման նա կը մնայ:

Ուրֆայի մէջ երկու օր դիմադրեցին, բայց մի հրամանով յարձակումը տեղի ունեցաւ և քաղաքի բոլոր բնակիչները սրէ անցուեցան: Նման տեսարան կը գրտնուի հին պատերազմներ և պաշարումներ նկարագրող պատմութիւններու մէջ: Այն ժամանակները միայն պատերազմը բաւական չէր, պէտք էր որ յաղթուածները զոհուէին: Բայց նա հետեանք էր կրքերու և ռիսկու շարքի մ'որ կը գրգռուէր: Մինչդեռ հիմա ամեն ինչ կը կատարուի բոլորովին խաղաղ ժամանակ. տրուած

հրամանի մը համաձայն ղեկուորները կը մտնեն քաղաք և կը ջարդեն բնակիչները:

Մեծ բազմութիւն մը կ'ապաստանի քաղքի մայր եկեղեցին, շատերը կը խոնուին վերնատունները: Իսկ մարդասպանները կը խուժեն դէպի շէնքի բակը և հրացաններու հարուածներով կը սպանեն ու վար կը գործեն խեղճերը: Յետոյ աւելի շուտ վերջացնելու համար, կը քարիւղոտեն վերնայարկի փայտէ սիւները և բռնկցնելով զանոնք՝ կը վառեն բոլոր բազմութիւնը: Սո՛ պատերազմ չէ, այլ վարչական գործադրութիւն մը, բացարձակ խաղաղութեան ժամանակ միապետի մը ձեռնարկած հնարք, որով իւր հպատակներու մէկ մասէն ազատուելու պէտքը զգացած է: (Ծափահար.):

Ա՛լ չեմ շարունակել որ այս բարբարոսութիւններու շարքը:

Չպիտի նկարագրեմ նաև 1895-ի Կ. Պօլսոյ մեծ ջարդերը որ կատարուեցան սուլթանի աչքի առաջ, և որոնց ստեղծի պատմութիւնը հեռագրով մեզ հաղորդեց պ. Տը լա Պուլինիէր՝ մեր քաջասիրտ գործակատարը: Չէ, այլևս չեմ շարունակել. ոչինչ այնքան միօրինակ է, որքան ոճիրը և չարիքը: Միայն դիտե՛ք, որ նման դէպքեր հարիւր տեղեր կրկնուեցան, և որոնց զոհերու թիւը կը համարուի ամենահամեստ պատմաբաններու կողմէ 150 Էն 200,000 հօգի: Այս թիւը անշուշտ շատ աւելի մեծ եղած է, որովհետև ոչ միայն սուրի և կրակի զոհերը հաշուելու է, այլ նաև թշուառութենէ և անթութենէ մեռնողները:

Ուրեմն կը դարձնեմ աչքերս դէպի Եւրոպա և ինձ կը հարցնեմ թէ նա՞ ի՞նչ ընել կ'ուզէ: Թերևս վաղը, նոյն ոճիրները պիտի արիւնտոտեն Մակեդոնիան:

Բնութենէն լուսատես ըլլալով, կը կարծեմ որ հիմա աւելի դիւրին է միջամտել քան թէ ուրիշ ժամանակ, ու հետեալս պարտականութիւնն ալ աւելի ստիպողական:



Ար յիշեցնեմ թէ Հանդիսաւոր խոստումներ եղած են և յաճախ ալ կրկնուած: Պիտի ըսեն որ խոստումները կը մոռցուին: Բայց վերջապէս, ատոնք այնքան կրկնուած են և այնքան պաշտօնական կերպով որ կարելի չէր որ անոնցմէ բան մ'ալ չմնար: Երբ 1856-ին Անգլիա ու Ֆրանսա միացած վճռեցին կեցնել Ռուսիան Պօլսոյ ճամբուն վրայ և իրենց արիւնտով Տաճկաստանի կեանքը փրկեցին, ըսին իրեն՝ «Չեր կեանքը ազատեցինք, բայց չենք ուզեր բարբարոս կառավարութեան մը համար զայն ըրած ըլլալ»: Եւ բարենորոգումներու ծրագիրը ընդունել տալով յիշատակեցին 1858-ի դաշնագրութեան մէջ: Այս եղաւ դաշնակցութեան պայմանը ինչէս և յաղթութեան վարձքը:

Յետոյ, նման պարագաներու մէջ, երբ պուրկարական գազանութիւններէն խռոված Ռուսիան դարձեալ կռուի բռնուեցաւ և մինչև Սան-Սթեֆանօ հասաւ, Եւրոպա յուզուած կրկին միջամտեց դիւանագիտական միջոցներով և հասաւ 1858ի միւլենոյն հետևանքին: Պէրլինի վեհաժողովը նորէն արգիլեց Ռուսիան և անգամ մը ևս ազատեց Տաճկաստանը: Սակայն, միջնորդ պետութիւնները կրկնեցին իրենց ստիպողական ազդարարութիւնները և Պէրլինի դաշնագրութեան 61 երրորդ յօդուածով, իրենց վերապահեցին Թուրքիոյ ըրած խոստումներու գործադրութեան վրայ հսկելու իրաւունքը:

Աւելի ուշ, ձեռք խօսուած ոճիրներէն յետոյ, 1895 ին, յիշատակագիր մը կը միացնէր եւրոպական տէրութիւններու համաձայնութիւնները: 1895 ին, կարծեմ, լորտ-Սոլէզպրի առաջարկեց նաև ստիպողական միջոցներ: Բայց այն ատեն եւրոպական միութիւնը լուծուած էր:

Բայց ինչ կ'ըսեմ: եղան օրեր ո՛ր նոյն միութիւնը վերակազմուած երևցաւ յօգուտ սուլթան Ապտիւլ-Համիտի որ, թէև իւր հպատակներու չընայէր տեղե-

կութիւններ և դեղին գրբեր՝ համարձակեցաւ կ'ըսեն, միւլենոյն տեղեկութիւններով անոնց առաջ պարծենալ:

Ինչ էր պատահեր սակայն: Ինչպէս 80 տարի առաջ յոյները անցած էին Թէսալիոյ սահմանը: Դուք անշուշտ կը յիշէք, ինչ մեծ հիացումով Ֆրանսան ողջունեց և օգնեց յոյներուն այն ատեն:

Այս դէպքն ալ պատճառ մ'եղաւ այն ատեն, բոլոր հակառակ կուսակցութիւններու միացման: Յոյներու օգնելու համար ձեռք ձեռքի տուած տեսնուեցան՝ Պօնտ և Պէրանփէ, Ժընուա և Պէնփամէն Պօնտան: Իսկ Վիկտոր-Հիւգօ, իւր երիտասարդութեան և տաղանդի զարմանալի եռանդով երգեց Յոյներու քաջագործութիւնները և հռչակեց Նավարինի յաղթութիւնը: Ար յիշեցնեմ, ի միջի այլոց, որ օգնեցինք նաև այն օսմանցիներուն, որ Յունաստանի ազատութեան պատերազմէն մէկ քանի տարի յետոյ, ուղեցին գերութեան լուծէն ազատուիլ: Այն ատեն արդեօք Ֆրանսան առարկութիւն ըրա՞ւ Մէհմետ-Ալիի կամ Իպրահիմի հետ, անոնց օգնելու համար, արդեօք շատ չաշխատեցա՞ւ Եգիպտոսը զատելու համար օսմանեան կայսրութենէն: (Ժափաջարութիւններ):

Աերագաւանանք սակայն ժամակակից դէպքերուն: Ուրֆայի, Տրապիզոնի, Տիարբէքիի սարսափներէն և Վ. Պոլսոյ փողոցներուն մէջ կատարուած ջարդերէն յետոյ, կրետացիները՝ մայր հայրենիքէ զրկուած, եւրոպական դաշնագրութիւններու մէջ մոռցուած յոյները ապստամբեցան: Արեւտի լեռներուն մէջ ժողովեցան խումբ մը այծարածներ, որ արհամարհելով Գանտիա հաստատուած փաշան, անկախութիւն կը պահանջէին: Այս անկախութիւնը իրենց խոստացուած էր քըսան տարի առաջ, Հալէպայի դաշնագրութեամբ: Սուլթանը խոստացած էր սահմանադրութիւն մը, պղտիկ



քաղաքական ժողով մ'որ պիտի գումարուէր միայն երկու տարին անգամ մը՝ ճիշտ այն պատճառով, որ ձիթենիները նոյն միջոցին պտուղ կուտան, և այն տարին, ուր ձիթապտուղ չի կայ, իրօք չարժեք քննել Կրեաէի հաշուեցոյցը: (Ծիծառ և ծափահարութիւն):

Սոյն աղատականները կը պահանջէին ուրեմն, դաշնագրութեան մը իրագործումը, որ միւս բարենորոգման խոստումներուն միացուած էր: Յունաստան ալ մէկէն ի մէկ անոնց ձեռք երկարելու քաջութիւնը ունեցաւ, և ջոկատ մը զօրքով Ասոս զօրափարը ուղարկեց որ երթայ կռուի:

Արդ, Հայաստանի ընդհանուր ջարդերու միջոցին Եւրոպա հանդարտ կեցած էր՝ լաւ է ըսել լուծութեան տարօրինակ դաւադրութեամբ մը խախուած: (Ծափահարութիւններ): Այն գեղին գրքերը, որոնց մասին քիչ առաջ պ. տ. Կտուրնէլ կը խօսէր, խիստ երկար ատեն սպասելէ վերջ ունեցանք, և ես ըսի այն ժամանակուայ նախարարին, որ պատմաբանութեան նոր ձե մը հնարած է: Արդէն երկու ձե կը ճանչնայի՝ կարելի է ըլլալ փիլիսոփայ պատմաբան, օրինակ Ռիշլիոյ, ուսումնասիրելով շատ հին իրողութիւններ՝ պատմական մեծ գծերը լուսաբանելու համար, կամ ըլլալ ժամանակագիր, օրագրող և այլն: Այս երկուքի մէջ, մեր նախարարը երրորդ ձե մը ստեղծած էր, ոչ մեծ պատմաբան ըլլալ կ'ուզէր, ոչ ալ օրը օրին լուր տուող, այլ ուշացած քրոնիկոն կ'ընէր: (Ծիծառներ): Որով ճաճկաստանի նկատմամբ ալ, երեք տարի առաջ գործադրուած ոճիրներէն միայն լուր կուտար: Ահա ինչ կը պատմէին մեզ գեղին գրքերը:

Այն, Եւրոպայի վրայ այն աստիճան լուծիւն մը տիրած էր, որ մեզմէ ամեն մէկը երբ պատահամբ իմանար եղածները, կը յուսահատէր զանոնք ժամանակին իմացնել չկարողանալուն: Հայաստան կատարուած

ջարդերուն ծանօթացած էի պ. Մլէմանսօի գրքերով և հայր Շարմրտանի նկարագրութիւններով: Բայց, կը խոստովանիմ որ, ես ինձ կ'ըսէի՝ «Մլէմանսօ կը չափազանցէ՝ քաղաքականութեան մոլութիւնով, իսկ հայր Շարմրտան, անհանգիստ իւր ձեռնարկներու համար, իրաւցնէ մեզ կը պատմէ այնպիսի ոճիրներ, որոնց չէ կարելի հաւատալ»: Սակայն ստիպուեցայ մէկէն խոնարհիլ և անոնց իրաւունք սալ:

Ջերմուկները գտնուած ժամանակս, օր մը հանդիպեցայ ճարտարապետի մ'որ Հայաստանէն կը վերագառնար: Ինձ պատմեց թէ անգամ մը գտնուած էր աւարտութեան մասնուած քաղաքի մ'առաջ, հոն է եղէր նաև գայմադամը իւր զինուած զօրքով: Քաղաքէն կը հասնին սոսկալի աղաղակներ և օգնութիւն խնդրող ձայներ: Պարոնը կը հարցնէ գայմադամին թէ արդեօք չպիտի միջամտէր և կարգը վերահաստատէր. վերջինս ժամացոյցը նայելով կը պատասխանէ՝ «Հրաման ունիմ պէտք եղած ժամանակը թոյլատրելու . . .»: (Սաստիկ յուզմունք, աղաղակներ մարդասպան):

Ամենակատարեալ լուծիւնը ծանրացած էր Եւրոպայի վրայ: Ոչ մի միջամտութիւն չէր եղած: Պարծէք նաւատորմները կը վախնային Յունաստանի և Թիւրքիոյ ջուրերէն: Բայց յանկարծ, երբ կրետացի քաջասիրտ ժողովուրդը իւր աղատութիւնը պահանջելու գաղափարը ունեցաւ, ս'հ, այն ատեն երկինքը մթազնեցաւ խոշոր նաւերու ծուխով, ծովը սկսաւ եռալ անոնց նաւառաջքի տակ: Եւ այս բոլոր ահարկու հրէշները, որ արդի գիտութիւնը կ'արտագրէ, թնդանօթներով զինուած այս մեծ մարտանաւերը գալով Թուրքիէն, Մալթէն, Սպէցիալէն, շարուեցան Կրեաէի շուրջը: Թնդանօթները որոտացին, թէև ուումները ժայռերուն վրայ կը պայթէին: Աժանու-Հալասի ծանօթագրութիւն մը կարդացի, որ



գրեթէ հետեւեալ բովանդակութիւնը ունէր՝ «Գ. ա մ - բ է ր թ ա ու ն անգլիական նաւը, կրակ ընել սկսաւ իւր խոշոր թնդանօթներով, քիչ մը վերջը եւրոպական բոլոր նաւատորմը անոր հետեւեցաւ: Ռմբակոծութիւնը տւեց ամբողջ օրը, իզգէտտին պզտիկ ամբողջ դէմ: Այսպէս հոգեւոր որ ապստամբ մը սպանուած է»: (Ժափահարութիւններ եւ ծիծաղներ):

Ինչ անխոհեմութիւն:

Ինչո՞ւ համար ուժի այս զարհուրելի ցոյցը:

Խօսակցութեան սկսած ժամանակս կ'ըսէի՝ որ կան օրեր ո՛ւր ազգերու քաղաքականութիւնը կը զիջանի անոնց առատաձեռն զգացումներուն: Կերկայ պարագայիս այն օրերը չի կային:

Աթէնք կ'ուզէր իր իշխանութիւնը տարածել ազառոյ կրետէի վրայ: Միթէ Աթէնք յանցաւոր էր. երբէք, նոյն իսկ դաշնագրութիւններու համաձայն: Պէրլինի համաժողովէն յետոյ, և Պօլիս տեղի ունեցած դեսպանաժողովը անոր թոյլ տուած էր յուսալ եբիրոսի մէջ սահմանի տարածուիլը Պինդոսէն անդին: Եւրոպայս խոստումը չէր կատարած: Եթէ վտանգաւոր կը գտնուէր Յունաստանի ընդարձակուիլը դէպի Մակեդոնիա, որ դեռ վարանոտ և խռովուած էր, ինչո՞ւ համար չփոխարինել զայն, տալով իրեն կրետէն որ համաձայն է անոր հետ միանալու: Արդարեւ առիթն ալ շատ յարմար էր:

Բայց դժբախտաբար, կրետէ ոչ միայն պատմական մեծ յիշատակներ և արգասաբեր ձիթենիներ ունի, այլ նաև փառաւոր նաւահանգիստ մը՝ հարաւային ծովախորշը: Որու պատճառաւ պետութիւնները Յունաստանին միացնելէ, կը գերադասէին անփոփոխութիւն կամ ինչպէս եղաւ, անհաստատ և տկար ինքնավարութիւն մը:

Ահա ինչո՞ւ համար իրենց նաւահանգիստները թո՛ւ-

ղած էին, եթէ դեռ կը յիշեմ տարօրինակ անուանին, Ֆոլուտրուա եւան, Լասէվաս թասիօն, Լ'Անտրէտ-Տօրիա, և այլքը ր թ ա ու ն և ուրիշ շատ շատեր: Ասոնք կրետէի շուրջը ամուր պաշարում մը կազմեցին, որ դիւանագէտներու կողմէ կոչուեցաւ խաղաղական պաշարում մը: Պիրէա ևս խաղաղ կերպով պաշարուեցաւ տէրութիւններու նաւատորմներով, մինչդեռ Յունաստան զրկուած ըլլալով հանդերձ իւր ամենալաւ զօրախումբերու մէկէն, յօգուտ կրետացիներու, քաջաբար կ'ուզարկէր մնացածները սուլթանի տասն անգամ աւելի բազմութիւ գունդերու առաջ:

Քաղաքակրթուած Եւրոպայի համար յիշատակը փառաւոր չէ: Թէև մասնաւոր կարեւորութիւն տալու չէ բաւերուն, բայց և այնպէս անցեալ օր բիւզըէի յանձնաժողովի մէջ, երբ կը լսէի այն ծախքերու վիճաբանութիւնները, որ յատկացուած էին շինուելու վրայ եղող ու անուանուած նաւերուն, ես ինձ կ'ըսէի՝ արդեօք կ'երեւակային Արդարութիւնը, Ազատութիւնը, Ռամկապետութիւնը զբաղուած խոշոր ուղեւոր նետելով ապստամբ կրետէի վրայ, և վերջապէս — աւելի տարօրինակ երևոյթ — Իւնէսթ-Ռընանը որոտացնելով իւր թնդանօթները Աթէնքի միջնաբերդին վրայ: (Բոլոր ծափահարութիւններ եւ ծիծաղներ):

Այս բոլորէն սակայն — արդարութիւնը վերջիվերջոյ կը յաղթահարէ — բան մը մնացած է. դա կրետէի ազատութիւնն է, և կը յուսամ թէ քիչ ժամանակէն Յունաստանի միանալն ալ կը կատարուի: (Ժափահարութիւն):

Միթէ դէմ խօսող պիտի ունենամ, երբ դարձեալ հաստատել ուզեմ որ Հայաստանի և Մակեդոնիոյ մէջ ծնած կնճռոտ խնդիրները աւելի դիւրութեամբ կարելի է լուծել հիմա, քան թէ անցեալ ժամանակները: Առաջին պատճառն այն է որ, Եւրոպայի քաղա-



քականութեան հին վիճակին մէջ Ռուսաստան և Անգլիա նախանձով կը դիտէին և Պօլսը: Անշուշտ չեմ ուզեր ենթադրել թէ Ռսկեղջուրը և Տարտանէլը երեսէ թողուած ըլլան, կամ թէ մէկ կողմ ձգելու է այն սկզբունքը, որ կը կայանայ տկար ժողովրդի մը ձեռք թողուլ ռազմագիտական կարեւորութիւն ունեցող տեղերը, և թող չտայ որ ուժեղ կառավարութիւն մը զանոնք գրաւէ: Այնուհանդերձ յայտնի է որ քրիստոնեայ ազգերու շահերը հիմա աւելի քիչ սահմանափակուած են քան առաջ Եւրոպայի ծերացած հողի վրայ: Բոլոր ազգերը երկրագնդին վրայ տարածուած և զայն պատած են իրենց ազգեցութիւնով, վաճառակալութիւնով և գաղթականութիւններով:

Ռուսաստանը փոխանակ բնական գերքէ մը մղուած, միշտ Պոլսոյ կողմը տրամագրուելու, այն օրէն ի վեր երբ Պէրլինի վեհաժողովը արդիւնց զինքը Ասիա-Սթեֆանօի առաջ, իւր տիրապետելու փափագը ուղղած է դէպի Զինաստան և Կորէա: Եւ վերջապէս Արևելեան խնդիրը նոյնը չէ, ինչ որ էր Արչաքօֆի, Տիգրաւելի և Պիլմարքի ժամանակները: (Շատ մը ծափահարութիւններ): Հիմա աւելի դիւրին պիտի ըլլայ միջամտել նաև այն պատճառով որ արդէն բարենորոգումներ մտցնելու փորձեր եղած են, և մանաւանդ որ պարսպ տեղը չեն եղած Արևելեան հարցի այնքան անգամ վիճարանուիլը, այնքան յոգնութիւններու և արեան պատճառ դառնալը:

Իշխան Կորչաքօֆ, փորձելով ուռսի մը հազիւ ներելի միջակ բառախաղութիւն մը, կ'ըսէ՝ «Արևելեան խնդիրը, Տաճկաստանի ապագան, կ'ամփոփեմ այսպէս՝ ինքնավարութիւն կամ անդամահատութիւն, (ծիծաղներ): Երկու միջոցներն ալ փորձուեցան: Անդամահատութիւնը գործադրուեցաւ Պէրլինի դաշնագրութենէն յետոյ: Պոլսու կարիս կատարուած անգթութիւնները փոխարինուեցան

Տանուբեան անկախ իշխանութիւններու ստեղծումով և Աւստրիոյ կողմէ՝ Պօնտիա և Հերցեգովինի գրաւումովը: Ինքնավարութիւնն ալ փորձուեցաւ, դա՛ այն վարչութեան ձևն է, որ ժամանակին Սամօսին արուեցաւ, կարելի է նոյնը ըսել Սիւրիոյ համար, և վերջապէս, մօտերս և աւելի կատարեալ կերպով Կրեաէի:

Թող փորձեն ուրեմն Հայաստանի և Մակեդոնիոյ մէջ՝ Եւրոպայի անհրաժեշտ հովանաւորութեան տակ, այս կամ այն ձևը: Եթէ բացարձակ բաժանումը դժուար է, թող տան այս խեղճ երկրին կառավարիչ մը, եթէ ոչ տէրութեանց կողմէ նշանակուած՝ գէթ անոնց հաւանութեան արժանացած երևելիներու խորհրդի մը հետ միասին: Քրանսա միլետոյնը ըրաւ քառասուն երեք տարիներ առաջ Լիբանանի մէջ:

Այն ատեն ալ ջարդեր տեղի ունեցեր էին: Տիւրքիները յարձակած էին Մարօնիներու վրայ, ինչպէս քիւրտերը Հայերուն: Սիւրիա զօրք ուղարկեցինք այնպիսի ժամանակ, երբ Արևելեան խնդիրը աւելի սուր հանգամանք մ'ունէր քան թէ այսօր: Մեր շնորհիւ սոյն երկիրը ունի հիմա քրիստոնեայ կառավարիչներ և հասարակութենէ ընտրուած ժողով մը: Մենք վերահաստատեցինք դարաւոր աւանդութիւնը: Ժողովուրդը հոն կը խօսի Փրանսերէն և կ'օրհնէ Քրանսայի անունը: (Ծափահարութիւններ):

Ուրեմն ուրիշ բան չի մնար, բայց եթէ օգտուել արդէն ստացուած փորձառութենէն:

Այս փորձառութիւնը կը ցուցնէ նախ թէ առանց Եւրոպայի ուղղակի ազգեցութեան ոչինչ չպիտի ըլլայ, թէ անկէ դուրս կարելի է սպասել միայն խոստումներ, ստախօսութիւններ և վերադարձը այն ստրաստիներուն որոնց խիստ երկար նկարագրութիւնը ձեզ ըրի:

Ահա ինչ որ կարելի է ընել և պիտի ընեն մեր



պետական մարդիկը, միայն այն պայմանաւ սակայն՝ որ հասարակական կարծիքը քաջալերէ զիրենք: Եւ ահա ինչու համար կը գտնուինք հիմա ձեր առաջ: Պէտք է զգացնել տաք մեր պետական մարդոց թէ հարկաւոր է յանդգնութիւն, թէ դուք կուտաք անոնց գործելու լայն իշխանութիւն. որովհետեւ վտանգի մէջ են արդարութիւնը, մարդկութիւնը և պատիւը:

Պէտք է որ ֆրանսայի հասարակական կարծիքը իմացնէ մեր նախարարներուն, որ ամենազգուելի ոճրագործութեանց հանդէպ, ինչպէս են նկարագրածներս, շարժիլ կը պահանջէ իրենցմէ և շուտով շարժիլ Մենք կը մտնանք մեր ներքին բաժանումները, որքան որ խոր ըլլան անոնք, միասին ներկայացնելու համար հասարակական իշխանութեանց առաջ այս կարևոր ազգաբարութիւնը: (Բուռն ծափահարութիւններ):

Դ՞ուք կրնաք ընել ադ, դուք երեկուայ և վաղուայ մեր ախոյեռները, և մեր ներքին կռիւներու սաստկութիւնը երբէք մեզ չպիտի մղէ կարծելու, թէ ձեր եղանակով, մերինէն տարբեր սկզբունքներով ու օրէնքներով մեզմէն տարբեր ձամբաներով դուք չէք ուզեր ինչպէս մենք քաղաքակիրթ մարդկութեան յառաջիմութիւնը:

Մենք պարտաւոր ենք այդ ընելու, մենք քրիստոնեաներս, որոնց մեր հաւատքը կ'ստիպէ՝ յարգել ամեն տեղ բոլոր վարչական ձևերու տակ, ամեն տեսակ ցեղերու և բոլոր կրօնքներու մէջ մարդկային անձնաւորութիւնը, որ օժտուած է բանականութեամբ, խղճմտանքով, ազատ ու պատասխանատու է իւր վարմունքներու մէջ և վերջապէս ամեն տեղ հաւասար Աստուծոյ առաջ: (Բուռն և երկար ծափահարութիւններ):

## ՃԱՌ ՅՐԱՆՍԻՍ ՏՐ ՊՐԷՍԱՆՍԷԻ

(Երեսիօխան Ռօնի)

Այն պերճախօս ու յուզիչ պատկերներէն վերջ, զոր գծեց հիմա՝ իմ պաշտօնակից պ. Վօշէն, ինձ կը թուի թէ բոլորս ալ ինքնաբերաբար պիտի հարցնենք մենք մեզի՝ թէ ինչ է շարժառիթը, որ իրաց այդ վիճակը կը յաջողի երկարաձգել, մշտնջենաւորիլ, լրջապէս ծանրանալ և թէ ինչ միջոցներով կարելի պիտի ըլլայ, վերջապէս, միանգամ ընդմիշտ կասեցնել զայն, որ միևնոյն ժամանակ գայթակղութիւն մը, արհամարհանք մըն է մարդկային խղճմտանքին և ծանր հարուած մը ամբողջ Եւրոպայի շահերուն: Այդ հարցումը բնականօրէն կը ներկայանայ, առաւել ևս այն պատճառով, որ պ. Վօշէնի նկարագրած դէպքերուն մէջ մենք հանդիսատես չեղանք միայն՝ բարբարոսութեան տեսակ մը փեսասարկու յետադարձին, ժողովրդային մոլեռանդութեան մէկ ինքնածին շարժումին, որ, անշուշտ, խորապէս ցաւալի պիտի ըլլար՝ բայց որ, ադով հանդերձ, պիտի ներկայացնէր միջադէպ մը միայն, կրնամ մինչև իսկ ըսել՝ դիպւած մը երկարատե բնաշրջումի մը մէջ, միջանկեալ պատահար մը՝ երկար պատմութեան մը մէջ.— այլ որ մեր տեսածը այդ փոթորկալից տարիներու միջոցին, որոնց յիշատակը ձեր մէջ արթնցուցին, ուրիշ բան չէր եթէ ոչ կազմակերպւած անիշխանութիւն մը, կարգաւորուած անկարգապահութիւն մը, պատուիրուած կոտորածներ: Կրնանք ըսել



որ Անատօրուի խողխողումները պատկառութեամբ եղան համիլական գրութեան, որ՝ տակաւին այս պահուս, կը շարունակէ իր աւերիչ գործը և որ՝ Եւրոպայի աչքերուն առջև, անպատիժ կերպով կը ծաւալի սաստկապէս:

Յետոյ, կը յայտնուի ուրիշ նկատում մը: Առաջին անգամը չէ որ այդ կարգի պատահարներու հանդիսատես կ'ըլլանք: Թուրքիայի պատմութեան գրեթէ բոլոր էջերը արեամբ շաղխուած են: Այդ պատմութեան մէջ բազմաթիւ գլուխներ սկսած են նոյն մահասարսուտ նիւթով, զոր կը ներկայացնէր մեղի քիչ առաջ պ. Կօչէն, բայց շատեր վերջացած են այլապէս: Չեզի մատնանիչ ըրին մեր դարու երկրորդ տասնեակը, Յունաստանի ապստամբութիւնը. ձեզի ցոյց տուին յանկարծական զարթնումը այդ ազգին ու անոր յարութիւնը գերեզմանէն՝ զգեստաւորուած իր փառաւոր անցեալով, դուրս կոչուած իր բոլոր պետերէն, բանաստեղծներէն, գիտնականներէն, վաճառականներէն, նոյնիսկ «կէֆթներէն» (ազատ լեռնականներէն), ինչպէս նաև այն թելադրութենէն՝ որ կուգար Ալեքսանդրի և Կաթերինի ռուս քաղաքականութենէն: Այդ վայրկեանին ևս, երբ ապստամբութիւնը պայթեցաւ, կոտորածները սկսան. տեղի ունեցան Փաթրասի, Սեբասթիի, Սամոսի և Քիօսի խժոժութիւնները, որոնց քստմեցուցիչ արձագանքը ամբողջ Եւրոպայի մէջ յիշելու էք:

Ի՞նչ գրութեան մէջ կը գտնուէր այդ թուականին Եւրոպան: Հազիւ կը թևակոխէր Յեղափոխութեան 25 ամեայ պատերազմին և կայսրութեան վաղորդայնը: Սրբազան Նիկիակոնսթանդուպոլիսի զեռ նոր կը կազմուէր, նպատակ ունենալով հիմնել վեհապետներու տեսակ մը դաշնակցութիւն: Համաժողովներ իշխանութիւն տուած էին Քրանսային՝ զսպելու յեղափոխական շարժումը Սպարտիայի մէջ, Աւստրիային՝ Նապոլիի, Պիէմոնտի և ամբողջ

Իտալիայի մէջ և Ռուսիային՝ Լեհաստանի մէջ: Այդ կոտորածներու արձագանքը այնքան ցնցիչ եղաւ, արծարծած յուզումը այնքան համաշխարհային — ու ատիկա մեծ բանաստեղծներու շնորհիւ, որոնց վրայ խօսեցան ձեզի, ինչպէս Վիկտոր-Հիւգօ, Լամարտին, Բէրանժէ, Բայրըն — որ Սրբազան Նիկիակոնսթանդուպոլիսի զեռնագիտութիւնն իսկ խորապէս ազդուեց ու պետութիւնները հարկադրուեցան զէնքի ուժի դիմել: Նախարինի մէջ միացեալ երեք նաւախումբերը այրեցին սուլթանի նաւատորմի ռուս այդ տագնապէն ծնունդ առաւ Յունաստանի թագաւորութիւնը, այսինքն նոր թուականի մը երաշխաւորութիւնը: (Ժափահարութիւններ):

Այսօր ալ հանդիսատես կ'ըլլանք բոլորովին նմանօրինակ երևոյթներու, կատարուած մեղի աւելի մօտիկ ժամանակի մը մէջ, 1876-ին: Այդ թուականին ևս տեղի ունեցան, կրնամ ըսել, իբր յայտարար նշան — որոշ չափով համապատասխան այսօրուան մակեդոնական ապստամբութեան — Բօսնիայի և Հէրցեգովինի ապստամբութիւնները. միևնոյն պահուն՝ կը գործուէին նմանապէս, իբր համազօր Հայաստանի կոտորածներուն՝ պուլկարական անգթութիւնները. դարձեալ իբր զուգակշիռ կոմս Լամարտինի վերջին ճամբորդութիւններուն՝ կը կատարէր Իգնատիել զօրավարին հռչակաւոր ճամբորդութիւնը: Յաջորդաբար, Կ. Պօլիս և Լօնդօն գումարուեցան դեսպանախորհուրդներ: Մշակուեցան բարեկարգութեան սքանչելի ծրագիրներ. բայց, դժբախտաբար, Եւրոպան չգիտցաւ մինչև վերջը շարունակել ու բանակցութիւններ սկսաւ հոն, ուր պէտք էր հրամաններ արձակել: Նախ սերպիական ու յետոյ ռուս-թուրքական պատերազմները սարքուեցան:

Եւրոպան սթափեցաւ զօրաւոր ցնցումով մը, այն ատեն միայն՝ երբ Ալեքսանդր Բ.-ի զօրքերը կը հասնէին



Կ. Պօլոյ պարիսպներուն առջև և բանակ կը դնէին, ու երբ Սան-Ստեֆանոյի դաշնագրին նախատարերքը կը ստորագրուէին, որոնք կ'արտաքսէին Թուրքը Եւրոպայէն և կ'ստեղծէին մեծ Պուլկարիա մը: Եւրոպան պատեց այդ նախատարերքը, ու շնորհիւ Անգլիայի որ իր նաւատորմը ղեկած էր Պէդերայի ծովածոցը, ու դարձեալ, շնորհիւ Պիզմարքի երախտագիտութիւն յայտնելու տարօրինակ ձևին, որով այս վերջինը հաճոյք կը զգար այլանդակօրէն փոխարինելու այն ծառայութիւնները, զորս Ռուսիան 1870-ին իրեն մատուցած էր, Պէրլինի վեհաժողովը ջնջեց Սան-Ստեֆանոյի դաշնագիրը, վերակազմեց Թուրքիան ու, պատրակելով թէ այդ վերջինին կործանումէն պէտք էր չափազանց վախ զգալ, վերանորոգեց անոր խարխուղ ու փլատ շէնքը, որ աւելի վտանգաւոր երևոյթ ունի, քան թէ կրնային ունենալ նոյնիսկ իր աւերակները:

Չափազանց երկիւղալի է մի գուցէ նմանօրինակ շաւղի մը մէջ մտնենք այսուհետև և որ, գտնուելով այսօր բոլորովին նոյնանման կացութեան մը առջև, ինչպէս 1876-ին, մի գուցէ գործուին այդ կարգի սխալներ ու այդ կրկնուած մեղքը առաջնորդէ մեզ յիշուած արդիւնքներուն:

Մէկ երկու խօսքով, կ'ուզեմ քանի մը գոյներ աւելցնել այն պատկերին, որ գծուեցաւ քիչ մը առաջ վարպետի մը վրձինով, ու խօսիլ ձեզ Հայաստանի վիճակին վրայ և մանաւանդ Մակեդոնիայի, որուն վրայ պաշտօնակիցս, պ. Տընի կօշէն, չժանրացաւ: Նպատակ չունիմ, այս վայրկեանիս, վերագառնալ 1894—1896-ի դէպքերուն վրայ: Այդ մասին պէտք եղածը ամբողջովին ըսուեցաւ: Տակաւին մեր ականջներուն կը հնչէ այն տագնապալի անձկութեան աղաղակը, զոր արձակեց Հայաստանի գժբախտ ժողովուրդը՝ մարդասպաններու

ճանկերուն մէջ: Ինչ որ մանաւանդ քաղաքակիրթ աշխարհին ուշագրութիւնը կապեց՝ այն էր, որ խնդիրը ժողովրդային մոլեռանդութեան մը յանկարծական պոռթկումի մը շուրջը չէր դառնար: Ա՛յ այդ կազմակերպուած բարբարոսութիւնն էր, որոշուած ժամու մը սկսող և որոշուած ժամու մը դադարող կոտորածը, միշտ վերսկսելով, երբ հրամանը արձակուէր և ողողելով արեան մէջ ամբողջ երկիր մը, Վանայ լճի եղերքէն սկսեալ մինչև Խոբան ծովուն ափերը, մինչև Կ. Պօլիս՝ աչքերուն առջև սուլթանին, զոր նշաւակեցին Մեծ-Մարդասպան անունով: (Ծափահարութիւններ):

Եւրոպան, այդ պահուն, կը միջամտէ սահմանաւոր կերպով մարդկային սեռի խղճմտանքին թելադրութեան ենթարկուած դիւանագիտութիւնը թեթևօրէն յուզուած էր խմբագրուած էր 1895-ի մէծօրսնսօնը ու նոյնիսկ խօսք դարձած էր՝ ազոր գործադրութեան համար սուլթանին վրայ բռնի ուժ բանեցնել:

Յետոյ, ամեն բան մոռցուեցաւ, հրաժարեցան անոր գործադրութենէն: Եւրոպայի համաձայնութիւնը սնանկացած էր: Կարգ մը մարդիկ կը պնդէին, թէ մեղմ ու չափաւոր մէթոտը, որ ընդունուած էր, լաւագոյնը եղած էր, ու այս միջոցիս խաղաղութիւնը վերահաստատուած է: Իրօք, այլևս չենք լսեր ամբողջ ժողովրդի մը ճըգնաժամին վայնասունը: Բայց ցաւը սուր վիճակէ մը անցաւ տեւական վիճակի մը, և անկարգութիւնը կը յարատևէ Հայաստանի մէջ:

Երբ հայ ժողովրդին մնացորդները իրենց բնակավայրերը վերագարձան՝ գտան նոյնութեամբ այն կենցաղավարական պայմանները, որոնցմէ ըլկուած էին 1894-էն 1896: Գարձեալ կուռի մէջ են անոնք Համիդիէի գունդերուն հետ, կանոնաւոր զօրքին հետ, իշխանութիւններու կողմէ գրգռուած և հայ բնակիչներու վրայ արձակուած քիւր-



գերուն հետ ու նոյնիսկ կառավարական պաշտօնեաներուն հետ, որոնք, ամենքն ալ հրամանը կը ստանան Նըլդըզ քէօշկէն: Ար կողոպտուին ու կը հարստահարուին զանազան ձևերով, տասանորդի տուրքը վճարել ստիպուած են երկու երեք անգամ, իրենց ինչքերը կը յափշտակուին ամեն օր, իրենց կեանքի ապահովութիւնն իսկ գոյութիւն չունի, երթեկուցութեանց ազատութիւնը խտրու ջնջուած է՝ այն բոլոր վիճակներուն մէջ, որոնք կը կազմեն Հայաստանը: Այս մասին մեր ձեռքին տակ ունինք ականատեսներու վաւերական և պարագայական մանրամասնութիւններով տեղեկագրերը, որոնք մասնացոյց կ'ընեն այդ սրտակեղեք կացութեան մշտտաւ գոյութիւնը: Ար շարունակեն առևանգել ու բռնաբարել կիները և իրենց աղջիկները, բրտութեամբ կրօնափոխել անոնց զաւակները: Հայերու ազնուականներուն մեծամասնութիւնը բանտերուն մէջ կը հեծէ ու անոնց եկեղեցականներէն ոմանք կապանքներու տակ կը մնան ցարդ՝ երկար ամիսներէ ի վեր:

Օրը օրին՝ հրատարակած ենք մենք այդ դէպքերը և կրկնած, ու այդ բանը ըրած ենք ոչ թէ հիմնուելով յերիւրուած տեղեկութիւններու վրայ, այլ շնորհիւ պարագայական պատմութեանը և վաւերական տեղեկութիւններու, որոնք մեզի կը հասնէին՝ յաղթելով հազար ու մէկ դժուարութիւններու, ատոնք հրատարակուած են այն քաջարի թերթին մէջ, որ կը կոչուի «Պրօ Արմէնիա»: (Ժափահարութիւններ):

Բայց կը յաւելում, թէ չէրնար գտնուիլ Գեղին Գիրք մը կամ Ապոյտ Գիրք մը, որ, որքան ալ կառավարութիւններու կողմէ ինամբով մաքրուած ու հրատարակուած ըլլայ, կարենայ ներկայացնել հատընտիր հաւաքածոյի մը ունեցած արժանիքէն աւելի առաւելութիւն մը, առանց երբէք յաջողելու մեզ տալ իր

իւրաքանչիւր էջին մէջ, պաշտօնական հաստատութիւնը այն իրողութիւններուն, որոնք քիչ մը առաջ թեկնի՝ համառօտ կերպով:

Արնամ ձեզ կարգալ նամակներ, զոր ստացած ենք, օրինակի համար, Մուշի գաւառէն, որոնք կ'ապացուցանեն թէ անցած տարուայ մարտին, յունիսին, սեպտեմբերին կացութիւնը աւելի լուրջ ու ծանր էր, քան ինչ որ ես նկարագրեցի. կրնամ, դարձեալ, կարգալ նամակներ, հասած Անատօլի չորս կամ հինգ նահանգներէն, բայց այդ բանը պիտի ըլլար երկար ու միօրինակ պատմութիւն մը, նախամեծար կը համարիմ՝ ձեզ ըսել թէ հայ պաշտօնեաներն իսկ ինքնին չեն կարողացած սովալ արդի վիճակին, անոնք՝ որ կը ներկայացնեն ազգին պաշտօնական մարմինը ու ստանձնած են անոր շահերը պաշտպանելու դերը, բայց որոնք մշտական յարաբերութեան մէջ ըլլալով օսմանեան կառավարութեան հետ՝ վերջիվերջոյ կորսնցուցած են իրենց կորովը: Աերջին օգոստոս ամսին մէջ, պատրիարքը ինքնին տուաւ իր հրաժարականը՝ պատճառաբանելով այն բռնադատիկ գաւանափոխութիւնները՝ որոնց կը հարկադրէին հայերը, այն բանտարկութիւնները՝ որոնց դատապարտուած էին մեծաթիւ նշանաւոր հայեր և այն եպարելի ընթացքը՝ որով կ'արգելուէին երթեկուցութիւնները՝ սուլթանի օստիկաններէն: Ստիպեցին, որ պատրիարքը իր հրաժարականը ետ առնէ, ու խեղճը պարտաւորեցաւ վերըստանձնել միւլետոյն փափուկ դերը, ըլլալով միւլետոյն ժամանակ իշխանութեան ներկայացուցիչը Հայաստանի առջև և Հայաստանի ներկայացուցիչը իշխանութեան առջև:

Ապցութիւնը փոխուած չէ ուրեմն. ու մենք կը դիտենք ժողովրդի մը ներկայացուցած այն արտասովոր երևոյթը, ժողովուրդ մը՝ գեղջկական, կապուած իր բոլոր էութեամբը հողին ու իր բնագուտին, որ՝ այնչափ հա-



լածական, չկրնալով այլևս հանդուրժել անտանելի կա-  
ցութեան՝ կը թողու յուսակտուր ամեն բան ու կը գաղթէ  
խմբովին: Թուով հազարաւոր այդ դժբախտները, իբր  
անտէրունջ բեկորներ, թափառած են վայրավատին  
Անատօլուի մէկ ծայրէն միւսը, փնտռած են պատրս-  
պարան մը, ամեն կողմ, ու գացած են վերջիվերջոյ,  
— բայց ի զճւր — զարնելու դուռը ուսական Հա-  
յաստանին:

Ինդրուեցաւ, մեր միջնորդութեամբ, Փրանսական կա-  
ռավարութեանն ի նպաստ անոնց միջամտելու. փորձեցինք,  
որ Ֆրանսան իր պաշտպանութիւնը տարածէ այդ խեղ-  
ճերուն վրայ: Հարկ դատուեցաւ, սակայն, հրաժարիլ  
այդ քայլէն, որովհետեւ հանգամանքները խիստ անը-  
պաստ էին, զիւանագիտութիւնը չուզեց գործածել այն  
լեզուն զոր գործածելու պարտաւոր էր, ու այդ դժ-  
բախտները ստիպւած զգացին ինքզինքնին վերագառնալ  
իրենց կողոպտուած տուները և ենթարկել յայն լուծին,  
ուրիշ փախչիլ փորձած էին:

Համարձակեցան ըսել թէ այդ ժողովուրդը շա-  
հեկան չէր, որովհետեւ պէտք է նկատել, որ երբեմն  
անոր խորհուրդ կուտան ըլլալ չափազանց խոհեմ և զգու-  
շանալ յեզափոխական շարժումներէ, ուրիշ վայրկեան-  
ներու մէջ ալ զանոնք կ'այպանեն իբրև խիստ չափա-  
ւոր, խիստ հնազանդ մարդիկ, որոնք կ'երկնցնեն իրենց  
վիզը գտնուելի նման, կ'երթան սպանդանոց մայելով:  
Ա՛հ, անտարակոյս դիւրին է դիւցազնութիւն քարողել  
ուրիշին համար՝ իր սենեակին անկիւնը՝ կրակին մօտ  
բազմած և իր լրագիրը կարդալով: Բայց կը փափաքիմ  
որ անոնք, որ այդպէս կը խօսին, նկատի առնեն այն  
անցեալը, հարստահարութեան այն երկարատեւ դարերը,  
որոնց միջոցին այդ ժողովուրդները ժառանգական ըս-  
տրուկներ դարձեր են: Այդ մարդիկը չունէին իրաւունքը

զէնք կրելու, հրացան մը որ և է գիւղի մէջ նորօրինակ  
երևոյթի մը տեղը կ'անցնէր, ու այդ հրացանը, այդ  
միակ հրացանը, երբեմն խաղցած է շատ մեծ դէր մը՝  
վերջին ապստամբութիւններու ժամանակ: Յետոյ, միթէ՞  
մոռցուած է այն դիւցազնական ինքնապաշտպանութիւնը  
օէյթունցիներուն՝ իրենց արծիւի անձեռնմխելի բոյնին  
մէջ: Մոռցուած են այդ դիւցազունները, որոնք իրենց  
կեանքը զոհեցին Ա. Պօլսոյ մէջ, յուսահատ ձեռնարկի  
մը պահուն: Չապացուցին անոնք, որ թէ Հայաստան  
բազմաթիւ զոհեր տուած էր, կրնար նաև տալ առիթը  
ներկայանալուն, բազմաթիւ հերոսներ: (Ծափահարութ.):

Ապցութիւնը, հետեւեալը, այնքան անհանդուրժելի  
է, որքան երբէք եղած չէր: Յուսաբեկութեան երկար  
հեծեծանք մը կ'անդրադառնայ մեզ, անդադար, այդ  
տառապանքի գաւառներէն: Չեմ պնդեր թէ արեւմու-  
եան դիւանագիտութիւնը, և ոչ ալ մանաւանդ Փրան-  
սականը, խուլ մնացած ըլլայ այդ կոչերուն: Ա՛յ, իւրա-  
քանչիւր անգամ, որ ոճիր մը գործուած է, կը բողոքէր  
ան, թէև շատ ուշ, Բարձրագոյն Գրան կամ սուլթանին,  
ու ամեն անգամ ադոր հետեանքը եղած են բարեմոյն  
խօսքեր, խոստումներ, ու մերժումներ: Այդքանը բաւական  
եղած է սակայն, գոհացում ստանալու համար, բայց  
միևնոյն յանկերգը միշտ ու միշտ վերսկսած է, ու այդ  
է գլխաւոր պատճառը, որ հայկական հարցը այս վեր-  
ջին քառօրդ դարու մէջ լուրջ ու ծանր կերպարանք  
մը ստացած է:

Բայց այս պահուս այդ խնդիրը մինակ չէ օրակար-  
գին մէջ կը գտնուինք, յարաբերաբար, ուրիշ աւելի  
հին խնդրի մը առջև, որ ժամանակէ մը ի վեր քնացած  
կը թուէր և որ, վերջին ամիսներուս մէջ, ճշմարիտ  
զարթնումի շաւիղը մտած է, կ'ուզեմ ակնարկել մակե-  
դոնական խնդիրը: Ա՛րմբունեմ մեզ ներկայացած հար-



ցին բոլոր դժուարութիւնները ու զայն պարտըկելու կամ մեղմացնելու բնաւ դիտաւորութիւն չունին:

Նախ և առաջ Մակեդոնիայի աշխարհագրական դիրքը ինքնին եղականօրէն կը կնճռոտէ այդ դժուարութիւնները: Թէև ան գտնուի Եւրոպայի մէջ ազով հանդերձ կան Ասիայի մէջ գաւառներ, որոնք նուազ ասիական են: Գարձեալ հակառակ որ Ալիենայի և Բուգապեշտի նման քաղաքակրթական կեդրոններէ քանի մը ժամուան հեռավորութիւն ունի՝ կարելի է ըսել թէ երկարածը գում մըն է ան, Մակեդոնիան, Արևելեան երկիրներուն դէպի Եւրոպայի ծոցը. նմանապէս միջինագարեան աւատականութեան երկարած գում մըն է ան և միջնագետին մը՝ քսաներորդ դարու սրտին մէջ: (Ծափահարութիւններ):

Մակեդոնիայի Փիլիքական ձևակերպութիւնը հանձարեղ կերպով բաղդատած են տեսակ մը աղիւստախողի տախտակին (տամա), որուն խորշերը պիտի ներկայացնէին բարձր լեռներէ եզերուած փոքրիկ ու խորունկ ձորակներ, որոնք իրարու հետ հաղորդակցութեան ուրիշ միջոց չունին բայց եթէ այն նեղ ձեղքերը, կազմուած ջուրի հոսանքներէն:

Այդ գոց ձորերուն մէջ պարփակուած են զանազան ժողովուրդներ, ինչ որ կը նպաստէ խնդրին չափազանց կնճռոտելուն: Գոյութիւն ունին, նախ, յոյները, հելլէնները: Արոնք կը յաւակնին պատմութեան ուժով, ըլլալ Մակեդոնիայի օրինաւոր ժառանգորդները՝ ի վաղուց անտի և աւանդականօրէն: Թերևս կը սխալին, որովհետև եթէ հին պատմութեան հետևիք՝ կը գտնենք որ ծերունի ու միշտ երիտասարդ Հերոդոտոսը ըսած է՝ թէ Մակեդոնացիները կէս-բարբարոսներ էին և թէ միայն ճիւղպոսի և Ալեքսանդրի արքայական ընտանիքն էր, որ իրաւունք ունեցաւ արգոտեան (արժիէն) ցեղին պատկանելու իր օրինաւորութիւնը վերստանալ, ինչպէս Հե-

րակլիտէս: Յոյները ցրուած են մանաւանդ քաղկեդոնի մէջ Ալիմպոսի մօտերը, Աարտարի եզերքներուն վրայ:

Յետոյ կուգայ Վիւձօ-Վալաքիան, այսինքն վալաքեան խառնիճազանձ ամբօսէն մնացորդ մը, որ միջին-դարու զանազան աշխարհակալութիւններու հետևանքով՝ բերւեցաւ Մակեդոնիա:

Վիւձօ-Վալաքները սա առանձնայատկութիւնը ունին՝ որ ձեռք բերած են իւրացնելով շահագրգիռ ընդունակութիւնները յոյն ցեղին և մանաւանդ օրթոտորս եկեղեցին, ու են աւելի հելլէն քան նոյնիսկ յոյները:

Ատոնց դրացի են սլաւները, սերպերը մէկ կողմէն և բուլկարները միւսէն: Այս վերջինները թէ ամէնէն բազմաթիւները և թէ ամէնէն գործունեաներն են: Աոսովայի, Մանասթըրի և Սելանիկի երեք վիլայէթներուն, որոնք ամբողջովին կամ մասամբ կը կազմեն Մակեդոնիան, երեք միլիոն բնակիչներուն կէսէն աւելին, անհերքելի կերպով կը պատկանին բուլկար ցեղին: Գարձեալ, իրենց դատին համար չափազանց եռանդուն ու գործունեայ մարդիկ են ասոնք և որոնք հիմնած են ամեն կողմ յեղափոխական կոմիտէներ, բացած են դրպրոցներ, որոնց նպատակն է կատարելագործել ձգտումները իրենց արենակիցներու, և երբէք ձեռքէ չեն ձրգեր իրենց գաղափարները տարածելու գործնական միջոցները: Ադիկց զատ, ունին խիստ թանկագին նեցուկ մը և իբր իրականացած իդէալ մը՝ իրենց քովիկը, Բուլկարիան, որ իրենց երէց քոյրն է՝ վայելելով ինքնավարութեան բոլոր իրաւունքները սուլթանին անւանական գերիշխանութեան տակ, և որ իրենց կենդանի օրինակ կը հանդիսանայ թէ ինչ կարելի է սպասել Բուլքիայի լուծը թօթափելէն: Բուլկարական ցեղին պատկանող բազմաթիւ մակեդոնացիներ հաստատուած են Բուլկարիայի մէջ: Անոնցմէ ոմանք երկիրն հպատա-



կուծիւնը ընդունելով, գրաւած են այնտեղ մեծ դիրքեր: Սկուպչինայի մէջ կը գտնուին բուլկար մակեդոնացիներ՝ պաշտօնէութեան և մանաւանդ սպայութեան հասած, որովհետեւ բուլկարական բանակին մէջ հաշուուած 2500 սպաներու առնուալն 1000ը կը պատկանին միւլենոյն բուլկար-մակեդոնական ցեղին:

Ուրիշներ բուլկարական հպատակութիւն ընդունած չեն, բայց կը գործեն մեծ խանդով ու աւելնով յօգուտ իրենց Մակեդոնիա բնակող եղբայրներուն: Կազմած են այն երկու ծանօթ «կոմիտէները», որոնցմով այնքան կը զբաղի մամուլը, այսինքն «Չոնչէֆ-Միխայլովսկի» կոմիտէն ու «Մարաֆօֆ» կոմիտէն: Մին աւելի արմատական ձգտումներ ունի քան միւսը: Յատկապէս մրցման մէջ են միմեանց հետ: Պառակտուած մը հետեւանքով, Չոնչէֆի կուսակցութիւնը կանուխէն սկսաւ իր շարժումը: Մարաֆօֆի կոմիտէն հրաժարեցաւ մասնակցիլ անցած տարուայ այդ գէպերուն և նոյնիսկ կուուեցաւ սոյն կանխահաս շարժման դէմ. բայց լուրջ կերպով կը պատրաստուի, իր կարգին, պէտք եղած ծաւալը տալ յառաջիկայ ապրտամբութեան:

Բուլկարական ցեղին մօտ կը գտնուին դեռ թուրքերը, այսինքն Անատօլուէն ներածուած օսմանցիները, յետոյ ալպանացիները, որոնք մահմեդականութիւնը ընդունեցին պահելու համար իրենց ինչքերն ու զէնքերը, բայց որոնք ծագումով քրիստոնէայ ըլլալով, չբաժնուեցան քրիստոնէական աւելորդապաշտութիւններու մէկ մեծ մասէն ու ձուլեցին զանոնք իրենց նոր կրօնքին՝ միացնելով այսպէս իրարու՝ Ղուրանն ու իրենց սուրբերու յուծութապաշտ աղանդը:

Մակեդոնացիներուն մէջ սպրդած են՝ Սպանիայէն հալածուած հրէաներն ևս, որոնք Սելանիկը աշխարհի ամենէն խոշոր հրէական քաղաքին վերածեցին: Այդ տեղը

չգոհացան միմիայն առևտրական զբաղումներով, ինչպէս ուրիշ ամեն կողմ, և ձեռք զարկին շատ թէ քիչ հողագործութեան. ունին ագարակներ, որոնք կը մշակեն հիանալի եղանակաւ մը: (Ծափահարութիւններ):

Պէտք է տակաւին կրօնքներու այլազանութեան խաղցած դերն ալ բնորոշել: Եղաւ ժամանակ մը, ուր իրարու դէմ առանձին կը գտնուէին իսլամը և յոյն եկեղեցիին օրթոտոքս քրիստոնէութիւնը: Բայց ներկայիս մէջ բաժանումը կամ աւելի ճիշտ ցրուումը աւելի շեշտուած է, մէկ կողմէն կը գտնուին յոյն օրթոտոքսները, որ կապուած են պատրիարքի իշխանութեան, ասոնց կողքը կան, հետզհետէ, Կիւձօ-Ղալաքները, որ օրթոտոքսութեան ամենէն հաւատարիմներն են. սերպերը, որ կը ձանձնան պատրիարքը, բայց կը պահանջեն միւլենոյն ժամանակ իրենց լեզուով եկեղեցական պաշտամունք մը. բուլկարները՝ որ գրեթէ քսան տարի առաջ Ռուսիայի ազդեցութեան տակ, ստեղծեցին հերձուած մը և հիմնեցին ինքնագլուխ բուլկար եկեղեցին, որ բաժնուեցաւ ֆէնէրի պատրիարքարանէն և իրեն իբր պետ հոչակեց էկզարխը, որ Բուլկարիայի մէջ չի բընակիր. յետոյ կուգան լեռներու մէջ ցիրուցան կաթոլիկները, որոնք քանի մը միսիօնարներու տուած հըրահանգներուն կը հետեւին: Այս բոլորին դէմ կը կանգնի իսլամը: Այս կրօնքը միմիայն օսմանցիներէ չի քարոզուիր, այլև ուրացողներէ, ալպանացիներէ, որոնք դաւանաւորու հին քրիստոնէաներ են՝ պահելու համար իրենց կալուածներն ու հրացան կրելու իրաւունքը՝ ինչպէս նաև չկրելու իրենց բնագաւառին մէջ ստրուկ նկատուելու նախատիւքը:

Իր երկրային կազմութեամբ, պարունակած ցեղերու ու անոնց ընդգրկած կրօնքներու այլազանութեամբ՝ Մակեդոնիան կը ներկայացնէ, ուրեմն, բոլորովին մաս-



նաւոր յատկանիշ մը, ու արդի կացութիւնը բարեօքելու համար՝ լուծման պարզունակ ձև մը անկարելի է որ անոր յարմարի: Ինչ որ ալ ըլլայ սակայն, այսօրուայ վիճակը անտանելի է ու կարող չէ երկար տևել: Այս մասին ունինք խոստովանանքներ՝ ոչ միայն մեր ձեռքին տակ գտնուող կապոյտ Գիրքերուն՝ այլև այն Գեղին Գրքին մէջ զոր, քանի մը օր առաջ պ. Տելքասէ մեզի բաժնեց: Հոն կը գտնենք պատկերը կացութեան մը, որ գոյութիւն ունի տարիներէ ի վեր, բայց որ ցորչափ կը տւէ, այնքան անտանելի կը դառնայ: Այլպանացիները իրենց կեղեքումները անդադրում առաջ կը տանին՝ ոչ միայն կոստուրմի դաշտին, այլև ամբողջ Հիւսիսային և Արևմտեան Մակեդոնիայի մէջ: Չմեռնամուտին անոնք կ'իջնեն իրենց լեռներէն՝ սասնալու համար, կանխաւ, կարգ մը տասանորդի տուրքեր և, նախօրօք իմացնելու տեղական բնակիչներուն՝ թէ որոնք պէտք է ըլլան յառաջիկայի տուրքերը, տուրքեր՝ զոր վճարելու են այգ: քրիստոնեայ գիւղացիները՝ աշնան սուրբ Յովհաննէսի տօնին, եթէ կ'ուզեն խուսափել մահուան պատիժէն: Երբ հաշիւնին այսպէս կարգադրած են, անոնք դեռ թող կուտան իրենց «ձուլուն» կոչուած հարկն ալ գանձելու: Այլպանացի ցեղապետ մը կը հասնի 30-40 հետևորդներով՝ ոտքէն մինչև գլուխ զինուած, հրացանը ուսերնին, ստրճանակն ու եամաղանը մէջքերնին: Կը մտնեն դժբախտ քրիստոնեայի մը ագարակը, կը բազմին անոր տան մէջ կը մնան այնտեղ 8, 10, 15 օր, կ'ուտեն ու կը խմեն առատօրէն, և երբ կը մեկնին՝ տակաւին հեգնող յանգանութիւնը կ'ունենան խնդրելու իրենց ակամայ ասպնջականէն՝ բարեհաճիլ վճարելու այն՝ ինչ որ անոնք կ'անուանեն ա ա ա մ ն ա վ ա ր ձ ք, այսինքն այն ձանձրոյթը զոր յանձնառած էին լափելու համար անոր ստացուածքը: (Ժափահարութիւն եւ ծիծաղ):

Ու եթէ գոհանալին միայն այդ կարգի վնասակար ծաղրանքներով: Գեռ աւելի հեռուները կ'երթան, կ'առևանգեն կիներն ու աղջիկները այդ անպաշտպան քրքրիստոնեաներու: Այն վայրկեանէն, երբ կին մը կամ աղջիկ անոնց ախորժելի կը թուի, այլևս այդ վերջինը հաշտուելու է այն մտածումին հետ, թէ իր կեանքը վերջացնելու է այլպանացի ցեղապետի մը սերային կամ կանանցին մէջ: Երջանիկ է՝ եթէ դիմադրէ, առանց տեղի տալու իր ամուսնուն ու բնասնիքին կործանման և մահուան:

Օսմանցի պաշտօնեաները, որոնք իրապէս պարտաւոր են պաշտպանելու այդ ժողովուրդները, որոնք հոն դրուած են կարգն ու կարգապահութիւնը տիրապետել տալու համար, յանուն իրենց տիրոջ, ձեռնամուխ կը լինին, իրենց կարգին, վատթար կեղեքումներու: Վալիէն սկսած մինչև օստիկանութեան յետին չափուշը կամ զապթիէն, բնական ու օրինաւոր կը գտնեն կաշառուիլը և երբէք չեն վարանիր այլպանական ձեռով և համազօր անիրաւութիւններ գործել չկայ մէկը, մեծ կամ պզտիկ, որ բռնապետ մը շներկայանայ:

Անտեղի է, ուրեմն, զարմանալ թէ ժողովուրդ մը որ չափազանց կորովի է, որուն բնաւորութիւնը իր ապրած լեռներու կլիմային իսկ աղդեցութեամբ՝ կ'արտացոլէ անհանդարտ առնականութիւն մը և դիմադրաւոր կարծութիւն մը, չափաքի յաւտեանականապէս գլուխ ծռել այդ լուծին: Ինչ որ մանաւանդ ապշեցուցիչ է՝ այդ ապստամբութեան աւելի կանուխէն չլայթիլն ու անոր զօրաւորապէս չարտայայտուիլն է:

Այլ սակայն երեցաւ այդ շարժումը վերջին աշնան մէջ և շատ աննպաստ պայմաններու տակ, ձմեռնամուտին, ճիշտ ձիւնը տեղալ սկսելու պահու: Ամեն մարդ գիտէ, որ այդ երկրին մէջ կլիման չափազանց խիստ է



և թէ այդ շրջանը կուուելու յարմար ժամանակը չէ: Գարձեալը, ծանր բաժանում մը առաջ կուգար Զօնէֆ-Միխայլովսկի և Սարաֆօֆ խումբերուն միջև: Համաժողով մը գումարուած էր Սօֆիայի մէջ, և որովհետեւ գործադիր իշխանութեան կազմակերպութեան համար անհամաձայնութիւններ ծագած էին՝ Միխայլովսկիի բարեկամները արտաքսած էին Սարաֆօֆի կուսակիցները: Առաջինները միայնակ կուուի սկսան: Միւսները ոչ միայն ապստամբութեան պատրաստութեան ինքզինքնին հակառակ ցոյց տուին, այլև, կ'ըսեն թէ, շատ մը կէտերու վրայ՝ չինայեցին նոյնիսկ իրենց բոլոր ճիգը խափանելու համար անոր ծաւալումը, ու մինչև անգամ զէնքով կուուելու ալ ելան անոր դէմ: Այդ շարժումը չի յաջողեցաւ: Բայց այդքան ուշ ճամբայ ելլող սոյն ապստամբութիւնը, որ կը ներկայացնէր մակեդոնական շարժման կէսը միայն, նուազ սպառնական բնաւորութիւն մը չստացաւ՝ Թուրքիայի համար: Արեւան հեղեղներ հոսեցուց ան՝ Վահեդօնիայի մէջ: Բայց անոր ամենէ յատկանշանական կողմը այն եղաւ, որ կուուողները իրենք իսկ՝ շատ լաւ գիտէին թէ այդ ապստամբութեամբ չէր որ օսմանեան լուծը թօթափելու պիտի յաջողէին. նըպատակ ունէին միայն ուշադրութիւն հրաւիրելու իրենց դժբախտութեան և խլուած իրաւունքներուն վրայ:

Երբոր արիւնհեղութիւններու հետ ամեն բան վերջացաւ, թուրք իշխանութիւնները զէնքեր փնտոելու հետամուտ եղան, ու զրկեցին բացարձակ հրամաններ ամեն կողմ՝ Վահեդօնիայի ոստիկաններուն, որոնք անմիջապէս տարածուեցան բոլոր ագարակներու, ինչպէս նաև ամբողջովին մեկուսացած տուներու մէջ՝ ու հոն, խուզարկութիւններ կատարելու պատրուակով սկսան ամեն գարշելի լրբութիւններ գործադրել, այն աստիճան որ գաղթականական նոր հոսանք մը կազմուելով՝ կը

բշէ բազմութեամբ դէպի Բուլղարիա՝ այդ վայրենի խտուածեան զոհերը, խտուածեան՝ որ կը զօրանայ, սաստկապէս, երկար շաբաթներէ ի վեր, և երբէք կանգ առնելու երևոյթը չի ներկայացներ:

Օրաթերթ մը, որ մեծամեծ ծառայութիւններ մատուց մարդկութեան դատին, ան՝ որ առաջինը, 1876-ին, բուլղարական անգլոթիւններուն վրայ տեղեկութիւններ հրատարակեց, այն միջոցին երբ լորդ Բիրքըսֆիլդ անգլիական խորհրդարանին մէջ այդ մասին եղած տարածայնութիւնները կ'արհամարհէր՝ անուանելով զանոնք սրճարանի շատխոսութիւններ և ճաշարանի անմիտ զրոյցներ, այդ միւսոյն «Տէյլի-Նիւզը» վերստանձնեց նոյն վեհանձն դերը վերջերս, որուն արդէն յանձնառու եղած էր այդ հին թուականին. հաւաքեց լուրջ հաստատագիր, հարցուփորձի ենթարկեց, մասնաւոր թղթակցի մը միջոցաւ, դժբախտ գաղթականներէն շատերը, ու իր վերջին չորս համարներուն մէջ հրատարակած տեղեկատուութիւններէն կը հետևի, որ մենք առանց մեղի հաշիւ տալու, առանց իսկ զայն գիտնալու, հանդիսատես ենք եղեր բուլղարական խժդութիւններու և Հայաստանի կոտորածներու երկրորդ գրուագի մը: Ար հետևի, նմանապէս, անոնցմէ, թէ սարսափահար ժողովուրդը վճռած է այլևս երկար չի տանիլ՝ իրեն վիճակուած այդ բախտին: Արնանք յառաջիկայ գարնան սպասել ապստամբութեան մը փոթորիկին, որուն համեմատութեամբ, այս վերջինը թեթեւ բոց մը և աղայական խաղ մը թուելու է:

Այդ պիտի ըլլայ ընդհանուր ապստամբութեան մը պայթումը, որուն մէջ առաջ պիտի խաղայ Զօնէֆ-Միխայլովսկի կօմիտէն՝ ձեռք ձեռքի տուած Սարաֆօֆի կօմիտէին: Թանկ է ուրեմն ժամանակը Եւրոպային համար, եթէ կ'ուզէ որ մեծ հրդեհ մը չի ծագի, որուն

մասին որոշակի տուած միտքս այս յոն ժամկէտային վերջինը



ինչպէս սկսիլը շատ լաւ գիտենք, բայց որուն ինչպէս և ուր վերջանալը կ'անգիտանանք: (Ծափահարութիւններ):

Այս իրողութիւնները մեզի անծանօթ չեն. մամուլը զանոնք բարձրաձայն հրատարակած է, զիւանագիտութիւնն իսկ արձանագրած է զանոնք այն հաստատագրերու մէջ, որոնք վերջերս հրատարակուեցան պ. Տէլքասէի կողմէ: Բայց ինչ կ'ընէ Եւրոպան: Ինչ կը մտածէ ընել ամենքէն խոստովանուած, լիովին ճանչցուած այդ վտանգին առջև առնելու համար: Չեմ ուզեր անարդար ըլլալ, գիտեմ թէ վերջին նոյեմբերի 27-էն սկսած, ինչպէս որ Գեղին Գիրքն ալ ցոյց կուտայ, պ. Տելքասէ, որ երկար ամիսներէ, մինչև իսկ տարիներէ ի վեր կը մտահոգէր Մակեդոնիայի կացութեամբ, արժանիքը ունեցաւ նախակարգաբար դառնալու: Ինքն էր, դարձեալ, որ մակեդոնական հարցը նորէն յանձնեց պետութիւններու ուշադրութեան ու, չգոհանալով մտանոնիչ ընել միայն վտանգը՝ ձեռնարկեց բարեկարգութեան առաջին ծրագիրը, համաձայն այն սկզբունքներու, որոնք սուած էր մեր լաւագոյն գործակալներէն մէկը, պ. Սթէյկ, Սելանիկի Փրանսական հիւպատոսը:

Հազիւ թէ այդ ծրագիրը՝ չպիտի ըսեմ հրատարակուած՝ այլ միայն ճանչցուած էր պաշտօնական շրջանակներու մէջ, սկզբնական արդիւնք մը սուաւ: Բարձրագոյն Գուռը սուր հոտաուութիւն ունի. ըմբռնեց անմիջապէս թէ իր չարագործութիւններուն շուրջը խնդիր պիտի բացուէր, զեկտեմբերի առաջին օրերէն իսկ, և Պոլսոյ մէջ սրանչելի բարեկարգութիւններու ծրագիրներ երևցան: Ծանօթ ըլլալու է ձեզի այն իրատէն, համազօր ճշմարտութիւններու այն հաւաքածուն, այն օրինագիրքը, որ հրատարակեց ամենէն զմայլելի բարոյական տափափութիւնները: Երկարօրէն անոր մէջ կը բացատրուի կազմակերպութեան ձևը լաւագոյն կառավարութեան

մը՝ գրեթէ յարեւման այն իդէալին, զոր ֆէնէլոն մեզ կը ներկայացնէ Տէլքմաքի Սալանթին մէջ: Ու ահա այդ բանին համար՝ կը ձեռնարկեն կարգ մը նախապատրաստութիւններու, կ'անուանեն բարենորոգութեամբ զբաղելու համար ընդհանուր քննիչ մը, որ պիտի մեկնէր բուն երկիրը՝ ունենալով որոշ իշխանութիւն. յանձնախումբ մը, որ և Պոլիս պիտի մնար՝ ունենալով իրեն պետ մեծ վէզիրութեան նոր կոչուած ֆէրիհ փաշան, որուն պաշտօնն ըլլալու է վերաքննել և վաւերացնել ինչ որ անհրաժեշտ պիտի դատէ ընդհանուր քննիչը բուն երկրին մէջ: Ո՛հ, որքան արժէքաւոր են այդ շաթրիան խոստմագրերը:

Եւրոպական զիւանագիտութիւնը՝ թէպէտև երբեմն ունենայ կամ կեղծէ տարօրինակ պարզմտութիւն, չթուիր մեծ կարևորութիւն մը սուած ըլլալ այդ իրատէին: Կոմս Վամսորֆ կը յուզուի այդ կացութեան առջև ու ինքը, որ աւելի տնմայ և նստակեաց նախարար մըն է, ձմեռուան մեջտեղը՝ կը մեկնի Պէտերբուրգէն դէպի Բէլգրատ, Սօֆիա և Վիեննա: Կը տեսնուի կոմս Գոյուլսօփսկիի հետ, ու, եթէ հաւատ ընծայենք կիսապաշտօնական լուրերուն, երկուքը միասին որոշած և վերանորոգած են՝ 1897-ին Պէտերբուրգի մէջ Աւստրիայի և Ռուսիայի միջև կայացած դաշնագրութիւնը, այսինքն պահպանել խաղաղութեան „Statu-quo“ ն, Պալքանեան թերակղզին մէջ: Գարձեալ, համաձայնած են բարենորոգութեան ծրագրի սկզբունքներուն վրայ՝ Մակեդոնիայի մէջ կիրարկելու համար:

Շատ գիւրազգած չեմ, գալով ինձ, երբ խնդիր է սահմանել առաջնութեան հարցերը: „Մէսիտօրի“ հրովարտակին նախաթուութեան իրաւունքները զիս բնաւին չյուզելով հանդերձ, նոյնիսկ միջազգային խնդիրներու մէջ կ'ըմբռնեմ՝ թէ Ռուսիան և Աւստրիան, որ



մեծամեծ շահերով կապուած են Պալքանեան երկիրնե-  
րուն հետ, նախաձեռնութիւնը ստանձնելու առաւելու-  
թիւնը ունենան: Բայց պիտի բաղձայի, միևնոյն ժամա-  
նակ, որ միւս պետութիւնները, ու մասնաւորապէս Քը-  
րանսան, մասնակցէին, քիչ մը աւելի ազդեցիկ ձևով,  
կատարուած բանակցութիւններուն, կանչուէին յայտնե-  
լու իրենց կարծիքը և ոչ թէ, էպպէս, սայլի մը հին-  
գերորդ անիւին դերը կատարելու դատապարտուէին:

Յակայն բոլորովին համոզուած չեմ, թէ այն բանը,  
որ մեզի պիտի վերապահուի, ազկից տարբեր բան մը  
պիտի ըլլայ: Կմանապէս, երբ ուշադրութիւն կը դար-  
ձնեմ բարենորոգութեան ծրագրին վրայ, որուն հա-  
մար կ'ըսեն թէ ապստամբութիւնը կանխելու և չարիքին  
պատճառները բառնալու բնոյթը ունի, ցաւօք սրտի  
պարտաւորուած կը զգամ ինքզինքս ըսելու՝ թէ, իմ  
կարծիքով այդ ծրագիրը բոլորովին անբաւարար է և  
թէ կը ներկայացնէ շարք մը ձախող յատկանիշներ:  
Կախ կայ անոնց մէջ հաս մը, զոր պէտք է վեր հանեմ:

Ի՞նչպէս կ'անջատեն—նորաձեւութեան մէջ մտած բա-  
ռով — Մակեդոնիայի խնդիրը Հայաստանի խնդրէն: Ար  
կարծէի թէ հայերը առաջնութեան իրաւունք մը շա-  
հած էին, պիտի ըսեմ նոյնիսկ ստիպողականութեան  
իրաւունք մը, և թէ այդ բանը բաւական սուղի գնած  
էին: (Որոտընդոստ ծափահարութիւններ):

Ար կարծէի թէ Եւրոպան այդ խնդիրը ձեռք առած  
էր ոչ միայն մարդկայնութեան տեսակէտով, այլև միջազ-  
գային շահու և դիւանագիտութեան կրկին տեսակէտ-  
ներով, և թէ զայն իր ձեռքէն բաց պիտի չթողուր ոչ  
մէկ գնով: Ի՞նչպէս չեն տեսներ գոյութիւն ունեցող  
այն գերագոյն վտանգը՝ Հայաստանի խնդիրը լքանելով  
և Մակեդոնիայի խնդրով միմիայն զբաղելով: Ի՞նչպէս  
ահաւաստիկ նոյն սուլթանը, որ մեզի հետ կը մաքառէր,

որ մեզ տեղի տուած չէր երկար տարիներէ ի վեր՝  
ժամանակ վատակելու հնարաւոր միջոցներ մեզի դէմ՝  
հակադրելով, անոր մշտնջենաւոր խարդաւանները, ու  
յանկարծ ահա՛, իրաւունք կուտանք մենք իրեն: Որով-  
հետև յոգնած ենք ու յուսահատած, որովհետև ճա-  
կատ առ ճակատ չենք կրնար այդ երկու ձեռնարկները  
միահաղոյն առաջ քշել կ'ըսենք: — Իրաւունք ունիք  
ահաւաստիկ մէկ կողմ կը նետենք Հայաստանը, մեր  
կարկահին կտակն էր անիկա, զոր քակելու ենք, անոր  
տեղը դնելու համար Մակեդոնիան: Ո՛վ Պենելոպեան  
(հաւատարմութեան) չքնաղ օրինակ, ու ի՞նչպէս այդ  
բանը մեզ առաջնորդելու է գեղեցիկ արդիւնքներու:

Առաջին անգամը չէ, դարձեալ, որ Բարձրագոյն Գլխան  
հետ կը խօսուի՝ մակեդոնական խնդրի մասին: Անով  
զբաղուած ենք տարիներ առաջ: Այսօր կը գտնուինք այն  
օտարօտի դրութեան մէջ՝ որ 1903-ի շնորհատու թը-  
ւականին՝ կը բանաձևենք նոր ծրագիր մը, յանկարծ  
մէկդի նետելով Հայաստանի խնդիրը, և այդ ծրա-  
գիրը պակասաւոր է, անհունապէս պակասաւոր, այն  
բարեկարգութիւններէն, որոնք 1896-ին խոստացուած  
ու նոյնիսկ — թղթի վրայ — գործադրուած էին սուլթա-  
նէն: Իրօք, 1896 թուին, Եւրոպայի ստիպումին տակ,  
Սուլթանը լաւ արամադրութիւն մը ցոյց տուած էր, կը  
հանէր առաջին իրատէ մը, որ կը բարեկարգէր Մակե-  
դոնիան և որ շատ աւելի բարեփոխումներ կը բովան-  
գակէր, քան մենք կը պահանջէնք այսօր: Այդ իրա-  
տէն պաշտօնապէս հազորդուած է, ապրիլ 24-ին, մեր  
արտաքին գործերու նախարարին՝ Վ. Պոլսոյ մեր գեսպան  
պ. Կամպօնի միջոցաւ: Այսօր մեռեալ տառ է յիշեալ  
իրատէն, անոր մասին այլևս չեն խօսիր ու կը պահան-  
ջենք անհունօրէն նուազ, քան թէ արդէն ձեռք բերած  
էինք 1896-ին:



23 տարի է նոյնպէս, որ Մակեդոնիան խնդրոյ առարկայ դարձեր է: Պէրլինի դաշնագրին հետևանքով՝ Կ. Պօլսոյ մէջ գետապանախորհուրդ մը տեղի ունեցած էր, նպատակ ունենալով կարգ ու սարքի բերել վերակազմուած Եւրոպական թուրքիան: Գեո Նոր կը ջնջուէր Սան-Ստեֆանօյի դաշնագրով ստեղծուած Մեծ-Բուլկարիան ու զգալի էր Պէրլինի դաշնագրին գործադրութեան պէտքը: Եւրոպան յանձնառու ըլլալով նոր թուրքիա մը վերականգնելու պատասխանատուութեան պարտաւոր էր անոր գոյութեան պայմանները որոշել: Մեծ պետութիւններու միջև կատարուած այդ խորհրդաժողովէն ծնաւ, 1882 թուականին օգոստոս ամսոյ մէջ, այն ծրագիրը, որ կոչուեցաւ կազմական ծրագիր կամ սահմանագրութիւն Մակեդոնիայի:

Ամեն տեսակէտով սքանչելի սոյն ծրագիրը զրկուեցաւ Բարձրագոյն Գուման, որ դրականօրէն խոստացաւ ոչ միայն քննել զայն՝ այլև գործադրութեան յանձնել: Բայց այդքանէն անդին չանցուեցաւ, ու այդ ժամանակէն յետոյ անոր մասին ոչ խորհուրդեցաւ և ոչ ալ խօսք անցաւ: Ժամանակը սահեցաւ, դիւանագիտութիւնը ուրիշ մեծ գործեր ունէր ընելիք, ու, այսօր, երբ խնդիրը վերստին ձեռք կ'առնուի՝ 1896-ի կամ 1882-ի հողին վրայ չէ երբէք, այլ բոլորովին անտեսելով՝ ինչ որ այդ պահուն ձեռք բերուած էր: (Ժափահարութիւններ):

Այսքանով չի վերջանար: Զբոնեցինք գոնէ այնտեսակ դիրք մը, ուր անպարտելի դառնայինք Գուման հանդէպ, այդ կարգի երկու դիրքեր կան, երկու անդիմադրելի գէնքեր: Մէկն է՝ յենարան ունենալ համաշխարհային խղձամանքի վճիռը, քաղաքակիրթ աշխարհին ու մարդկային սեռին արձակած դատապարտութեան հրամանը շայտատանի դահիճին դէմ: Միւսն է՝ վկայութեան կանչել արձանագրուած իրաւունքը, պայմանագրուած օրի-

նական պահանջը՝ այնպէս ինչպէս կը հետևի այն բոլոր դաշնագիրներէն, որոնք ստորագրուած են երկուստեք: Պէրլինի դաշնագիրը երկու յօդուածներ, այսինքն 23-րդ ու 61-րդ յօդուածները չէ որ կը պարունակէ, որոնք միայն սպիպողական թուին սուլթանին յիշեցնել: Աւելին կայ դեռ. ամբողջ դաշնագիրը գոյութիւն ունի, այն հանդիսաւոր գործը՝ որուն զօրութեամբ և որով միայն գոյութիւն ունի ան: Արդ, ներկայ բանակցութիւններու մէջ, 23-րդ ու 61-րդ յօդուածներէն զատ, ամեն բանի մասին կը խօսուի, յօդուածներ՝ որ կը պարունակեն անհրաժեշտ լուծման սերմը, բայց պէտք չէ կարծել, անոնց առթիւ, որ միակ օգտակարները ըլլան: Որովհետև, երբ դաշնագրի վրայ է խնդիրը, հարկաւոր է աչքի առջև ունենալ Պէրլինի դաշնագիրը, ինչպէս նաև բոլոր դաշնագիրները, այսինքն Պէրլինի դաշնագիրը, իր ամբողջութեամբ, Փարիզինը՝ 1856-ին, ու վերջապէս, այն ամեն պայմանագրութիւնները, որոնցմով Եւրոպան վերակազմեց թուրքիան, զայն առաւ իր պաշտպանութեան տակ ու իր ձեռնասուները դարձուց օսմանեան պետութիւնը. այս վերջինին խնամակալն է ան, հետևաբար անոր պատասխանատուն, ու այդ պատասխանատուութիւնը թօթախելու իրաւունքը չունի: (Ժափահարութիւններ):

Վերջապէս, ու ասիկա իմ ետքի քննադատութիւնս պիտի ըլլայ, այդ ծրագիրը ինձ չի թուիր միայն տարօրինակօրէն վատ յառաջացած: Ինչպէս կուգան առաջարկելու մեզ բարեկարգութիւններ՝ որոնց մէջ չեն շօշափեր ոչ զինուորական խնդիրը, ոչ արդարութեան խնդիրը և ոչ ալ տուրքերու հիմնական բարեփոխումը, քանի որ կը շօշափեն միայն տասանորդի տուրքը. մեզ կուտան կառավարիչ մը որ, անտարակոյս, աւելի լաւ պիտի ըլլայ քան այսօրուայ վալիները — դժուարին բան մը թէև ընելիք



չունի,— բայց որ պիտի գտնուի Երբբայց մարդուն ձեռքերուն մէջ. մեզ կ'առաջարկեն ոստիկանութիւն մը, որ հաստատուն շրջանակներ չպիտի ունենայ՝ առանց զինուորուած ըլլալու եւրոպացիներէ: Գեռ չվերջացաւ: Եթէ նոյնիսկ առաջարկէին մեզի այն՝ որուն կը բաղձայինք, եթէ նոյնիսկ ներկայացնէին մեզի հիանալի սահմանադրութիւն մը, խմբագրուած ձեռնհաս օրէնսդէտէ մը անթերի մարդոց համար, պիտի յայտարարէի, դարձեալ որ այդ բոլորը ո՛չ մէկ բանի պիտի ծառայէր՝ մինչև որ անոր մէջ չաւելցուէր այն անհրաժեշտ պայմանը, որ երաշխաւորութիւնն է Թուրքիայի մէջ կիրարկելի ամեն տեսակ բարեկարգութիւններու, այսինքն Եւրոպայի հսկողութիւնն ու քննչութիւնը՝ յանձնուած մնայուն մասնախմբի մը: Ահաւաստիկ յաջողութեան պայմանը: (Գրկնակի ծափահարութիւններ):

Այն բոլոր բարեկարգութիւնները, որոնք իրականացած են Թուրքիայի մէջ — քանի մը հատեր կան, որ յիշեցուց ձեզի իմ պաշտօնակից, պ. Վոշէն — իրականացած են, որովհետեւ անոնց գործադրութիւնը արթնօրէն հրահեւելու և ստուգելու բացարձակ անհրաժեշտութեան ներշնչուած են: Որքան ատեն որ սուլթանի քմահաճօքին թողուի իր խոստումները պահելու հոգը, միշտ պիտի խաբուինք. անոր ետին կանգուն կեցած՝ զայն իր բոլոր գործերուն, դիտաւորութիւններուն ու քայլերուն մէջ հսկելով միայն՝ ձեռք պիտի բերենք անհրաժեշտ արդիւնքը: (Ծափահարութիւններ):

Հետեալ բարձրագոյն հանդերձ այն բարեացակամութիւնը, որուն սպասցոյցը տուաւ մեր արտաքին գործերու նախարարը, ընդունելով հանդերձ որ եղաւ վայրկեան մը՝ ուր թուեցաւ թէ ան ունեցաւ ծանր մտահոգութիւն մը Արևելքի մէջ պատահելիքներուն վրայ, ստիպուած եմ յայտարարել թէ՛ վերստին հանդիսատես

ըլլալու ենք այն երևոյթին, զոր ես պիտի անուանեմ եւրոպական համերաշխութեան սնանկութիւնը և նենգաւորութիւնը Եւրոպայի մէջ:

Համառօտակի կերպով ուրուագծելէ առաջ այն լուծման ձևը, զոր ես ժամանակայարմար և անհրաժեշտ կը դատեմ, կ'ուզէի փնտռել թէ ինչ են պատճառները այդ սնանկութեան, որ եւրոպական դիւանագիտութեան գործառնութիւններու պահուն, այդքան յաճախ կը յայտնուի Արևելքի մէջ: Այդ պատճառները որոշել զբւար չպիտի ըլլայ ինձ: Նախ՝ գոյութիւն ունի հաս մը, որ խիստ ընդհանուր է և զոր պարտաւոր ենք միշտ առաջ բերել, երբ նոյնիսկ խօսինք արեւմտեան ազգերու անհանգստութեան մասին. այդ Եւրոպայի զինուած խաղաղութեան վիճակն է. ու այդ զինուած խաղաղութեան վիճակը բաւական նորօրինակ հետեանք մը կ'ունենայ. ամբողջ աշխարհ սպառազինուած է ու իւրաքանչիւր զք կը վախնայ թէ մի գուցէ ամենաչնչին շարժում մը ընելով իր դիզած ուժերու մէկ աննշան մասը գործածելով՝ տեղի տայ կատաղի շղթայեղեքծումի մը: Մարդ չի յանդրգնիր տեղէն խլրտալ և ուժերու այդ կուտակումի այլանգակ արդիւնքը տկարութիւն մըն է՝ ընդհանուր ու համաշխարհային: (Որոտընդոստ ծափահարութիւններ):

Ուրիշ պատճառ մըն է դիւանագիտութեան իւրացուցած մէկ անտեղի սովորութիւնը Արևելքի խնդիրներուն մէջ, որով ան կը բանաձևէ ինչ որ ես պիտի անուանէի վարդապետական սկզբունքներ, այսինքն կ'առնէ փորձառութիւններու արդիւնքը, որ կիրարկելի է Արևելեկան խնդրին այսինչ շրջանին և ո՛չ այսինչին, անով կը շինէ բնավճիռ մը (սկսիում), զայն կը յայտարարէ իբր հիմնական սկզբունք մը և ի գործ կ'ածէ ամեն տեղ և ամեն ժամանակ: Արդ, Արևելեկան խնդիրը՝ յորմէհետէ գոյութիւն ունի, անդադար իր երևոյթը փոխած



է: Իր սկզբնաւորութեան մէջ, ան արհաւիրքը գարձաւ Եւրոպայի ներկայանալով արշաւանքովը թուրք ցեղին, որ տիրած էր Կ. Պոլսոյ ու կը սպառնար Երևանտարին: Արայ հասաւ կարծէք մի նոր գարուն, քրիստոնէութեան ոգիի ու խաչակրութիւններու, բայց այդ շուտ վերջացաւ: Նորին քրիստոսապաշտ վեհափառութիւնը Ֆրանսուա Ա. ու նոյնիսկ մեր սրբազան-հայր Կղեմէս պապը շտապեցին ձեւափոխել այդ քաղաքականութիւնը ու մինչև անգամ ուղեցին տեսնել թուրքերուն մէջ ո՛չ միայն քրիստոնեային ուխտեալ թշնամին, այլև այն ուժը, որ յարմար էր ձգելու կշռին միւս նժարը՝ փոփոխելու համար եւրոպական հաւասարակշռութիւնը: Այդ քաղաքականութիւնը օժտուեցաւ Ֆրանսուա Ա. -էն, որ բանակեցաւ պայմանադրութիւններու մասին, ձեռք բերաւ աւետարական ու կրօնական առանձնաշնորհումներ և կնքեց դաշնագիրներ:

Սակայն, այս նոր շրջանին մէջ պահուեցաւ լեզուն նախորդ շրջանին ու շարունակուեցաւ խօսուիլ իբրև խաչակիրներ, թէև կը գործէին իբրև վաճառականներ:

Յետոյ վրայ կը հասնի ուրիշ շրջան մը. Ռուսիան կը սպառնայ թուրքիային. իր հողային սահմաններու մէջ ինքզինք ճնշուած զգալով՝ Ռուսիա պետքը կը զգայ Սև ծովու և Միջերկրականի վրայ արդիւնագործական կեդրոններ ունենալ միտքը կը դնէ տիրել Կ. Պոլսոյ ու կը սպասէ գարանակալ օսմանեան կայսրութեան ժառանգ դառնալու: Երևելեան խնդիրը, այդ թուականէն յետոյ, այլևս թուրքիայի ահարկու ուժին մէջ չի գտնուիր. կ'ենթարկուի, ամբողջովին, անոր անհանգստացուցիչ տկարութեան. կը ջանան այդ խախուտ կայսրութիւնը պահպանել ու ահա կը բանաձևեն օսմանեան կայսրութեան ամբողջութեան ու անկախութեան պահպանումի վարդապետութիւնը, և այդ օրէն

ի վեր այնպէս կը թուի, թէ միջազգային քաղաքականութիւնը բոլորովին կը պտուտկէ այդ մէկ հատիկ վարդապետութեան շուրջը:

Այդ շրջանի պահաւորումը եղաւ Խրիմի պատերազմը: Այս առթիւ, անգղիացի պետական անձնաւորութիւն մը, — որ յաճախ չափազանց մտացի և թափանցող խօսքերով համակշռած է՝ գործեր ու քաղաքական արարքներ, որոնց մէջ բարձր տրամաբանութիւն մը չէ փայլած, — լորդ Սոլըրպրի ըսած է՝ թէ Ֆրանսան ու Անգղիան դրանին դրած էին անպիտան ձիու մը վրայ: Սակայն, ատով հանդերձ, նուազ չվաստկեցան ձիարշաւէն. այո՛, այդ ժամանակ արդէն. Փարիզի համաժողովի միջոցին չըմբռնեցին, թէ քանի որ Եւրոպան կը պահպանէր Տաճկաստանը, քանի որ պատճառ կը դառնար տեւելուն կայսրութեան մը՝ որուն գոյութիւնը կը գտնուէր մէկ կողմէն դուրսի ու միւս կողմէն ներքին բազմաթիւ ազգաբնակչութիւններու ուժգին սպառնալիքին տակ, ազգաբնակչութիւններ՝ զոր այդ համաժողովը չկրցաւ կամ չուզեց ձուլել բարձր միութեան մը մէջ, ապա ուրեմն նա իր վրայ կ'առնէր ամբողջ պատասխանատուութիւնը անոր գոյութեան և պարտաւոր էր միջամտել լայնօրէն՝ կազմական բարեկարգութիւններով:

Երբ Ռուսիան իր վրէժը լուծեց, երբ 1877-ի պատերազմը պայթեցաւ, երբ Ալեքսանդր Բ. -ի բանակը Կ. Պոլսոյ դռներուն առջևը հասաւ, այն վայրկեանին, երբ կարելի եղաւ հաւատալ այլևս թէ սուրբ Սօփիայի տաճարը վերստին լինելու էր օրթոդոքսութեան մայրեկեղեցին, Եւրոպան ահա կը նետուի խրամատին առջև՝ պահպանելու համար օսմանեան կայսրութեան ամբողջութիւնն ու անկախութիւնը — և տեղի ունեցաւ Պէրլինի վեհաժողովը, ուր վերակազմուեցաւ Եւրոպական թուրքիան:



Այդ պահուն պատահեցաւ նոր յեղափոխութիւն մը: Ռուսիան երեւակայած էր, որ եթէ ստեղծէր շինծու կերպով անկախ տէրութիւններ, ենթարկելով զանոնք սուլթանին՝ հպատակութեան մը անուանական կապերով, իրեն համար յաճախորդներ կ'ապահովէր: Փորձը ըրաւ, ինչպէս միշտ ըրած են, ներկայ և ժամանակակից պատմութեան ընթացքին մէջ, այսինքն համոզուելու թէ՛ երբ ազգի մը անկախութիւն կը տրւի, անոր տրուածը, մանաւանդ, սրտի անկախութիւնն է: (Ծիծաղ): Փոխանակ Կ. Պոլսոյ ճամբուն վրայ իրեն օթեւաններ ու մթերանոցներ ստեղծելու, ցաւօք հաստատեց, որ այդ քաղաքը շրջապատած էր երրեակ պատով մը, գտնելով ինքզինք, դէմ յանդիման, փոքրիկ պետութիւններու, որոնք ամեն բանէ առաջ կը փափաքէին ինքնագլուխ ապրել ու հաղիւ թէ մտահոգէին Ռուսիոյ քաղաքականութեան ծառայելու: Անմիջապէս Պետերբուրգի դիւանատունը իր ուսին հրացանը փոխեց չզբաղեցաւ այլևս՝ յառաջ քշելու կէս-անկախ ազգութիւններու գործը, ու հաւատարիմ մնալով հանդերձ կարգ մը կէտերու վրայ իր աւանդական հովանաւորութեանը՝ Թուրքիայի մէջ գտնուող սլաւ ցեղին՝ ցարը որոշեց իր կարգին մղում տալ օսմանեան կայսրութեան ամբողջութիւնն ու անկախութիւնը պահպանելու գաղափարին, դառնալու համար սուլթանի լաւագոյն բարեկամը, վաստկելու անոր վստահութիւնը և թագաւորելու անոր երկիրներու վրայ:

Միւս պետութիւնները հասկնալու էին, թէ ռուսական քաղաքականութեան այս ամբողջական փոփոխութիւնը զիրենք ևս մղելու էր քաղաքականութեան համազօր փոփոխութեան մը և թէ, այնուհետեւ, իրենցն էր կարգը ըլլալ պղտիկ ազգութիւններու պաշտպանն ու հռչակել ինքզինքնին հպատակ երկիրներու խնամակալը: Այդ բանը բաւարար վճռողականութեամբ մը

իրականացնելու հասկցողութիւնը չունեցան: Ղարանուծի երկբայանքի, խարխափուծի այդ շրջանին մէջ էր, որ պատահեցան 1896-ի դէպքերը: Արեւմտեան դիւանագիտութիւնը վարանողական ու երկբայական գողցնէ իր ձեռին բռնուած՝ թողուց որ այդ ոճիրները կատարւին ու չկրցաւ ոչ զանոնք կեցնել, ոչ անոնց վերակրկնումը արգիլել և ոչ իսկ անոնց համարառուն ըլլալ:

Շատ կը վախնամ որ, այսօր ալ, մտնենք յարեւելման շրջանի մը մէջ, դեռ որոշել չյաջողելէ առաջ մեր քաղաքականութեան նոր սկզբունքները, և թէ նոր պատահարներ մեզի վերստին բռնեն անստուգութեան միւսնոյն յանցաւոր վիճակին մէջ:

Համաշխարհային այս անկարողութիւնը տակաւին ուրիշ պատճառ մըն ալ ունի. այն բոլոր բժիշկները, որ հրաւիրուած են գլխուն վերեւ անոր՝ զոր անուանած են շիւտաւոր մարդ, — բժիշկներ քանի՞ն աղէկ, բրժիշկներ քանի՞ն գէշ, — միայն բժիշկներ չեն, այլև, միևնոյն ատեն, մտաւոր ժողովուրդներ: Աւ իւրաքանչիւր անգամ, երբ դարման մը կը սահմանեն, կը հարցնենք մենք մեզի թէ, արդեօք, հիւանդութիւնը բուժելու դեղ մըն է տրուածը, կամ թէ, ընդհակառակը, նիւթ մը փութացնելու համար անոր վախճանը: (Ծափահարութիւններ եւ ծիծաղ):

Տեսէք, իրօք, թէ ինչպէս, Էւրոպայի կասկածելի շահերուն միջամտութեամբ, այս բոլոր խնդիրները կնճռուտած ու մոայլած են: Հայկական խնդրին առթիւ, օրինակի համար, ո՞վ չըմբռներ թէ եղականօրէն կնճռուտած է ան և այլասեռուած Ռուսիայի Անատոլի նկատմամբ սնուցած, օրինաւոր կամ ոչ, տենչանքներով: Նմանապէս Մակեդոնիայի առթիւ, ո՞վ չըմբռներ թէ անոր հարցն ալ հաւասարապէս կնճռուտած է ու խառնակուած՝ այս անգամ Աւստրիայի տենչանքներով, որ չէ հրաժարած



երբէք իր սահմանները մինչև Սելանիկ տարածելու դիտաւորութեանէն, որ մոլեկան ցանկութեամբ մը կը սեւեռէ հին Սերբիան ու հոգեկին կըրձայ իր իբր թէ ժամանակաւոր տիրապետութիւնը Բոսնիայի ու Հերցեգովինիայի վրայ՝ երկարաձգելը: Միայն Իտալիան էր պակաս, որ կը թուէր թէ երբէք պարտաւոր չըլլար խառնուելու բալկանեան կռիւներուն մէջ, և սակայն ժամանակէ մը ի վեր անզուսպ ցանկութիւն մը կը տածէ գէպի Եպիրոս ու Ալպանիա:

Աւելցուցէք ասոր, որ մտած ենք արդէն, քանի մը տարիներէ ի վեր այն ճամբուն մէջ, ուր նիւթական շահի իրապաշտ քաղաքականութիւնը նախամեծար կը համարուի՝ բարոյական շահի և բարոյական պարտաւորութիւններու իդէալ քաղաքականութեանէն: Աւ ձեզ ծանօթ է, թէ ինչ է սկզբնապատճառը այդ ձեռնաձիրական քաղաքականութեան, որուն տեղի տուաւ պատուոյ և լաւ ըմբռնուած ընդհանուր շահի քաղաքականութիւնը. այդ բանին նախակարապետը եղաւ կայսերական Ղօհէնգրինը, կարապեան ասպետը, որ առաջին անգամ իր պողպատեայ ձեռնոցով ծածկուած ձեռքը դրաւ Երլըրը-բէօշկի մենակեացին արիւնով կասկարմիր ձեռքին մէջ: (Նրկարատնւ ծափահարութիւններ):

Ամբողջ Եւրոպան անոր ետեւէն մտրձելով այդ ճամբուն մէջ՝ գտաւ Թուրքիայի ծոցը հարուստ ու կոյս հող մը, արդիւնաբերութեան պատրաստ հանք մը ու ըսաւ ինքնիրեն թէ՝ ապահովելու համար նոր շահաստաններ ու օգուտներ, առանց ազոր արդէն դիզուած եւրոպական դրամագրութիւններուն, կ'արժէր ներել քանի մը ոճիրներ և պարտիկէ կարգ մը գայթակղութիւններ: (Ժափահար):

Վտանգը հոն է՝ որ այդ քաղաքականութիւնը, որ ինքզինք իրապաշտ կը կարծէ, որ մեզի կ'ազդարարէ քաղաքականութեան խուսափող, որ մեզի կը յայտա-

րարէ թէ երազողներ ենք և թէ երազէն աւելի վնասակար բան չկայ, ենթարկուած է ահարկու զարթնումներու, և ես կը վախնամ թէ ան մեզի առաջնորդէ, անգամ մը ևս, պատերազմի մը, որ աննշան ու պղտիկ պատերազմ մը չպիտի ըլլայ, որ պիտի նմանի այն անհաւասար գօտեմարտութեան, զոր թող տուինք ծագելու Թուրքիոյ և Յունաստանի միջև, և որ եղաւ տարաբնոյթ, բայց տրամաբանական պսակաւորումը՝ Հայաստանի մէջ եւրոպական համերաշխ գործունէութեան և անգործութեան:

Բարբարոսութեան այս զգեստնիչ յետագարձին բըռնակալի մը այս ոճրագործ արարքին առջև՝ Եւրոպան ձգեց որ Յունաստանը դառնապէս պարտուի Թէսալիայի դաշտերուն մէջ: Խնդիր է գիտնալ, թէ Բուլկարիայի համար ևս՝ Եւրոպան միւլնոյն կերպով պիտի վարուի այսօր: Արդ, պէտք չէ մենք մեզմէ ծածկենք անողոր ճշմարտութիւնը. եթէ Եւրոպան թոյլ տայ գործադրութիւնը արիւնահեղ ճնշումի մը՝ որ ընդհուպ Մակեդոնիայի դաշտերուն մէջ՝ կոտորածներու պիտի փոխուի, անխուսափելիօրէն յառաջ պիտի գայ բուլկարական պատերազմ մը, ու եթէ առաջ գայ բուլկարական պատերազմ մը՝ կրնանք կանխատեսել թէ ինչպէս ան պիտի սկսի, բայց ոչ որ պիտի համարձակի ըսել թէ մինչև ո՛ւր պիտի ծաւալի ան և թէ ինչպէս պիտի վերջանայ: Սերբիան և Յունաստանը ինքզինքնին ստիպուած պիտի կարծեն անոր մասնակցիլ, ու ասպարէզ պիտի ելլեն: Եւ իրօք, տարօրինակ քաղաքականութիւն մը վերջերս սկսած է զօրանալ Յունաստանի մէջ: „Հէթէրիա“ կոչուած ընկերութիւնը կը հետեւի ուշագիւր բորբոքի ձառերուն կարգ մը պրօֆէսօրներու, ինչպէս պ. Վասսախ, որոնք կ'ուսուցանեն թէ մեծ գաղափարը իրականացնելու համար՝ հարկ է, որ Յունաս-



տանը թուրքիայի գործիքը դառնայ ու ձեռք կարկառե բռնապետութեան Մակեդոնիայի մէջ: Անտելի է արդեօք վախնալ, որ այդ պայմաններուն մէջ երբ Մակեդոնիան կուռի փակուած դաշտը դառնայ թուրքիայի և բուլկարիայի միջև, Յունաստանը ևս այնտեղ նետուի և որ այդ յորձանքէն տարուի ամբողջ Եւրոպան: Ահաւասիկ թէ ինչ ըրած պիտի ըլլայ այդ քաղաքականութիւնը, որ ինքզինք խոհեմ ու իրապաշտ քաղաքականութիւն մը կը հռչակէ և որ քաղաքականութիւններուն ամենէն յանդուգնն է: (Ժափահարութիւններ):

Չունինք, ի հարկէ, ծիծաղելի անձնագոյութիւնը՝ չունենարով ձեռքի տակ հարկաւոր տարրերը, ներկայացնել կարենալու այդքան կնճռոտ խնդիրներու համար մանրամասն լուծումներ, գծելու ծրագիր մը, որուն պարտաւոր ըլլայ քայլ առ քայլ հետևել արտաքին գործերու նախարարը: Ինչ որ կրնանք ընել այն է՝ ցոյց տալ այդ ծրագրին ընդհանուր գծերը, բանաձևել խնդրին որևէ լուրջ կարգաւորութեան ընդհանուր պայմանները:

Այդ պայմաններն են, առաջին՝ բնաւ չը ներել, որ Հայաստանի խնդիրը բաժնուի Մակեդոնիայի խնդրէն: Երկրորդ՝ թոյլ չը տալ, որ մուցուին այն քայլերը, որոնք արդէն առնուած են բարենորոգումներու ճամբուն մէջ, այսինքն 1895-ի մեմորանտումը, 1896-ի այնքան դժուարութեամբ ձեռք բերուած պայմանագրութիւնը ու բոլոր այն միջոցները՝ որոնց վրայ այլևս չի խօսուիր, իբրև թէ բնաւ գոյութիւն ունեցած չըլլային: Նոյնպէս արդելք հանգիստնալ, որ ղանցառաբար, չը պատառեն Պէրլինի դաշնագիրը և չանհետանան 23-րդ և 61-րդ յօդուածները: արդիւլել, վերջապէս, որ ինչ ալ ըլլան ընդունուած բարեկարգութիւնները, ինչ ալ ըլլայ այն ծրագիրը, որ սուլթանին վաւերացմանը պիտի ենթարկուի, հոն անփոյթ չգտնուին աւելցնելու պայման

մը, որ բացարձակ իրաւունք տայ, թէ բարեկարգութիւններու գործադրութեանը պիտի հսկուի և ստուգուի եւրոպական գործակալներէ և հիւպատոսներէ կազմուած մնայուն մասնախումբէ մը: (Ժափահարութիւններ):

Ինչ որ կը վերաբերի այն մեծ բարեկարգութիւններու գործադրութեան մանրամասնութիւններուն, որոնք կիրարկուելու են Հայաստանի և Մակեդոնիայի մէջ, դժուար է գտնել՝ ընդունուելիք դրութեան ընդհանուր գծերը՝ նախընթաց և արդէն կատարուած բարեկարգութիւններու մէջ: Այդ երկու երկիրներուն համար հարկաւոր են կառավարիչներ, որոնք պէտք է տարամերժօրէն սուլթանէն ընտրուին, այլ անոնց անուանումը անհրաժեշտ է որ կրէ եւրոպական պետութիւններու վաւերացումը և որոնք կարելի չպիտի ըլլայ պաշտօնանկել, առանց այս վերջիններուն հաւանութեան: Այդ պահուն հարկ պիտի ըլլայ արդարութիւնը իր հիմքէն բարեփոխել՝ դատարաններու մուտքը բանարով քրիստոնեաներու առջև այնքան՝ որքան մահմեդականներուն, բարեփոխել դատավարական ձևը՝ հաւասարապէս թոյլատրելով իսլամութեան չպատկանողներուն ևս՝ վայելել արդարութեան ազատ պաշտպանութիւնը: Հարկ պիտի ըլլար բարեփոխել դարձեալ ոչ միայն տասանորդի դրութիւնը, այլև սուրբերու ամբողջ դրութիւնը: Հարկ պիտի ըլլար կերպարանափոխել ոչ միայն քաղաքապահ զօրքերու կազմութիւնը այլև՝ ոստիկանութիւնը ու սաեղծել խառն զինուորութիւն մը, որուն մէջ կարևոր դերը ստանձնէին եւրոպացիները: Հարկ պիտի ըլլար այդ երկու երկիրներուն մէջ կիրարկել Արևելեան բուլկարի բեժիմը: Այս վերջինին համար ևս, հարցը սկիզբէն հաւասարապէս դժուար թուած էր: Գիւանագէտները կ'ըսէին, թէ բաղխելու էին անլուծելի կնճռոտութիւններու: Կը պնդէին, թէ այդ երկիրը, ուր գոյութիւն ունին իրարու ղխերիմ



բազմաթիւ ցեղեր՝ թուրքեր, պուլկարներ, յոյներ՝ չէր կրնար խաղաղօրէն ապրիլ, բայց եթէ սուլթանին բռննապետական լուծին տակ: Չունկնդրուեցաւ այդ կրքկրոցներուն, վատ խորհրդատուներուն: Յանձնախումբ մը գործի սկսաւ ու այնքան լաւ կերպով յաջողեցաւ, որ Արևելեան Գումէլին զոր Եւրոպան Պուլկարիայէն բաժնելով, թուրքիային յանձնելու տարօրինակ քմահաճոյքը ունեցած էր, պարզապէս վերագարձաւ և ինքնաբերաբար կցուեցաւ Պուլկարիայի, ու այդ գործողութիւնը տեղի չտուաւ նոյնիսկ որևէ թեթիւ ալիքի, ջուրին մակերևոյթին վրայ:

Այլ համարձակինք յուսալ որ նոյն բանը տեղի ունենայ նաև Հայաստանի և Մակեդոնիայի համար: Ա՛ռողջեմ խօսքս Ֆրանսայի քաղաքականութեան արդի ներկայացուցչին կը յայտարարեմ իրեն, որ մենք անոնցմէ չենք որ իրեն հետ կուտելու պատրուակ կը փնտռեն. բոլորովին պատրաստ ենք իր ցոյց տալիք արժանաւորութիւնը ճանչնալու և գնահատելու: Գալով ինձ, եթէ քննելով ինքն իր մէջ, չէի գնահատած զինքը պէտք եղածին պէս, ընդհակառակը՝ չափազանց պիտի գնահատէի իր առաւելութիւնը, երբ բաղդատէի զինքը իր նախորդներուն այս կամ այն մէկին հետ. (Ժափահարութիւն): Այլ գտնեմ, որ մեր արտաքին գործերու քաղաքականութեան ոգին այդ ժամանակէ ի վեր փոխուած է. այլևս մեր դիւանագիտութեան պետ չունինք մարդ մը, որ համակերպի սատանայի փաստաբան դառնալու, որ ուրանայ իր սեփական գործակալները, որ այլայլէ ճշմարտութիւնը, որ հրատարակէ Գեղին Գրքեր՝ որոնց մէջ ջրկատոր եղած են ամենէն կարևոր տեղեկագրութիւնները և կեղծուած է պատմական ճշմարտութիւնը: (Ծրկարատու ժափահարութիւններ ու „Անկցի Հանձնումն“ գոռումներ):

Ու կը դառնամ, հետեւաբար, մեր արդի արտաքին

գործերու նախարարին և թոյլ կուտամ ինձ՝ իրեն ըսելու, թէ իր քաղաքականութեան ալ թերևս կը պակսի քիչ մը շունչ ու կորով, թէ կը գոհանայ էն ետքը, քիչ մը ուսմիկ մարդասիրութեամբ մը, որ յաճախ, առնուազն մտածուով, տարիով մը, ուշը մնացած ըլլալու խոհեմութիւնը կը փայլեցնէ: Թէ բաւական չէ հրապարակ հանել ոճիրը, երբ արդէն գործուած է ան, թէ բաւական չէ անհատական կարգ մը պատահութիւններու մէջ յաջող թաղմանականներ կարգալ և զոհուածներու գերեզմաններուն վրայ տապանագրեր արձանագրել, այլ անհրաժեշտ է, ամեն բանէ առաջ կանխաւ արգիլել ոճիրները և պատժել անոնց հեղինակները (Ուժգին ժափահարութիւններ):

Չինքը շնորհաւորելով՝ այլևս փորձած չըլլալուն համար բանեցնել մեծ քաղաքականութիւն, այսինքն արհեստ փորրիկ պատրուակներով, ու չը ձգտելուն՝ կատարել մեծամեծ գործեր, խուսափելով նուիրական պարտականութիւններէ, կը հարցնեմ ես ինձի, թէ արդեօք, տակաւին լաւ ըմբռնած չէ՞ պ. Տէլքասէ ամբողջ մեծութիւնը առիթին, որ իրեն կը ներկայացնէ արդի ծանր ու վտանգաւոր կացութիւնը՝ բայց որ միևնոյն ժամանակ նպաստաւոր է վճռական լուծումներու, վերջնական կարգադրութիւններու՝ Արևելքի մէջ:

Եւ սակայն իրաւունքը ունիք իրեն յիշեցնելու թէ, եթէ կայ պետութիւն մը, որ լաւապէս օժտուած ըլլայ՝ այդ ձեռներեցութիւնը կարենալ ստանձնելու, այդ Ֆրանսան է: Միթէ՞ ինքը անձամբ այդ ճամբով փորձեր չէրած վերջերս: Թէպէտև չենք կրնար ըսել որ մեր արտաքին քաղաքականութիւնը փառապանծ ճառագայթաւորում մը ունեցած է, թէպէտև յաճախ ան թուած է ծառայել շահերուն դաշնակցութեան մը, որ երբեմն երևոյթը ունի մեզ կաշառելու հատուցական պատրանք-



ներով, փոխարէն այն չափազանց իրական զոհողութիւններուն, զոր մենք կ'ընենք անոր՝ Արևելքի մէջ: (Կրկնակի ծափահարութիւններ):

Չունի՛նք միթէ իրաւունքը իրեն մասնանիշ ընելու թէ՛ ինչ ինչ կէտերու վրայ քաղած ենք կորովի գործունէութեան մը պտուղները: Այո, օրինակի համար, ուրուական մը, զոր անդադար կը շարժեն անոնց առջև՝ որոնք կ'ուզեն գործել Արևելքի մէջ: Անոր հետքը ես գտայ, մեր Ա. Պօլսոյ արդի գեսպանին մէկ նշանակալից հետագրին մէջ, որ կը յայտնէ, թէ կարելի չէր սեւէ բան ընել առանց պետութիւններու միաձայնութեան:

Պետութիւններու միաձայնութիւնը: Անտարակոյս, անկարելի է զայդ իրականացնել: Տեսանք, թէ ինչ եղաւ 1896-ին՝ եւրոպական Համերաշխութիւնը, յաջողեցանք ստուգել թէ պետութիւններէն իւրաքանչիւրը կը վտանդիր ուժերը՝ կազմալուծելու համար միւսներուն գործունէութիւնը: Արդ, պէտք է այդ մէթոտէն հրաժարիլ: ու ա՛գոր փորձը կատարուեցաւ ալ: Եթէ պիտի չըսեմ՝ լուծեցին, խօսքը չափազանց յաւակնոտ պիտի ըլլար, այլ մտցուցին լուծման ճամբուն մէջ՝ Կրեաէի խնդիրը, որովհետև այդ ատեն պետութիւններու միաձայնութեան ուրուականը առաթուր հալածուած էր և դիմուած էր պարզապէս անոնց, որոնք կը բողձային յօժարութեամբ գործել: (Ծափահարութիւններ):

Այդ միւսնոյն դիւանագէտները մեզ կը կրկնեն միշտ, թէ պէտք չէ մեր գործունէութեան մէջ սպառնական շեշտ մը դնենք. թէ խիստ վտանգաւոր պիտի ըլլար եւրոպա-բէօշկին հետ դրական լեզու մը գործածելը: Բայց ինչո՞ւ երբ խնդիրը կը դառնար ո՛չ թէ մարդկային սեռի խղճմտանքին, ոչ թէ մարդկութեան երեսին նետուած անլուր օձիրներու զսպումին, ոչ թէ մի-

ջազգային պարտականութիւններու գործադրութեան՝ այլ պարզապէս, հասկնալիս իսկ վաւերական պարտապահանջուններու շուրջը, Գրանսան երբէք չվարանեցաւ զրկել իր զրահաւորները Լէսպոս ու իր թնդանօթները—որ միշտ վառօդի խօսքին պէտքը չունին՝ որպէսզի լսուին մինչև եւրոպա-բէօշկին խորը—ուղղելու Միտիլլիի վրայ: Արովհետև այդ պահուն խնդիր էր՝ ծառայեցնել Միջերկրականի նաւախումբը իբր անհերքելի վկայ Թիւրքիի մը ու Լօրանսօի մը (Ծափահարութիւններ): Գալով ինձ, առանց բողբջելու հոս այդ քայլին դէմ, կը փափաքէի, որ պաշտօն ապիր այդ պողպատէ հրէշներուն, ըլլալու ազգաբարութեան ու պատժապահանջութեան յանձնակատարները՝ ո՛չ միայն յանուն շահագէտներու, այլև յանուն մարդկային խղճմտանքին, յանուն Գրանսայի պատմական համբաւին: (Վերստին ծափահարութիւններ):

Ահաւասիկ այդտեղ է՝ ինչ որ կը սպասենք ձեզմէ, ու ահաւասիկ այդտեղ է՝ ինչ որ կը սպասեն մեզմէ այն դժբախտ ժողովուրդները, որոնք կ'ապրին տակաւին մահուան ստուերին մէջ, որոնց հեծեծանքները, յուսահատութեան աղաղակները կը լսենք, և որոնք չեն դադրած իրենց աչքերը դարձնելէ դէպի Գրանսոս: Այն օրը, երբ անոնք լսած էին, թէ այդ զրահաւորները կը նաւարկէին Միջերկրականի վրայ ու կը մտանային Փոքր-Ասիոյ եզերքներուն, ցած ձայնով իրարու կը կրկնէին այդ յոյսը, ուրկէ չեն ուզեր հրաժարիլ չէին կրնար հաւատալ, թէ պարզապէս կասկածելի պահանջներու համար էր, որ շարժեր էին այդ ուժերը ու կ'երևակայէին թէ իրենց համար հոն գացած էին մեր նաւերը: (Ծափահարութիւններ):

Պէտք չէ որ յաւիտենապէս խաբենք այդ յոյսը: Համոզուած եմ որ զրական, վճռական ու ի հարկին, սպառնական դիրք մը յանձն առնել բաւական պիտի



ըլլայ՝ ձեռք բերելու — շատ դիւրութեամբ, որ պիտի զարմացնէ մեր նախարարները — այն արդիւնքները՝ որոնց ետեւէն կը վազենք: Բայց պէտք է խոր կերպով հաստատել մտքին մէջ սա գաղափարը թէ՛ չարաչար սխալում մըն է երեւակայել, որ քաղաքականութեան մը միջակութիւնը ապահովութեան մը երաշխիքն է: (Ծափահարութիւններ): Կը գտնուինք ժամու մը առջեւ, ընդհակառակը, ուր պէտք է պարզել մեր բոլոր ուժը՝ վերականգնելու համար մեր իրաւունքը:

Ահա թէ ինչ ընելու եկած ենք հոս, և մենք որ հորիզոնին ամենէն ներհակ կէտերուն վրայ դիրք բռնած ենք, մենք որ չափազանց կը յարգենք մեր սեփական գաղափարները՝ նոյնպէս ևս մեր մրցակիցներուն՝ ու կը խնայենք այդ խորունկ բաժանումները, մենք որ տարակարծիք ենք ոչ միայն սկզբունքներու կիրարկութեան, այլ նոյնիսկ սկզբունքներու վրայ, մենք համակարծիք կը գտնուինք անհրաժեշտ գործունէութեան մը հողին վրայ Արեւելքի մէջ, ու այդ համաձայնութիւնն է որ կուտայ արժանաւորապէս այս ցոյցին միջազգային բարձր արժէք մը և բարոյական կարեւորութիւն մը: Այս տագնապալից ժամուն մենք խորհեցանք, թէ վայրկեանը հասած էր, ուր Ֆրանսական կարծիքէն բղխած միաձայն ցոյց մը, վերակոչելու համար Հանրապետութեան կառավարութիւնը դէպի Ֆրանսայի աւանդութիւնները, յիշեցնելու անոր իր պարտաւորութիւններն ու ճշմարիտ շահերը՝ ոչ միայն ժամանակայարմար էր՝ այլև անհրաժեշտ: (Որոտընդոստ եւ երկար ծափահարութիւններ):

Ճ Ա Ռ Պ Ժ Ա Ն Ժ Օ Ր Է Ս Ի

(Պատգամաւոր Տարնի)

Տիկնայք և Պարոնայք,

Չեր լսած այնչափ յուզիչ, այնչափ կորովի և միևնոյն տտեն այնչափ չափաւորուած ճառերուն ոչինչ ունիմ աւելցնելու. միայն ես կուգամ քանի մը հակիրճ խօսքերով ձայնակցիլ այն եղբակացութիւններուն, որոնք ձեւակերպուեցան ձեր առջև:

Բոլոր կուսակցութիւններուն պատկանող ճառախօսներու և քաղաքացիներու հոս ժողովումը բաւականաչափ նշան մ'է, որ Հայաստանի և Մակեդոնիոյ խընդիրը մին է մարդկային այն տարրական խնդիրներէն, որոնց վրայ համայն մարդկութեան, բոլոր քաղաքակիրթ երկիրներուն համաձայնութիւնը կրնայ և պարտի իրականանալ: Կա ցոյց կուտայ նաև, որ հնչած է ժամը՝ կոչ ուղղելու Եւրոպայի կարծիքին, զայն յուզելու. նա ցոյց կուտայ դարձեալ, որ ձեր մտքին մէջ Ֆրանսայի կարծիքը զանցառելի քանակութիւն մը չէ: (Ծափահարութիւն):

Այն դժուարութիւններու ու վտանգներու շնորհիւ զորս կը պարունակէ մակեդոնական հարցը՝ ամբողջ Եւրոպան կը հատուցանէ այս պահուս փոխարէնը այն ընթացքի, որ պետութիւնները բռնած էին և թող տարի առաջ Հայաստանի խնդրոյն մէջ:

Անշուշտ մեծ ոճիր մ'եղաւ այդ երկարատև տգիտութիւնն ու անտարբերութիւնը, որոնք սբողեցին մի



երկարատե ոճրագործութիւն, և ի զուր տեղ այսօր  
ժողովուրդները պիտի կարենային բերել մեզ այն կո-  
ղովուտները, այն շահերը զորս նոքա ըրած են իրենց  
կոյր մեղսակցութեամբ Մեծ-Վարդասպանին հետ: (Ծափ.):

Ի զուր տեղ մին պիտի կրնայ ցոյց տալ Փոքր-Նսիոյ  
մէջ երկաթուղիներու իր արածութիւնները, միւսը՝  
Վ. Պօլսոյ քարափներուն շահագործումը: Երբ մեր առջև  
կը բարդեն այս առաւելութիւնները, որպէսզի կարենանք  
մոռնալ կը յիշեմ անդիմադրելիօրէն, թէ ինչպէս աւելի  
քան դար մ'առաջ գերութեան մասին վէճի մը միջոցին  
մեծ Ուիլբերֆօրս սքանչելի կերպով յիշեց Շէքսպիրի  
մէկ տողը. «Նոս արեան հոս մը կայ՝ զոր չպիտի կա-  
րենային չքացնել Արարիոյ բոլոր անուշահոտութիւնները»:  
(Կրկնակի ծափահարութիւններ):

Բայց եթէ Եւրոպայի այդ լուին ու բացարձակ մեղ-  
սակցութիւնը մեծ ոճիր մ'եղաւ, նա եղաւ և մեծ սը-  
խալ մը, որովհետեւ եթէ այժմ մեր դռներուն մօտ  
ունինք Մակեդոնիոյ կիղեշ, ահաւոր հարցը, և որ կրնայ  
վաղը մեր վրայ պատերազմի հրդեհը արծարծել, ազոր  
պատճառն այն է, որ մեր եօթը տարի առաջուան ըն-  
թացքը Հայաստանի նկատմամբ քաջալերած է, երկա-  
րած է սուլթանին կողմէն բոլոր ոճիրները և բոլոր  
անարդարութիւնները՝ որոնք մայր են բոլոր ապստամ-  
բութիւններուն: (Ծափահարութիւններ):

Կրնայինք չհետաքրքրուիլ հայկական վտանգով, վը-  
տանգ հեռաւոր, վտանգ ասիական, բայց ահաւասիկ,  
որ նա անխուսափելի հաղորդակցութիւններով, մերձե-  
ցած է մեզ և եղած է մակեդոնական վտանգ Եւրո-  
պայի սրտին մէջ իսկ: Սա մեզ համար արդար պատիժ  
մ'է և մեծ դաս մը և ջերմապէս կը ցանկամ, որ նա  
չատ ուչ չհասնի: (Ծափահարութիւններ):

Տեսէք, թէ ինչ խստութեամբ և ինչ արամբա-

նութեամբ Մակեդոնիոյ ջարդողները բոլորովին մօտիկ  
հասերը ջարդողներուն անպատիժ մնալուն հետեւանք-  
ներէն կ'օգտուին: Հայաստանի մէջ միմիայն կազմակերպ-  
ւած ղեկավարներով չեղաւ ջարդը, և ոչ ալ յանկար-  
ծական կերպով ոստիկաններու կերպարանափոխուած  
ու անոնց նման հագնուած աւազակներով, այլ աւելի  
վատթար եղանակաւ, — խուժանի մ'անասնական ձեռքով  
եղաւ այն: Կարգացէք 28 հոկտեմբեր 1902 թուակիրը,  
զոր Սելանիկի մեր հիւպատոսը, պ. Սթէյ ուղղած է:  
Գուր պիտի տեսնէք հոն, որ այս պահուս Մակե-  
դոնիոյ մէջ այս կերպ կը խօսին. «Մենք ալ գիւրաւ  
կրնանք ազատել սուլթանն անոնցմէ, որոնք զայն կ'ան-  
հանգստացնեն. մենք կ'ընենք այնպէս, ինչպէս Հայաստան  
ըրին»: Եւ այն ինչ կը պատրաստուի Մակեդոնիոյ մէջ,  
նմանողութեամբ անոր, ինչ որ ոճրագործ և անխոհեմ  
Եւրոպան թողարտած է Հայաստանի մէջ, ատ խմբովին  
սպանութիւնն է:

Միմիայն մէկ միջոց կայ վերցնելու վտանգը, առաջքն  
առնելու նոր ոճիրներու, առաջքն առնելու թերեւս յա-  
ռաջիկայ պատերազմին. այս այն է, որ միացեալ Եւրո-  
պան, չեմ ըսեր միաձայն — Պրէսանսէ շատ իրաւունք  
ունէր քիչ առաջ — պէտք չէ անհրաժեշտ որոշ միջա-  
մտութիւններուն անընդունելի պայմաններ դնել (Ծափա-  
հարութիւններ), — պէտք է, կ'ըսեմ, որ միացեալ Եւրոպան  
չտապէ միջամտել: պարտք գնելու անհրաժեշտ և  
հիմնական բարենորոգումները: Որպէսզի այդ միջամտու-  
թիւնը տեղի ունենայ իր բոլոր ազդութեամբ, պէտք  
է որ սխալ հասկացողութիւն չլինի Ո՛չ, մենք պատե-  
րազմ չենք ուղեր մահադականութեան դէմ: (Ծափա-  
հարութիւններ): Եւ եթէ քիչ յետոյ պաշտպաններ շա-  
յաստանի և Մակեդոնիոյ քրիստոնեայ ազգաբնակչու-  
թիւնները, ազ անոր համար չէ, որ անոնք քրիստոն-



եայ են, այլ որովհետեւ անոնք մարդիկ են՝ որոնց քրիստոնեայ լինելը թուրք իշխանութեան տակ կը հըրաւիրէ իրենց վրայ վտանգներու և վշտերու յաւելուած մը (ժափահարութիւններ): Բայց ոչ մի միտք կրօնական խաչակրութեան: Մենք շատ լաւ գիտենք, որ բարենորոգումները, երաշխաւորութիւնները զոր մենք կը պահանջենք քրիստոնեայ ճնշուած ազգութիւններուն համար, պիտի տարածուին, ի հարկէ քիչ-քիչ, օսմանեան ժողովուրդին ամբողջութեան վրայ իսկ: Արդէն նա այնչափ կը տուժէ, որչափ իր հարստահարած բնակչութիւնները, այն ճնշումէն, որ նա ի գործ կը զնէ անոնց վրայ: Գուր կարգացիք մեր հիւպատոսներուն այն նամակները, որոնք կը ըսեն, թէ Մակեդոնիոյ մահաբազանները չեն համարձակիր այլևս թողուլ իրենց տունը առանց զինուած հետևորդներու, որովհետեւ ասոնք իրենց իւրաքանչիւր քայլին կը զգան ապստամբութիւն, վրիժառութիւն, սպառնալիք. անոնք պաշարուած են իրենց արծարծած ատելութիւններովն իսկ և մենք պիտի երթանք հոն ազատել միւլնոյն ատեն հարստահարիչն ու հարստահարեալը: (Բուն ժափահարութիւններ):

Ոչ, մենք չենք առաջարկեր կռիւ այն թուրք ժողովուրդին դէմ, որուն մէջ այնչափ սքանչելի մարդիկ կան՝ վաստակող, արի, զօրեղ, այնչափ մարդիկ, որոնց պէտք է եղած բարոյական մի եղական աղնութիւն՝ չկորսնցնելու համար մարդկային արժանապատուութեան ամբողջ հետքը, այն գարշելի վարչութեան տակ, զոր կը կրեն անոնք: (ժափահարութիւններ): Եւ ես կ'ուզեմ ըսել երիտասարդ թուրքերէն մէկ քանիին, որոնք կ'երկնչին երբեմն Եւրոպայի միջամտութենէն, որ անոնք իրաւունք պիտի ունենային, եթէ այդ միջամտութիւնը կարենար ուղղուիլ մի օր թուրք ժողովուրդին դէմ իսկ. բայց նա ճնշող կառավարութեան դէմ է միայն ուղղուած, ուրկէ

ժողովուրդը չի կրնար ազատել զինքն անձամբ և երիտասարդ թուրքերուն է անկ' կազմելու մահաբազան ուժերուն պահեստը, որոնք Եւրոպայի առաջին միջամտութեամբ ազատուած Տաճկաստանին մէջ յառաջդիմութեան ռազմերաները պիտի լինին: (ժափահարութիւններ):

Ինչպէս որ մենք չենք ուզեր կրօնական պատերազմական քաղաքականութիւն մը մահաբազանութեան դէմ, ոչ ալ թուրք ազգին համար ստորնացուցիչ քաղաքականութիւն մը, այնպէս ալ չենք ուզեր յանդուգն քաղաքականութիւն մը, որ իր մէջ կը դարանէ դժուարութիւններ: Վաղն արդի զղուելի կառավարութենէն տարբեր թուրք կառավարութիւն մը գործ պիտի ունենայ դժուարութիւններու հետ, զորս չենք ժխտեր մենք: Պրէսանսէ գծեց ձեր առաջ ցեղերու, կրօններու, ազանգներու այդ բարդութենէն ու խառնակութենէն մի այնչափ իրական ու ճշմարիտ պատկեր, որ պէտք չունիմ այդ նիւթին վերադառնալու: Մենք չենք հրքեր խնդրոյն դժուարութիւնը:

Աւստրո-չունգարիան աւելի լաւ ի վիճակի է, քան թէ թուրքիան, լուծելու այս տեսակ դժուարութիւն մը. նա կազմուած է այլազան ժողովուրդներէ, բայց որոնք, ի բաց առեալ դաւանանքի տարբերութիւնները, կը պատկանին միեւնոյն էական կրօնին. բացի այդ, արեւմտեան Եւրոպայի շունչն անցած է այն տեղէն. նա լսած է 1848-ին, իր մայրաքաղաքի փողոցներուն մէջ, եւրոպական յեղափոխութեան աղաղակը. նա ունի ընտրութեան վարչութեան սկզբնաւորութիւն մ'և խորհրդարանական կառավարութիւն մը: Այս վարչութիւնը որչափ ալ սակաւապետական (oligarchique) լինի, թոյլատրած է սակայն դաշինքները, ազգեցութիւններու այդ չափերը, որոնք այլազան ցեղերու թոյլ պիտի տան կամաց կամաց իրարու մերձենալու և իրարու ներդաշնակուելու:



Եւ սակայն Աւստրո-Հունգարիան կուոյ մէջ է ժողովուրդներուն բազմախոնութեան համար, որոնք կը բաղ-խեն անոր մէջ սոսկալի դժուարութիւններու, որոնցմէ մենք ամենքս կը ցանկանք, որ նա ելլէ կազմակերպուած և ազատ դաշնակցութեամբ մը, առանց քայքայման և առանց այն անդամատուութիւններէն մէկուն, որոնք պիտի վտանգէին Եւրոպայի խաղաղութիւնը: (Ժախահարութիւն):

Բայց եթէ մենք կը հաստատենք այն դժուարութիւնները, զորս կրօններու և ցեղերու այս բազմութիւնը կը ստեղծէ յարաբերապէս արդի պետութեան մ'առջև, ինչպիսին է Աւստրո-Հունգարիան, աւելի մեծ իրաւունքով պարտինք ճանաչել այն դժուարութիւնները զորս նա կը ստեղծէ թուրք պետութեան համար: Ինչոր մենք պարտականութիւն ունինք պահանջելու, ինչոր Եւրոպան իրաւունք և պարտաւորութիւն ունի՝ պարտք դնելու, (imposer), այս այն է, որ թուրք կառավարութիւնը շնորհէ, ապահովէ, պահպանէ իր ամեն ցեղէ, ամեն կրօնէ եղող բոլոր ժողովուրդներուն այն տարրական երաշխաւորութիւնները՝ ապահովութեան, ազատութեան և արժանապատուութեան՝ որոնք թոյլ պիտի տան վերջը այդ վանազան կրօններուն ու ցեղերուն զուգահեռաբար զարգանալու, առանց իրար հետ բաղխուելու, առանց զերար ճնշելու, առանց զերար գիշատելու: Բայց անհնար է թոյլ տալ ոճրագործ և արիւնարբու բարբարոսութեան լուծելու խնդիրը՝ ոչնչացնելով ժողովուրդներուն իսկ մէկ մասը: (Ժախահարութիւններ):

Ահա այս պայմաններով է, այս պայմաններով է միայն որ խնդիրը զրուած է: Եւ այժմ ես կը կրկնեմ Պրէսանսէյն յետոյ, որ մենք պէտք չունինք գծելու մանրամասնօրէն բարենորոգումներուն ծրագիրը: Եւրօտար երկիրներու ներկայացուցիչները սկսած են զայն ուրւագծել: Պրէսանսէ ամբողջացուց պատկերը ոչ թէ գոր-

ծառնութեան օրէնք մը պարտք դնելով պատասխանատու կառավարութիւններուն, այլ ցոյց տալով քաղաքակիրթ աշխարհին, որ եթէ Եւրոպան չի լուծէր խնդիրը, դա լուծման անկարելութեան պատճառաւ չէ, այլ այդ խնդրին քննութեան սկսելու բարոյական ուժի չգոյութեան համար է միայն: (Կրկնակի ժախահարութիւն):

Ինչպէս կարելի պիտի ըլլար ըսել, թէ Եւրոպայի միջազգային հսկողութիւնը չպիտի կրնայ գործադրուիլ Տաճկաստանի մէջ՝ ամրապնդելու համար ժողովուրդներու տարրական ապահովութիւնը, երբ նա կը սկսի հոն գործադրել՝ երաշխաւորելու համար եւրոպացի պահանջատէրերուն ապահովութիւնը: Չեմ յանդիմաներ զանոնք այդ բանին համար. այս երաշխաւորութեամբ է, որու նպատակը շահն է նախ, որ Եւրոպայի բարձր քաղաքակիրթութիւնը կամաց կամաց մուտ կը գործէ, նուազ յառաջացած քաղաքական, անտեսական և ընկերական շարժման մէջ:

Բայց պէտք է չբաւականանալ ազով պէտք և քիչ մը տրամաբանութիւն այդ միջամտութեան և այդ միջազգային հսկողութեան մէջ պէտք է և չմոռնան, որ կեդրոններու պարտաիրօջ կանոնաւոր վճարման հիմնական պայմաններէն մին այն է՝ որ ապահովին ազատութիւնը, անդորրութիւնը, կեանքը անոնց, որոնք Կեդոնիոյ լեւներուն, ինչպէս և Թեսսալիոյ հովիտներուն մէջ կ'աշխատին գոյացնելու այն հարկը, որով պիտի վճարուի այդ պարտքը: (Ժախահարութիւններ):

Ենք կը պահանջենք տրամաբանական գործադրութիւնը, ի շահ Տաճկաստանի բոլոր ժողովուրդներուն, եւրոպական միջազգային միջամտութեան, որ մինչև օրս միմիայն պահանջներու շահուն նուիրուած է եղեր:

Եւ այժմ պիտի վերջացնեմ խնդրելով — թոյլ տրուէր ինձ ընել այդ յանուն ձեր — որ մեր արտաքին



գործոց նախարարը շատ երկիւղ չունենայ մեզմէ: Ինձ ըսին, որ մենք զայն քիչ մը կ'անհանգստացնենք. դիւանագէտներուն պաշտօնն է անհանգիստ ըլլալ, այն պայմանով, որ անոնց վախը փարատի: (ծիծաղներ): Արթնքն, եթէ նա անձամբ լսած ըլլար այնչափ ազդու, վրձուական, բայց և այնչափ խելօք ճառերը, զորս մեր պաշտօնակիրքները Պրէսանսէն և Գրնի Աօշէնը քիչ առաջ արտասանեցին, իր կասկածներէն մէկ քանին արդէն փարատած պիտի ըլլային, և անոնք բոլորովին պիտի ցրուէին, եթէ նա իր իսկ աչքերով տեսած ըլլար այս սքանչելի տեսարանը հանրապարութեան մը, ժողովոգական հաւարման մը, հաւարում մը՝ կազմուած Գրանսայի այն քաղաքացիներէն՝ որոնք մինչև այժմ կ'անոնաւորապէս հեռու պահուած են ծանօթութենէն ու ընթացքէն արտաքին ծանրակշիռ խնդիրներուն. եթէ նա տեսած ըլլար, թէ ինչ խղճամիտ ու մանրախոյզ ուշադրութեամբ, վեհանձն զգացման ինչպիսի փայլակներով բայց և առանց ո՛ր և է անխոհեմութեան ու առանց ո՛ր և է մեծաբանութեան, այս ժողովը կը փնտուէր լաւագոյն միջոցը՝ խաղաղութեամբ երթալու դէպի արգարութիւնը (ծափահարութիւններ): Թող ապահով ըլլայ, որովհետև, եթէ մենք անոր պէտք ունինք, այսինքն, եթէ մենք պէտք ունինք դիւանագէտներու, որոնք հրաժարած էին այն գարշելի աւանդութենէն, որու մասին Պրէսանսէ խօսեցաւ, առանց անուն մ'իսկ արտասանելու, եթէ մենք պէտք ունինք մարդոց, որոնք հրաժարած էին այն կորստաբեր աւանդութենէն, եթէ մենք զմեզ կը շնորհաւորենք գտնելով՝ Գեղին Գրքին մէջ արձանագրուած մեր ժողովներու տեղեկագիրներէն քանի մը հատին մէջ ապացոյցը՝ լայն, կանխատես և մարդասէր մտքի մը, թող չմոռնան դիւանագէտները, որ մանաւանդ այսօր իրենք պէտք ունին հանրապարութեան ու-

ժին ու շարժմանը: Պրէսանսէ ցոյց տուաւ, թէ ինչպէս պ. Գելիասէի ծրագիրը կամաց կամաց չյաջողելու վրտանգի կ'ենթարկուէին շնորհիւ միւս դիւանագէտներուն ու կառավարութիւններուն մեքենայութեանց: Որչափ ալ վախկոտ կարենայ ըլլալ մեր աչքին առջև մեր արտաքին գործոց նախարարին առաջարկած բարենորոգման ծրագիրը, նա շատ աւելի վեր է այն խաբուսիկ ծրագիրներէն, զոր նախագծած է Աւստրո-Ռուսական բաղադրութիւնը, և պ. Գելիասէ, նոյնիսկ իր նախագուշուութիւններով ու վերապահումներով վտանգի պիտի ենթարկուէր մինակ մնալու, եթէ եւրոպական կարծիքը չարթնար: Ինչպէս կ'ուզէ նա, որ Եւրոպայի կարծիքը զարթնու, եթէ միւս ժողովուրդներուն և միւս քնացած խիղճերուն դռները բաղտողը չըլլայ Գրանսան, որ հնարաւոր հակառակութեան մը մէջ ոչ մի անմիջական շահ չունի: (Բոլոն ծափահարութիւններ):

Ահա մեր գործը, ահա մեր պարտականութիւնը, մերն ու ձերը: Եւ ցոյց տալու համար մեր արտաքին քաղաքականութեան պետին, որ նա անիրաւաբար պիտի կասկածէր մեզի և պիտի մերժէր այն անհրաժեշտ աջակցութիւնը զոր մենք անոր կ'ընծայենք, ես պիտի վերջացնեմ յիշելով անոր՝ Տաճկաստանի ներկայացուցչին իր գրած խօսքերէն մին, մակեդոնական գործերուն առթիւ. „Խականն այն է, որ չփախցնենք ժամանակը: (Երեքկին որոտընդոստ ծափահարութիւններ.— աղաղակներ. կեցցէ ժօրէս):



Ճ Ս Ռ Պ Պ Օ Լ Լ Ը Ռ Օ Լ Ի

(Երեսփոխան Սէնի)

Ես ալ լսեցի Հայաստանի և Մակեդոնիոյ ողբը, որ լեցունց ամբողջ Եւրոպան, տեսայ հեռուսոր հորիզոններու հրդեհի լոյսով շառագունինն ու ջարդերու արիւնտա բիծերով կարմրիլը, և իբրև կաթողիկ, ուզեցի բերել այստեղ բոլոր ճնշւածներին իմ գիտակցութեան համակրանքը, գոչելու բոլոր հարստահարիչներու երեսին իմ ցասումիս ուժը: (Ժամիահարութիւններ):

Ճնշւածներու դատը պաշտպանելը ֆրանսայի հին աւանդութիւնն է, և, ինչպէս քիչ մ'առաջ բարեկամս Կօշէն շատ լաւ ըսաւ, երբ ան օգնութեան կը վազէ տառապեալի մը, չհարցնէր անոր թէ ո՞վ է, կ'նչ ցեղի կը պատկանի, կը հարցնէ միայն՝ ո՞ր է հարստահարիչը: (Ժամիահարութիւններ):

Բայց որովհետև այսօր Հայաստանի և Մակեդոնիոյ քրիստոնէաները սուլթանի ամենաշատ ջարդուած հրպատակներն են, թող սուէք ինձ յիշեցնել ձեզ, թէ Արևելքի քրիստոնէաներու պաշտպանութիւնը մեր, ֆրանսայի փառապանծ ժառանգութեան մէջն է:

Այս պաշտպանութիւնը նոյնիսկ խաչակրութեանց օրէն կը թուագրուի: Այն ժամանակները, քրիստոնէութեան մէջ, նիւթական ուժը բարոյական մեծ գաղափարի մը ծառայութեան տակ դրուած էր, զոր բոլոր եւրոպական ազգերը քրիստոնէական միակ հաւատացումի մը միութեան մէջ փաթեթէր էր: Այս ուժը Ասիայէն եկող

կեղեքիչի դէմ ելած էր: Ազնուականներ, ճորտեր, միևնոյն շարժումէն մղուած, թողլով դղեակներ ու հիւլակներ, հոն կը գահավիժուէին, այնչափ հեռի, որ չէին գիտեր ո՞ր, և վազելով քրիստոսի գերեզմանի տիրացումին, Ասիոյ մէջ փոխադրեցին, իրենց յաղթանակներով ու հերոսութեամբ, մաս մը մեր քրիստոնէայ Եւրոպայէն: (Ժամիահարութիւններ):

Ասիկա հիանալի շարժում մըն էր, կրօնական հաւատքով և մարդկային գթութեամբ խառն: Ասանկի մեզ մօտ արդէն լսուած էին, ըստ Սուրբ-Ղուգովիկոսի, „խեղճ քրիստոնէաներու գոչերը“: Այդ օրէն ի վեր Արևելքի մէջ անցածներէն ոչինչ օտար եղաւ մեզ. իսլամին հրպատակուող քրիստոնէաներու և մեր մէջ հաստատուն կապ մը հիմնուեցաւ, զոր ոչ մի ուժ չի կրցաւ խզել: Մեր հայրենասիրութիւնը, այս հեռուսոր ժողովուրդներու մէջ կարծեց տեսնել եղբայր ժողովուրդներ, իսկ Փոքր-Ասիոյ կողերը ուղղող կապոյտ ալիքներուն մեջ՝ տեսակ մը ցոլացում մեր ֆրանսայի:

Շուտով, հակախլամական պայքարին կը յաջորդէ դաշնակցութիւնը: Ֆրանսուա Ա. սկզբունքներու քաղաքականութեան տեղ կը դնէ շահերու քաղաքականութիւնը: Բայց, մեր թագաւորները ասոր համար չեն լքեր հովանաւորութեան այն աղնիւ պաշտօնը: Ընդհակառակը, նա աւելի կ'ընդունուի և կ'որոշուի: Նոյնիսկ Թուրքիոյ մէջ ֆրանսացիները ֆրանսայի թագաւորի ուղղակի իշխանութեան տակն են իր հիւպատոսներու ներկայացուցչութեամբ: Հոն վաճառականութիւն ընելու իրաւունք և իրենց կրօնքի ազատութիւն ունին: Այս կրօնական և վաճառականական կրկնակի մենաշնորհը բարեկամ օտարականներու ալ տրուած է:

Թուրքիոյ մէջ կարելի է ազատ առևտուր ընել, թէ թէ ֆրանսայի դրօշակին տակ՝ ընեն, և ազատ աղօթել,



եթէ մարդ զինքը «Քրանսայի կայսեր բարեկամ» ըսէ:

Այսպէս կ'ապահովուին Արևելքի մեր քրիստոնեայ Տոպա- նաւորուածները: Անոնք աւելի ևս կ'աճին, երբ ամեն ծա- գումէ քրիստոնեաներ ապահով կ'ըլլան գտնելու ապաս- տան մը, ապահովութիւն մը Քրանսայի թագաւորի դես- պանի մօտ, հանդէպ հարստահարութիւններու, բռնա- բարումներու, որոնցմէ սպառնացուած են: Իւ այս պաշտ- պանութիւնը կը մշտնջենաւորուի գարերու ընթացքին, հակառակ քաղաքականութեան յեղաշրջումներու: Նոյն իսկ մեր Յեղատիտութիւնը, Վայսրութիւնը զայն պահան- ջած են: Երբոր հազիւ հիասթափուած սաստիկ ցնցում- ներէ, մեր երկիրը իմացաւ յունական ապստամբութեան հառաջանքները, անդիմադրելի հիացում մը ծնաւ իր մէջ ժողովուրդներու ազատութեան համար, և ուղարկեց Փրանսական նաւերը միանալու Անգլիոյ և Ռուսիոյ նա- ւատորմիչներուն, Նաւարինի ալիքներուն մէջ, ուրիշ պիտի ժայթքէր Յունաստանի ազատութիւնը: (Ժափասարութ.):

Աւելի ուշ, դէպքերը նոր ուղղութիւն տուին միջադ- գային քաղաքականութեան. օսմանեան պետութեան ամ- բողջութիւնը եւրոպական խաղաղութեան համար իբրև անհրաժեշտութիւն կը թուի ամենքին. Քրանսա՛ զայն պահպանելու համար թուրքիոյ նիդակակից կ'ըլլայ մինչև անգամ: Բայց այնու ամենայնիւ անիկա չի բքաներ իր առաքելութիւնը և Արևելքի ժողովուրդներու յոյսը կը մնայ ու կը ցուցնէ — ինչպէս որ բրաւ Սիրիոյ կո- տորածներուն ատեն — որ ինքը միշտ բոլոր ճնշուած- ներուն օգնութեան հասնող մեծ ազգը կը մնայ: Ահա- ւասիկ մեր անցեալը: (Ժափասարութիւններ):

Ինչպէ՛ս կ'ըլլայ, որ այսօրուան օրս՝ Քրանսա, ժխտե- լով սա երկար պատմութիւնը, պիտի կրնայ ճնշուած ազգերու անձկութեան աղաղակներուն հանդէպ խուլ մնալ. կրնայ արդեօք անկարեկից մնալ արեան գե-

տերու հոսիլը տեսնելով գետերու, որոնց ծագումը անոր պալատին մէջ փնտռելու է, զոր իրաւամբ հարմիր սուլ- թան կոչեցին: (Ժափասարութիւններ): Աւ Քրանսա կը շա- րունակէ վճատեցուցիչ լուծութիւն պահել Եւրոպայի հետ մեկտեղ ու իր ձայնը չպիտի բարձրացնէ՝ Եւրոպային յիշեցնելու համար իր նուիրական պարտքը և բերինի դաշնադրութեան ատեն ընդունած պարտաւորութիւն- ները: Այդ տեսակ գիրք մը անհասկնալի կ'ըլլար և դուք ձեր ծափահարութիւններով արդէն ըսիք, որ Քրանսա այդպէս չպիտի ընէ: Ամենայն ինչ խօսելու և գործելու կը հրաւիրէ զայն: (Ժափասարութիւններ): Ի հարկէ, նիւթական շահը իր զինն ունի և խենթու- թիւն կը լլար զայն ուրանալը, սակայն ան պէտք չէ որ մոռցնել տայ մարդասիրութեան բարձր պար- տաւորութիւնները: Իմ հաւատս զիս կը սորվեցնէ սառ- նասիրտ չը մնալ մարդկային որեւէ տանջանքի տուաջ: Ահա հոգ է սա Փրանսական մեծ ազգին ընդհանուր զգացմունքը, այդ է անոր ժառանգական բնազդը: Իւրաքանչիւր գանգատ անոր սրտին մէջ արձագանք կը գտնէ, իւրաքանչիւր յաղթական անարդարութիւն վրէժխնդիր ցասման գեղեցիկ սարսուռներով կը դո- ղացնէ զայն: Եթէ նա երբեմն տուժած է իր անխո- հեմ մեծահոգութիւններուն համար, երբէք կամովին համաձայնած չէ կանոնաւոր ջնջումներու ամօթը յանձն առնել: Նա չէ, որ այս չմիջամտելու քաղաքականութիւնն իր վրայ առաւ, որ գուցէ ուրիշ բան չէ, բայց եթէ եսականութեան և երկիւղի զուգակառնում մը:

Ամեն մի վիշտ կը յուզէ, ամեն մի անարդարութիւն ի զայրոյթ կը վառէ, ամեն մի անգթութիւն կ'ըմբոս- տացնէ զայն: Անգգայ ըլլալ չի կրնար, որովհետև այն արիւնը, որ անոր սիրտը կը տրոփեցնէ, չափազանց մա- քուր է. ու մարդկոյին եղբայրութեան զգացմունքը շատ



խոր է անոր մէջ: (Ժափահարութիւններ): Սակայն մեր վեհանձնութիւնը այսօր խիզախ ըլլալու վտանգին չենթարկուիր բնաւ, որովհետեւ շատ գեղեցիկ կերպով կը շողկապուի մեր ամենավեհ և ամենագործնական շահերուն ճշմարիտ իմաստին հետ: Մենք ամենքս ալ խաղաղութիւն կ'ուզենք, սակայն խաղաղութիւնը ցանկալի է միայն այն ատեն, երբ նա հպարտ է, և նա ապահովուած է միայն այն ատեն, երբ հիմնուած է իրաւունքի, յարգանքի վրայ: Արդեօք այն վայրերուն չարագուշակ դէպքերը չեն կրնար ընդհանուր դըրդում մը առաջացնել վաղուան օրը: Գուր չէք գիտեր միթէ, որ կրկնուող անարգարութիւնները ժողովուրդներու արգարացի ընդվզումները կըստեղծեն և որ ճնշողն ու ճնշուածի ընդհարումէն կայծ մը կրնայ թուչիլ, որ կրակ կրնայ ձգել ամբողջ Եւրոպան: Եթէ կ'ուզեն օսմանեան պետութեան անկման առաջն առնել, եթէ չեն ուզեր անոր կտրատումովը եւրոպական փառասէր տնտեսանքներու նիւթ տալ, պէտք է հզօր թափով մը զայն նորոգել, անոր բաղկացուցիչ տարրերը կազմող ժողովուրդներուն բարձրացումը հեշտացնելով: Հեշտացնելու է այս բարձրացումը Եւրոպայի չափաւոր, բայց կորովի միջամտութեամբը: Ատորածներու ականատես վկայի մը նամակին մէջ կարդացեր եմ հետեւեալ տողերը. «Ինքորմներ պէտք են ժողովուրդը հանգստացնելու համար, որ ալ չի կրնար համբերել. հարկաւոր է Եւրոպայի միջամտութիւնը, այլապէս մենք կորսուած ենք»: Եւ եւրոպական դիւանագիտութեան անգործութեան հանդէպ նա աւելցուցած էր այն խօսքերը՝ վշտի և գրեթէ յուսահատութեան շեշտով մը. «Թող Աստուած կարեկից ըլլայ անոնց, որ կը տանջուին»: (Ժափահարութիւններ):

Սակայն մեր հոգիները թող աւելի բարձր սլանան: Քրանսա գարերէ ի վեր ասպետական ազգը մնացած է:

Մեր երկիրը միշտ արդար պաշտպանութիւններու լաւագոյն զինուորը ըլլալու պատիւը ունեցած է. միշտ գաղափարի առաջնորդոյն է աշխարհիս: Աւրեմն, կրնա՞նք անտարբեր մնալ մեր մարդկային արժանապատուութեան և ազատութեան սկզբունքներու քայքայման, որոնք անձեռնմխելի կ'ուզենք պահել մեր մէջ և տարածել բոլոր ժողովուրդներու մէջ:

Յեղափոխութիւն չէ, որ կը քարոզենք: Չենք ուզեր երեւակայութիւններու մէջ իյնալ. կարծելով թէ մէկէն և ամբողջութեամբ կարելի է փոխադրել մեր եւրոպական քաղաքակրթութիւնը այնպիսի երկիրներու մէջ, ո՞ր ան ներկայիս չպիտի կրնար յարմարուիլ: Բայց միթէ չափազանցութիւն է հիմակուրէն ուզել անհասի և գոյբի ասպահովութիւն այն ժողովուրդներու համար, որ կը տանջուին, քրիստոնեայ կամ մահաձգական. փոխանակ բռնապետ և կեղեքող վարչութեան՝ ուզել պաշտպանող վարչութիւն մը, խղճի ազատութիւն, և այսպիսով տարածել անոնց մէջ բարոյական բոլոր մտքերը, որ առանց անոնց՝ յառաջանալու կարելիութիւն չի կայ և որոնցմով միայն ժողովուրդները լաւագոյն քաղաքակրթութեան մը կրնան հասնիլ: (Ժափահարութիւններ):

Եւ արդարեւ, կը տեսնենք այն հալածուող ժողովուրդներու մէջ քաղաքակրթութեան ճամբու վրայ յառաջացող տարրեր: Լաւ գիտեմ, որ չարախօսներ — ո՞ր յաղթուած կամ ճնշուածը չունի իր թշնամիները — աշխատեցան զրկել զանոնք եւրոպական շահախնդրութենէն, վաղահաս վճիռներ և անհիմն ամբաստանութիւններ ուղղելով: Չեմ հաւատար ցեղերու անխուսափելի ստորագասութեան. չեմ հաւատար նաև անդարմանելի անկումներուն: Արնդունիմ, որ ամեն մի մարդու մէջ բարոյական զօրութեան պահեստ մը կայ, որ դրօշակելով պարագաներու առիթով կամ թէ կամբի բուն ջանքով մը, կը բաւէ՝



ամենաբարձր կարողութեան հասցնելու մարդուս հոգեկան և դադափարական ձիրքը ու այսպէս կը պատրաստեան հասաներու բարձրացումը և ժողովուրդներու վերածնութիւնը: (Ծափահարութիւններ):

Կը կարծեմ նաև, որ եթէ երկարատև ստրկութիւնը կարողացաւ երբեմն բնական յատկութիւնները տկարացնել՝ բայց չյաջողեցաւ դանոնք ջնջել: Միթէ՞ չունինք աչքի առաջ Յունաստանի, Ռուսիայի, Աերբիոյ և Բուլղարիոյ օրինակները: Այն ատեն, այն ժողովուրդներու նկատմամբ ճիշտ միւսնայն ենթագործութիւնները կ'ընէին, ինչ որ այսօր Հայաստանի և Մակեդոնիոյ համար: Բայց և այնպէս այս ցեղերը չի ցցուցին մեզի, թէ ինչ միջոցներով կը կրկնապարտեմք վերածնութիւնը և ինչ աստիճաններով կը հասնին լուսագոյն քաղաքակրթութեան մը: (Ծափահարութիւններ):

Միթէ՞ կարելի է պնդել, թէ Մակեդոնիոյ այն կենդանի ուժը, որ ժամանակին իր պատմական լաւ օրերը ծագեցուցեց, բոլորովին ցամքած ըլլայ: Յիշեալ ժողովուրդներու հետ կան ուրիշներ, մոռացութեան մատուած, երկար ժամանակէ ի վեր տաճկի հպատակ բնիկ քրիստոնեայ ժողովուրդները՝ նեատորականները, սիրիացիները, նամանականդ յակոբեանները որոնց նախնիքները մեծ ծառայութիւններ մատուցին Փոքր-Ասիոյ մէջ: Ասոնք լուսագոյն ցեղեր են: Արևէ ժամանակ իմացուեցան, թէ կորսնցուցած էին իրենց հին քաջութիւնն ու յանդգնութիւնը:

Ինչէր չըսին հայերու համար, ինչ նսեմացուցիչ գոյներով չներկայացուեցան իրենց թշնամիներու կողմէ: Հոս իրենց նկարագրութիւնը չէ որ պիտի ընեմ. քիչ առաջ ճարտար կերպով եղաւ այդ բայց միթէ՞ կրնամ չյիշեցնել, որ իրենց սուր ընդունակութիւնը, սաստիկ սէրը դէպի ուսումն և մտքի ճկունութիւնը թոյլ տուին

անոնց փայլելու մարդկային ամեն գործօն շրջաններու մէջ: Զինուոր, գրագէտ, վարիչ ու ամեն ճիւղերու մէջ յայտնի, արժանաւոր մարդիկ ունին: (Ծափահարութիւններ):

Չեղ արդէն ըսին, որ ամենքն ալ վաճառականներ չեն, աւելի երկրագործներ են: Իրենց գիւղերու շրջակայքը, լեռներու գագաթը, Արևելքի բաց օդին տակ կը հերկեն և իրենց հօտերը կ'արածեն: Հողագործ-գիւնուոր ժողովուրդներու բոլոր յատկութիւններն ու առաքինութիւնները ունին, բազմածին են, իրենց ցեղը անդադար կը նորոգուի և կը բազմանայ: Հպարտ իրենց ծագումով, որ կը կորսուի ժամանակի խառնին մէջ, ունենալով աւանդութեանց հաւատարմութիւնը, նախանձախնդիր իրենց մայրենի լեզուին, կը պահեն իրենց ցեղի յատկանիշ նկարագիրը հակառակ ստրկութեան և հալածանքներու: (Ծափահարութիւններ): Իւ իրենց ազգին սերտ կապերով յարած ըլլալու յատկութիւնն է, որ ունին միւս շրջապատող քրիստոնեայ ժողովուրդներու հետ: Արիշ յատկանիշ նկարագիր մ'ալ. բոլոր այս ժողովուրդները աւելի բարձր իդէալի յոյս մ'ունին. իրենց երազանքներու մէջ կը կազմեն լուսագոյն ապագայ մը, որուն կը բաղձան:

Արդեօ՞ք այս ցեղային յատկութիւններու, այս ազնիւ բաղձանքներու մէջ չէք տեսներ մեզ հետ խնամական նշոյլներ: Ասոնք են նաև բարոյական և ընկերական բարձրացումի ապացոյցներ, որ կ'արժանացնեն սոյն ժողովուրդները մեր շահագրգռութեան՝ ոչ միայն տանջուելուն համար, այլ և որովհետև կրնան վաղը նոյն երկիրներուն մէջ վերածնութեան գործիքներ ըլլալ: (Ծափահարութիւններ):

Ահա այս ժողովուրդներն են, որ ներկայիս զարհուրելի կոտորածներու մատուած են: Իրենց ձեռքով մշակուած հողերը այլևս ուրիշ ոչինչ չեն ներկայացներ,



բայց եթէ արեան ալիքներով ողողուած աւերակներ: Ոչ տարիքը, ոչ սեռը չեն պաշտպաներ մարդասպանի դանակի առաջ: Այս սարսափներով չէ որ տաճիկ ժողովուրդը կ'ամբաստանենք. այս անարգար պիտի ըլլար, գիտեմ. կան նաև թուրքիոյ տաճիկներու մէջ վերածնութեան նշոյլներ, զորոնք կ'ողջունեմ՝ իբր յոյսեր: Հայ մը պատմեց, որ խաղաղ ժամանակ համաձայնութեամբ կ'ապրէին թուրքերու հետ մինչև այն օրը, երբ բարձրէն եկած հրաման մը գրգռեց մոլեռանդութիւնն ու աստուութիւնը: Այնքան ոճրագործութեանց միայնակ յանցաւորը պալատին մէջ վախով շրջապատուած մարդն է, որ ան պատիւ և ապերջանիկ կեանք մը կը վարէ: Սուլթանը կը հրամայէ սպանութիւնները, իսկ ծառաները զանոնք կը գործադրեն: Արցածնուն չափ կը մորթեն՝ 10,000, 100,000: Գեռ շատեր կը մնան, թող զարնեն, թող զարնեն դեռ: Թշուառութիւնն ու անօթութիւնը պիտի վերջացնեն անոնք, որ Մարդասպանին սուրէն ազատուած են: (Ծափահարութիւններ):

Սո՛ւ մարդասպանի ձեռքով որոշուած ամբողջ ցեղի մը կանոնաւոր բնաջնջումն է, ժողովուրդներ են որ պիտի կորսուին: Նաև կ'ըմբռնէք այս բառերու սարսափը, որ ամբողջ ցեղի մը անյայտանայն է — մարդկային մեծ ծառէն անսիրտ բռնակալի մը հրամանով կատաղութեամբ կորզուած ճիւղ մը: Եթէ Եւրոպա չի միջամտէ, քիչ ժամանակէն ուրիշ ոչինչ չպիտի մնայ, բայց եթէ արեան մէջ թաթխուած մէկ քանի մահէ փախածներ, բոլորովին ընկճուած իրենց զարհուրանքի թմրութենէն, առանց կեանքի ուժի, մէկ խօսքով կորսուածներ՝ ի վնաս մարդկութեան: Մի՞թէ Եւրոպա կրնայ զայն թող տալ:

Արդէն պատասխանեցիր. ոչ: Քրանսա չի կրնար լուռ մնալ պէտք է որ մեծ գրգռող ըլլայ այն խոհեմ, բայց

հաստատամիտ գործունէութեան որ կրնայ ազատել այս ընկճուած ժողովուրդները. պէտք է որ իր ձայնը լսելի ընել տայ: Ամեն անոնք, որ հոն կը տանջուին իրենց յոյսի և ցաւի տենդով իրմէ կըսպասեն ազատութեան լուրը, որովհետև Քրանսա անոնց համար միշտ մեծ ու բարի ազգն է: Մեր պատերազմական յաղթութեանց հմայքը, որոնցմով կը պարծենանք, չէ մարած. իր ազդեցութիւնը կը տևէ դեռ և կը յիշեցնէ այն դարաւոր պաշտպանողականութիւնը, որ պէտք է պահենք:

Սակայն մեր այդ մեծ պատմութիւնովը չէ միայն որ, ճանչցուած ենք, այլ նաև այն բարիքներով, որ տարածած ենք: Հոն գիտեն, որ Քրանսան, դա մեզմ, քաղցրաբարոյ Քրանսան է: Հոն մենք ճանչցուած ենք մեր հիմնած հիւանդանոցներով, մեր դպրոցներով, մեր միսիօնարներով: Եւ նոյնիսկ այն տեղերը, ուր անոր քաղաքական ուժը չի արտայայտուիր, ան միշտ ներկայ է իր մէկ զօրութիւնով, որ ուրիշներէն աւելի ազդեցիկ է, — իր բարութիւնով: Մի՞թէ՛ յուզիչ չէ շատ մը նրման դէպքերու մէջ այն՝ որ պ. Կոնստան մեզ կը պատմէ իր շահագրգիռ գրքին մէջ: Ար յիշէք այն զարհուրելի տեսարանները, զոր Ուրֆայի մէջ տեղի ունեցան: Ջարդելով չեն գոհացած և եկեղեցու մէջ տպաստանած խեղճերը վառած են: Ու մտածմունքը սարսուցնող երեոյթ մ'է ատելութեամբ վառուած այն պիղծ կրակը, որ կը լափէ քարիւղի մէջ թաթխուած, ոգևարքի ջլային ցնցումներով գալարուող այն մարդկային մսակոյտերը:

Երբոր ճամբորդը Ուրֆա կը հասնի, գեռ բոլորովին սուգ ու աւերակներ կը տեսնէ: Քրանսա պաշտօնական ներկայացուցիչ չունի հոն: Ոչ որ մեր ցեղէն: Բայց և այնպէս խիստ հրապուրիչ է իմանալ մեր հայրենիքէն շատ հեռու տեղեր մայրենի լեզուի խօսուելը: Ուսկից է այս: Որովհետև հոն կիներ և մանուկներ հաւաքուած դպրոցի



կամ արհեստանոցի մէջ, սորվեցան չորս Փրանցիսկեան քոյրերու բերնով այն լեզուն, որ սիրելի կը դարձնէ Քրանսան: Եւ այն յատկութիւնը, որ ունի մեր երկիրը ինքզինքը սիրել տալու համար, ստեղծած է հոն այն զգացումը՝ թէ տեսակ մը խորհրդաւոր դաշն կայ տանջուողի և Քրանսայի միջև: Ատով է որ մեր վրայ յոյս ունին: Չը յուսահատեցնենք այս հաւատարմութիւնը:

Թող Քրանսա լսելի ընէ իր բարձր ձայնը: Թող Եւրոպայի մէջ դրդէ այն համաձայնութիւնը՝ որմէ պիտի ծնի ամենուն համար բարերար՝ Արևելքի բարենորոգում մը դաշնադրութիւններու իրագործումով: Եւ արիւնտած աւերակներու մէջ ամեն արձագանքներով կրկնուած իր խօսքերը թող գոռան դահիճներու ականջին իբր աղբարարութիւն և տան ճնշուածներուն ապագայի յոյսը:

ՀԱՌՊ Պ. ԱՆՍՏՈՒ ԼԸ ՌՈՒԱ. ԲՈՒԻՈՒ

Տիկնայք և Պարոնայք,

Իբրև ճնշուածներու և ժողովուրդներու իրաւունքներուն հին պաշտպանի մը, ինծի պատիւ ըրին յանձնարարել ձեակերպումը այն օրակարգի, որը պիտի գոցէ ներկայ ժողովը. թերևս յիշեցին ալ որ ես առաջին և շայ Պարիզի մէջ, կոտորածներու շուրջը կազմակերպուած լուսթեան ատեն, կօնֆէրանս մ'ընողը չհայերու օգտին: (Ժախահարութիւններ):

Օրակարգը, որ ես հիմա կ'առաջարկեմ, պիտի ըլլայ բնական ու տրամաբանական եղբակացութիւնը այն մեծահոգի ճառերուն, որ դուք քիչ առաջ ծափահարեցիք և այն արդարացի ցասումներուն, որ այդ ճառերը յարուցին ձեր մէջ: Յուսով եմ, որ հոս ներկայ գըտնուող բոլոր Քրանսացիները միաձայն պիտի բուռնարկեն այն, — թէ անոնք՝ որոնք կապուած կըլլան վաղեմի Քրանսային, որ աւանդական պաշտպանն է Արևելքի քրիստոնեաներուն, և թէ անոնք, որոնք ինքզինքնին կ'անուանեն Յեղափոխութեան և «Մարդկային Իրաւունքներու» Քրանսայի զաւակներ, — երկու Քրանսա, որոնք մէկ կը կազմեն Արևելքի մէջ, քանի որ երկուքն ալ գրեթէ հաւասարապէս կ'աշխատին այնտեղ ազատութեան և քաղաքակրթութեան համար: (Ժախահարութիւն):

Սոյն մեծ ցոյցը ազգու, զօրաւոր կացուցանելու համար, մենք պիտի կանգնէինք իրողութիւններու գործնական



հողին վրայ, ինչպէս որ կը հրահանգեն ժամանակակից անցքերը և ընթացիկ բանակցութիւնները: Ամենալաւ եղանակը, թերևս միակը Արևելքի մէջ ծագած բոլոր կնճիռներուն լուծման համար՝ կը լինէր խորհրդաժողովի մը գումարումը, որ պաշտօն պիտի ունենայ հսկելու Բերլինի դաշնագրի գործադրութեան վրայ և սահմանելու արդարութիւնը առանց խտրութեան ազգութիւններու և կրօնքներու, բոլոր ճնշուածներուն, որոնց Եւրոպան Բերլինի դաշնագրով լաւագոյն վիճակի յոյսն է ներշնչեր: (ծափահարութիւններ):

Գժբախտաբար, ինչպէս պ. Գեղկասէ հաստատած է Գեղին Գրքին մէկ հեռագրին մէջ, այդ տեսակի խորհրդաժողով մը չէ կարող ներկայիս մէջ բոլոր պետութիւններուն համաձայնութիւնը ունենալ: Մինը կայ գոնէ անոնց մէջ պէտք չունիմ անունը տալու, որը կը թւի վճռականապէս հակառակիլ: Պէտք է ուրեմն, դէթ առժամապէս հրաժարիլ այդ կօնֆէրանսէն և Բերլինի մէջ յարուցուած բոլոր խնդիրներու վերջնական կարգադրութենէն: Պիտի կանգնինք այն բանակցութիւններու հանդէպ, որոնք սկսուած են այժմ՝ Բարձրագոյն Գրան հետ: Այդ բանակցութիւններուն վրայ է որ մենք կը ցանկանք, որ Ֆրանսական կառավարութիւնը իր ազդեցութիւնը ի գործ դնէ:

Այստեղ բան մը կայ, որ մենք չենք կրնար ընդունիլ: Այն՝ որ հայերու դատը զատուի մակեդոնացիներու դատէն: (ծափահարութիւններ): Երկուքն ալ կապուած են իրարու և այդ կապն է, որ կը խնդրենք ձեռքէ բարեհաճիլ հաստատել մեզի հետ: Հայեր և մակեդոնացիներ հաւասարապէս սուլթանի հպատակ են: Հայեր և մակեդոնացիներ հաւասարապէս ունին Եւրոպայի խոստումները: Ինչո՞ւ Եւրոպան պիտի մոռնայ հայերը: Արովհետև անոնք չեն ապստամբիր. կամ որովհետև Հայաս-

տանը խաղաղացներու և խնդիրը լուծելու համար Եւրոպան կըսպասէ, որ սուլթան Համիդ միջոց ունենայ՝ ի կատար ածելու հայ ցեղի ամբողջական բնաջնջումը... Եթէ Ֆրանսան ու իր դաշնակից Ռուսաստանը մոռնալին հայերու դատը, — երկու պետութիւններ, որոնք Արևելքի մէջ աւանդական առաքելութիւն ունենալու փառքը վստակած են — այդ կը լինէր անոնց կողմէն ժըխտումն իրենց դերի, որպէս քրիստոնեաներու հովանաւոր մեծ պետութիւններու:

Յիշել հայերը, այդ ոչ միայն խղճի ու մարդկայնութեան մի պարագ է մեզ ֆրանսացիներուս և մեր դաշնակից ուսներուն համար, այլ նաև խնդիր է պատուոյ, և այն՝ թերևս աւելի ուսներու, քան մեզի համար. որովհետև Բերլինի դաշնագրի 61<sup>02</sup> յօդուածը, որ արդարութիւն կը խոստանայ հայերուն, ուրիշ բան մը չէ, բայց եթէ կրկնութիւնը Սան-Ստեֆանցի դաշնագրի 16<sup>02</sup> յօդուածի, որ ուսները հարկադրեցին Բարձր Գրան: Յիշեցնելով Ռուսիոյ մեր բարեկամներուն Բերլինի մէջ ընդունուած ընդհանուր յանձնառութիւնները, մենք ուրիշ բան չենք ըներ, բայց եթէ հանգստացնել երկու դաշնակից ժողովուրդներու խիղճը և արդարացնել «Դաշնակցութիւնը» յաջ. քաղաքակրթուած աշխարհին: (ծափահարութիւններ):

Ահաւասիկ օրակարգը, որ մենք ձեզի կ'առաջարկենք.

Չորս հազար, ամեն կարծիքներու պատկանող, ֆրանսական քաղաքացիներ, հաւաքուած փետրուարի 15, 1903 թուին Պարիզ, Շատո դ'Օ-ի թատրոնին մէջ.

Ինկատի առնելով Հայաստանի ու Մակեդոնիայի ազգաբնակչութեան ահռելի վիճակը և անցքերու յարածուն լըջութիւնը.

Նկատելով որ այդ վիճակը մարտակող մ'է՝ ուղղուած հանրային խղճմտանքին և վտանգ մը՝ ընդհանուր խաղաղութեան համար.



Նկատելով որ միևիայն Բերլինի դաշնագրի գործադրութիւնը — Հայաստանի, ինչպէս նաև Մակեդոնիայի մէջ — կարող է վերջ դնել իրերու այդ անտանելի վիճակին.

Նկատելով այն հրամայական պարտաւորութիւնը, որ Բերլինի դաշնագիրը կը դնէ իր կնքողներուն վրայ.

Բաղձանք կը յայտնեն, որ Փրանսական կառավարութիւնը կորովի քայլեր ընէ՝ իրագործել տալու, վերջապէս, Բերլինի դաշնագրի 23րդ և 61րդ յօդուածները, համաձայն 1882 թւի օգոստոսի հիմնական կանոնադրութեան և 1895-ի մայիսի 11-ի մէմորանդումին և դադրեցնելու էղեռնափորձերու շափաղանց երկար շարքը, որոնք կը գործուին Թուրքիոյ մէջ ընդդէմ մարդկայնութեան, առանց լսարութեան յեղի, կրօնի և ազգայնութեան:

Պ. Նախագահ. — Ես քուէի կը դնեմ այդ օրակարգը: Օրակարգը կ'ընդունուի միաձայն:

(Երկարատեւ ծափահարութիւններ):





3527

2013



# ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽՍԿԱՆ ԴԱՇՆԱԿՅՈՒԹԵԱՆ

## ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

	<u>Սանտիմ</u>
1. Ապստամբական ոգի (սպառւած) . . . . .	10
2. Յեղափոխական կեանքից (սպառւած) . . .	5
3. Գաղտնի տպարան (սպառւած) . . . . .	5
4. Գիտական սօցիալիզմ, Ֆ. Էնգելս . . . . .	40
5. Հայ Յեղ. Դաշնակցութեան ծրագիր . . .	—
6. Կուկունեանի խմբի արշաւանքը . . . . .	20
7. Կարնոյ յիշատակին (չորս հատւած) . . . .	50
8. Հ. Յ. Դաշնակցութեան ծրագիր . . . . .	—
9. Քրքիջներ, ( <i>Homo homini lupi</i> ) Վարդգէս, . . .	20
10. Երիտասարդներին, Պ. Կրապօտկին . . . . .	20
11. Ազատութեան ճնարհին. Ղարիբ, Ա. գրքոյկ . . .	30
12. Ազատութեան ճնարհին. „ Բ. „ . . . . .	60
13. Ամբոխային տրամաբանութիւն . . . . .	50
14. Ազատութեան ճնարհին. Ղարիբ, Գ. գրքոյկ . . .	30
15. Հայաստան և Մակեդոնիա . . . . .	50
16. Կովկասեան Վէրքեր, Է. Ակնունի . . . . .	3 Ֆրանկ
Ռուսաստանում . . . . .	1 ռուբլի 50 կօպէկ

Գրքոյկները ստանալու համար դիմել՝

Rédaction du „Droschak“, Genève (Suisse)